

ISSN 2738-277X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՈՒՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԳՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԶԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
1 (16)**

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ՊԱՍ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
2021



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

JAHOOKYAN READINGS

1 (16)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

1 (16)

Yerevan 2021
Ереван 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆ ԱԿԱՆ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

1 (16)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2021

Գլխավոր խմբագիր՝ Կատվայան Վիկտոր
Պատասխանատու քարտուղար՝ Հովհաննիսյան Նազիկ

Խմբագրական խորհուրդ

Գալստյան Աշոտ, Խաչատրյան Գուրգեն, Համբարձումյան Վազգեն, Հովհաննիսյան Լավրենտի, Մեսրոպյան Հայկանուշ, Մխիթարյան Գայանե, Մինոնյան Նեկտար, Դոնապետյան Անահիտ (Ֆրանսիա), Դում-Թրագուտ Յասմին (Ավստրիա), Պլունգյան Վլադիմիր (Ռուսաստան), Սկալա Անդրեա (Իտալիա)

Editor-in-chief - Katvalyan Viktor
Executive secretary – Hovhannisyan Nazik

Editorial Board

Galstyan Ashot, Khachatryan Gurgen, Hambardzumyan Vazgen, Hovhannisyan Lavrenti, Mesropyan Haykanush, Mkhitaryan Gayane, Simonyan Nektar, Donabedian-Demopoulos Anaid (France), Dum-Tragut Jasmine (Austria), Plungian Vladimir (Russia), Scala Andrea (Italy)

Главный редактор – Катвалян Виктор
Ответственный секретарь – Оганесян Назик

Редакционная коллегия

Галстян Ашот, Хачатрян Гурген, Амбарцумян Вазген, Оганесян Лаврентий, Месропян Айкануш, Мхитарян Гаяне, Симонян Нектар, Донабедян-Демопулос Анаид (Франция), Дум-Трагут Ясмин (Австрия), Плунгян Владимир (Россия), Скалла Андреа (Италия)

DOI: 10.54412/2738277X

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԽԱՂՈՂ ԲԱՌՈՎ ԲԱՂԱԴՐՎԱԾ ՎԱՅՐԻ ԲՈՒՑՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ*

DOI: 10.54412/2738277X-2021.1-5

Ամիրխանյան Անժելա

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող.
anjela.nersisyan.1969@mail.ru

Բանալի բառեր. խաղող, երկրագործություն, անվանում, կենդանի, վայրի պտուղներ, կայուն կապակցություններ, արջի խաղող, շան խաղող, գայլի խաղող:

Նախաբան

Հոդվածը վերաբերում է *խաղող* բառով բաղադրված վայրի բույսերի ժողովրդական անվանումների իմաստաբանական ուսումնասիրությանը: Այն հիմնված է 2009, 2010, 2018, 2019, 2021 թթ. ՀՀ շուրջ քսան բնակավայրերում գրանցված դաշտային ազգագրական նյութերի վրա, որոնց համար կիրառվել են խորացված հարցազրույցների մեթոդը: Օգտագործվել են նաև պատմագիտական, ազգագրական, բանագիտական, լեզվաբանական, բուսաբանական, բժշկական և այլ գրավոր աղբյուրներ՝ կիրառելով պատմահամեմատական և վերլուծական մեթոդները:

Բառաքնական դիտարկումներ

Հայկական լեռնաշխարհում երկրագործությունն ունի հազարամյակների պատմություն: Ըստ լեզվաբանական, հնագիտական, ազգագրական, բանահյուսական նյութերի՝ այգեգործությունը

*Հոդվածը ներկայացվել է 10.08.2021, գրախոսվել՝ 12.09.2021:

և մասնավորապես խաղողի մշակությունը հայ ժողովրդի համար ունեցել են քաղաքակրթական նշանակություն, դարձել նրա ինքնության ձևավորման գլխավոր գործոններից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրագործական մշակույթն ազդել է նաև վայրի բույսերի անվանումների վրա, որոնց մի մասը կազմվել է ըստ մշակովի բույսերի նմանության: Դրանց մեջ զգալի թիվ են կազմում ամենից շատ տարածում ունեցող մշակաբույսերը, որոնցից բնիկ հայկական խաղողի որթին առնչվում են բազմաթիվ վայրի բույսերի անվանումներ:

Այն հանգամանքը, որ հայերենում «խաղող» բառով բաղադրված վայրի բույսերի անվանումները այգեգործ հայի աշխարհընկալման ու լեզվամտածողության արգասիք են, հիմնավորվում է նաև այլ էթնիկ զուգահեռներով: Օրինակ՝ ռուսերենում դրանց անունները բաղադրվում են ոչ թե *խաղող*, այլ *ягоды* բառով (медвежья ягода, волчья ягода, бирючи ягоды, пьяная ягода, бешеная ягода, винная ягода, журавлина ягода, собачьи ягоды, сорочьи ягоды)¹: Ինչ վերաբերում է սլավոնական լեզուներում *խաղող* բառով բաղադրված փոքրաթիվ բուսանուններին, ապա դրանք հիմնականում փոխառություններ են հունարենից և լատիներենից²:

Ցածր որակի և վայրի խաղողի անվանումներ. հայերենում որակով աչքի չընկնող մշակովի բույսերի, ինչպես նաև դրանց վայրի տեսակների անունները հաճախ բաղադրվում են կենդանիների անուններով: Բարբառներում վայրի խաղողը կոչվում է կռեկ, ժռախաղող³ և այլն, սակայն դառնահամ և թթու լինելու համար այն անվանել են նաև շան խաղող⁴: Այգեգործները շան խաղող են անվանել

¹ В. Даль, *Толковый словарь*, т. 4, М., 1882, с. 693:

² В. Колосова, «Медвежьи» растения в восточнославянских языках, с. 4, <https://www.academia.edu/11784819/>

³ Թեղիկ, Որթն ու իր բերքը. Այգեբանական և մատենագրական ուսումնասիրություն Թեղիկէ.- *Ամենուն տարեցոյցը*, 20-րդ տարի, Վենետիկ, Ս. Ղազար, 1926, էջ 76:

⁴ Գ. Գեորգեան, *Չնքուշապատում. քննական պատմություն հայոց Չնքուշի (տեղագրական-պատմական-մշակութային-բանահյուսական-ազգագրական)*, հ. 1, Երուսաղեմ, 1970, էջ 367:

նան «իրենց տհասութեան և անշահութեան պատճառաւ՝ որթերուն վրայ ձգուած նիհար ողկոյզներ, այգեկուրքէն վերջ՝ իսկ և իսկ շանց բաժին»⁵:

«Այգի» բառով բաղադրված բուսանուններ. հայերենում ի սկզբանե «այգի» բառը նշանակել է խաղողի այգի և խաղողի որթ, հետագայում՝ ընդհանրապես այգի⁶, իսկ որթին փաթաթվող և դրա պտուղները դառնացնող մակաբույծ բույսը կոչվել է այգու գայլ կամ գայլխոտ⁷:

Ամիրդովլաթ Ամասիացին լոշտակի սև և սպիտակ տեսակներն անվանել է սև այգի և սպիտակ այգի. «...եւ ճղեր ունի, եւ տերեւնի ունի, եւ թելեր ունի որպէս այգի, եւ ամենայն դիմաւք յայգի կու նմանի...»⁸:

Խաղողի որթին նմանեցված վայրի բույսեր. մագլցելու, փաթաթվելու հատկություն ունեցող որոշ վայրի բույսեր նմանեցվել են խաղողի որթին, որին առնչվող ժողովրդական պատկերացումները լոշտակի օրինակով ներկայացնում է Գ. Մրվանձտյանը. «...մացառներու մեջ կարձակե իր ոստերը, որոնք կը բարձրանան և կը պատաստվին փայտերուն և անոնց թանձրախիտ տերևներուն կը խառնեն իրենց լայն տերևները, որոնք ձևով նման են խաղողի որթի տերևի, իրենց ցողունը նման որթի բարունակի և խաղողո ողկույզի ալ շատ նման ողկույզներ ճուրճ ճուրճ կը կախեն. միայն թե ասոր պտուղները մանրիկ են, քան զխաղողն»⁹: Այսպիսի նմանության համար լոշտակը կոչվել է նաև սպիտակ որթատունկ¹⁰:

⁵ Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 83:

⁶ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 48:

⁷ Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց Անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926, էջ 599: Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 63:

⁸ Ամիրդովլաթ Ամասիացի, նշվ. աշխ., էջ 608: Հարկ է նշել, որ «գայլ» բառով կազմված բույսերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վնասակար, ուտեստում չկիրառվող, հաճախ տհաճ հոտով և կամ թունավոր բույսեր են, որոնց կանոնադառնանք առանձին:

⁹ Գ. Մրվանձտյանց, *Երկեր*, հ. 1, Ե., 1978, էջ 43:

¹⁰ Թորոսյան Ա., *Հայաստանի դեղաբույսերը*, Ե., 1983, էջ 98:

Պատմական Հայաստանի գավառներում տոլմա են փաթաթել նաև տատրակի (դդմաճ) տերևներով: Ըստ մեր դաշտային ազգագրական նյութերի, խաղողի տերևներ հիշեցնող այս բույսը կոչվում է նաև թուփ¹¹, դաշտի թուփ¹², երբեմն՝ դուլի թուփ¹³:

Խաղողի պտուղների կամ ողկույզի նմանությամբ կազմված անուններ. ա) Ողկուզաձև դասավորությամբ ծաղիկներով ու մանր պտուղներով բույսերի անունները կազմվում են «խաղող» կամ «ողկույզ» բառերով¹⁴:

Խաղողիկ է կոչվել ինչպես մանրահատ խաղողը, այնպես էլ դրան նման որոշ բույսերի պտուղները¹⁵: Դրանցից ծորը կոչվել է նաև խաղողիկ¹⁶, իսկ մանր ողկուզաձև ծաղիկներով ու պտուղներով ծառը՝ խաղողենի¹⁷:

Ողկուզաձև ծաղիկների համար ոջլախոտը կոչվել է նաև խաղողախոտ¹⁸, իսկ մանր պտուղներով սալորի տեսակը՝ խաղող-սալոր¹⁹: Որոշ բարբառներում խաղողսածառ է կոչվել խաղողի որթը²⁰, ինչպես նաև ողկուզաձև ծաղիկներով ծառը²¹:

Ողկուզաձև ծաղկաբույլերի համար ողկուզագլխների ընտանիքին պատկանող ջոնջուլենին (կռնի) կոչվում է նաև ողկուզենի, նմանատիպ ծաղիկներ ունի նաև ողկուզակը²²: բ) *Խաղող* բառով և

¹¹ **Ա. Ամիրխանյան**, *Դաշտային ազգագրական նյութեր* (այսուհետև՝ ԴԱՆ), Սյունիքի մարզ, Մուծք, 2021:

¹² ԴԱՆ, Սյունիքի մարզ, Անգեղակոթ, 2021:

¹³ ԴԱՆ, Սյունիքի մարզ, Շաղաթ, Սառնակունք, 2018:

¹⁴ **Սո.Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 555:

¹⁵ **Գ. Աւետիքեան**, **Խ. Մխրամլեան**, **Մ. Աւգերեան**, *Նոր բարգիռք Հայկազեան լեզուի*, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 916: **Սո. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 2, Ե., 1944, էջ 234:

¹⁶ **Թեղիկ**, նշվ. աշխ., էջ 74, 90:

¹⁷ **Սո. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 2, Ե., 1944, էջ 234:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Հ. Աճառեան**, Գաւառական բառարան. – *Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 448:

²⁰ Նույն տեղում:

²¹ **Սո. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 234:

²² *Հայաստանի բնաշխարհի հանրագիտարան*, Ե., 2006, էջ 307:

որևէ կենդանու անունով բաղադրված անուններ, որոնց մեջ կենդանին բույսի վայրի և կեղծ խաղող լինելու ցուցիչ է:

Այս բույսերի համար Թեոդիկը գրում է. «...խաղողով բարդուած ամէն բառ որթաբերք չէ... ժողովրդեան ծանօթ անասուններ, թռչուններ և այլ իրենց կազմին զանազան մասերուն առերեսոյթ նմանութեամբ, կամ, նկարագրին հետ աղերսակի, այլ և այլ բուսոց պտուղներու անուններ երեւան բերած են. ուրիշ խօսքով՝ ռամիկը հեգնութիւն խառնած է գործին մէջ, ինչ ինչ վայրի թուփեր ու միրգեր մկրտելու առթիւ: Եւ այս՝ ամէն լեզուի յատուկ: -Այսպէս, խաղողին իբր յատկացուցիչ գործածուած են սա բառերուն սեռականները, երբեմն ալ ֆրանսերէնէ փոխառաբար. -շուն, կատու, էջ, աղուէս, արջ, գայլ... և այլն, որոնք Որթին Պտուղին հետ ոչ մէկ կապ ունին, և կարծես ստուեր կածեն անոր համբաւին վրայ»²³:

Շան խաղող կոչվող վայրի պտուղները մեծ մասամբ թունավոր են, որոնցից են մորմը²⁴ և նրան ցեղակից այլ բույսեր²⁵: Այդ իսկ պատճառով Կ. Գաբիկյանը մորմագգիններն անվանում է շնխաղողագգիններ²⁶: Շան խաղող (շանհավող) է կոչվում նաև կարմիր և անհամ պտուղներով²⁷ թուփը, ինչպես նաև պտղակալած ծնեբեկը կլոր և մանր կարմիր պտուղների (շան հաղող) համար²⁸:

Կատվի խաղող (կատվախաղող) անունով ևս գոյություն ունեն մի շարք բույսեր²⁹, որոնցից մեկն ունի սև, տհաճ հոտով մանր

²³ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 91-92:

²⁴ Ամիրդովլաթ Ամասիացի, նշվ. աշխ., էջ 435:

²⁵ Նշվ. աշխ., էջ 391: Խ. Վարդանեան, Ժողովրդական բառեր.-Արևելեան մամուլ, 20-րդ տարի, թիվ 3, Ջմիւռնիա, 1896, էջ 95:

²⁶ Կ. Գաբիկեան, Հայ բուսաշխարհի, Երուսաղեմ, 1968, էջ 175:

²⁷ Գ. Տեր Վարդանեան, Երզնկա-Կամախա գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր, Երուսաղեմ, 1968, էջ 262: ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Ափնա, 2019:

²⁸ Քենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ, ԱՀ, Չորրորդ տարի, Ե գիրք, թիվ 1, Թիֆլիս, 1899, էջ 21:

²⁹ Օ. Զարգայան, Փերիայի ազգագրությունը, ՀԱԻ ԱԲԱ, Գործ 16, 1987, էջ 71:

Լ. Մինասեան, Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Ջուղա, 1998, էջ 293: ԴԱՆ, Սյունիքի մարզ, Սառնակունք, 2021:

պտուղներ³⁰, իսկ մյուսը խոտաբույս է, որի ցողունին կպած են մանր, կարմիր և քաղցրահամ գնդիկներ³¹:

Էշի խաղող (իշախավող, իշու հաղող³²) կոչվող բույսերից է նաև հաղարջը³³: Ղի հավող է կոչվում կարմիր ուտելի պտուղներով խոտաբույսը³⁴:

Մինչև 1960-ական թթ. հատապտուղները ձեռք են բերվել հավաքչությամբ: Դրանցից է նաև հաղարջը, որը մանր պտուղների համար նմանեցվել է խաղողի, ուստի անվանումը կազմվել է «խաղող» և «արջ» բառերի բաղադրությամբ՝ հաղող արջի (հաղարջ)³⁵, որտեղ կենդանու անունն ընդգծում է պտղի ոչ իսկական, խաղողի նմանակ լինելը:

Հաղարջի՝ արջի խաղող անվանումն ունի նաև ժողովրդական ստուգաբանություն, ըստ որի արջերն այն շատ են սիրում³⁶: Հաղարջը լինում է սև և կարմիր, հետևաբար արջի խաղող կարող է նշանակել նաև սև խաղող, քանի որ հայերենում արջ բառն ունի նաև սև, մուգ իմաստներ³⁷:

Հաղարջ են կոչվում «քանի մը թփոց խաղողանման պտուղներ», որոնցից է նաև ծորը³⁸: Արջի խաղող է կոչվում նաև վայրի խաղողը³⁹, ինչպես նաև գերիմաստու պտուղները⁴⁰:

³⁰ ԴԱՆ, Վայոց ձոր, Քարագլուխ, 2019:

³¹ ԴԱՆ, Վայոց ձոր, Խաչիկ, 2019, Հորս, Աղավնաձոր, 2021:

³² **Ղ. Ալիշան**, *Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն*, Վենետիկ, 1895, էջ 208:
Ա. Հարությունյան, *Տարոնի ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, Գործ 69, էջ 1, 22:

³³ **Յ. Սարգիսեան (Ալեոթ)**, *Բարու (իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը)*, Գահիրե, 1932, էջ 410:

³⁴ ԴԱՆ, Վայոց ձոր, Հորս, 2021:

³⁵ **Ս. Ամատունի**, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 383:

³⁶ Նույն տեղում:

³⁷ **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 334-335:
Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 95: **Գ. Աւետիքեան**, **Խ. Միսրմէլեան**, **Մ. Աւգերեան**, նշվ. աշխ., էջ 374:

³⁸ **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 353:

³⁹ **Գ. Աւետիքեան**, **Խ. Միսրմէլեան**, **Մ. Աւգերեան**, նշվ. աշխ., էջ 374:

⁴⁰ ԴԱՆ, Վայոց ձոր, Գլաձոր, 2019:

Պայմանավորված կենդանու հանդեպ վերաբերմունքով՝ *խաղող* բառով բաղադրված բույսերի անունները կարելի է բաժանել մի քանի խմբի: ա) Մարդու համար սիրելի կամ օգտակար կենդանիների անուններով կազմված հասապտուղների անուններ, որոնք ուտելի են: Դրանցից է կաքավախաղողը (կաքավի խաղող)⁴¹: բ) Ոչ ուտելի կամ թունավոր բույսեր, որոնց անունները բաղադրվում են արհամարհանքի արժանացած կամ մարդու համար վրտանգավոր կենդանիների անուններով: Դրանցից *շուն*, *գայլ*, *օձ* և *խաղող* բառերով կազմված վայրի բույսերը մեծ մասամբ թունավոր են, ինչպես լոշտակը, որ կոչվում է նաև օձի խաղող⁴², սև պտուղներով թունավոր բույս է նաև գալու (գելի) խաղողը⁴³:

Բացառություններից է փոքր գառնադմակիկը, որը կոչվում է նաև գալու (գայլի) խաղող⁴⁴, չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր առմամբ «գառ» և «դմակ» բառերով կազմվում են միայն այն բույսերի անունները, որոնց վերաբերյալ պատկերացումները դրական են: Այս դեպքում գալու խաղող անվանումը թերևս ունի միայն կեղծ խաղողի իմաստ. «...մանր, ազոխի պես կանաչախառն-կարմիր տերեւները թուրթի հատերու պես մի մի խմբուած կը ծածկեն լերկ ժայռերը»⁴⁵: Ուտելի, բայց «գայլ» բառով բաղադրված բույսերից է նաև ծորը, որը որոշ բարբառներում կոչվում է գայլի խաղող⁴⁶:

Համշենում հոնը կոչվել է սատոնի (սատանայի) հավող⁴⁷, որը թերևս կապվում է այն որպես խաղողի նմանակ ընկալելու, ինչպես նաև այն հավատալիքի հետ, որ կայծակի ժամանակ սատանան

⁴¹ Գ. Մրվանձոյանց, նշվ. աշխ., էջ 365: ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Բյուրական, 2019:

⁴² Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 254: ԴԱՆ, Վայոց ձոր, Ջերմուկ, 2019:

⁴³ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 39: ԴԱՆ, Վայոց ձոր, Գլաձոր, 2019:

⁴⁴ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 36, 39:

⁴⁵ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 39:

⁴⁶ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 36:

⁴⁷ Բ. Թողաքյան, *Համշենահայերի ազգագրությունը*, ՀԱԲ, հ. 13, Ե., 1981, էջ 136:

հոնի ծառի տակ է թաքնվում⁴⁸: Գ) Եթե բույսն առնչվում է որևէ կենդանու, ապա այդ դեպքում անունը կազմվում է վերջինիս անունով: Օրինակ՝ աղվեսն ուտում է աղվեսախաղողի՝ հաղարջի նման պտուղները⁴⁹: Փորացավ ունեցող շներն ուտում են մի բույս, որը կոչվում է շան խաղող⁵⁰: Այն վայրի հատապտուղները, որոնք արջերը շատ են սիրում, ստացել են արջի խաղող⁵¹, արջի չամիչ⁵², արջի կեր⁵³ (արջախորակ⁵⁴) անվանումներ:

Բույսի աճելու վայրով պայմանավորված անուններ. հայերենում մերի (մերի, մայրի, մարի) բառը նշանակում է անտառ, ծառ⁵⁵, ուստի որոշ վայրի պտուղների մերհավող⁵⁶ անվանումը նշանակում է անտառում, հանդում աճող, այսինքն վայրի կամ կեղծ խաղող: Մերհավող է կոչվել նաև հաղարջը⁵⁷:

Մոշի թուփը որթի նման մագլցելու հատկություն չունի, սակայն պտուղը խաղողին նմանեցնելու պատճառով կոչվել է նաև տափ հաղող⁵⁸: Փոքր գառնադմակիկն աճում է ավազուտներում (բուտերում), դրա համար էլ կոչվում է փ(բ)ռան խաղող⁵⁹: Ցածր, սև, քաղցր և հաղարջի նման մանր պտուղներով թուփը կոչվում է սարի կամ վայրի խաղող⁶⁰:

⁴⁸ Յ. Մուրադեան, *Համշենցի հայեր*, ԱՀ, Հինգերորդ տարի, Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 118:

⁴⁹ ԴԱՆ, Վայոց ձոր, Ջերմուկ, 2019:

⁵⁰ Թեղիկ, նշվ. աշխ., էջ 83:

⁵¹ ԴԱՆ, Վայոց ձոր, Գլաձոր, Ռինդ, 2019:

⁵² ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Ափնա, 2019:

⁵³ ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Բյուրական, 2019:

⁵⁴ ԴԱՆ, Վայոց ձոր, Աղավնաձոր, Հորս, 2021:

⁵⁵ Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*, Ե., 1987, էջ 33: Հ. Աճառեան, *Հայերեն գաղափարական բառարան*, էջ 772: Մո. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 3, էջ 317:

⁵⁶ Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 772:

⁵⁷ Բ. Թողաքյան, նշվ. աշխ., էջ 136:

⁵⁸ Հ. Հովակիմյան, *Գողթն գավառի Բիստ գյուղի ազգագրություն*, ՀԱԻ, ԱԲԱ, գործ 71, էջ 13:

⁵⁹ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 244:

⁶⁰ ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Նիգավան, 2019:

Միջերևիկ շփումներով պայմանավորված անուններ. դաշտային Արցախում հաղարջը կոչվել է ռեսեթի (ռուսի) խաղող⁶¹, իսկ արևմտահայ միջավայրում՝ փրանկ խաղող⁶² կամ ֆրենկ իգյումի (ֆրանկի չամիչ)⁶³:

«Չամիչ» բառով բաղադրված անուններ. որոշ վայրի հատապտուղներ չամիչի նմանեցվելով կոչվել են արջի չամիչ: Երբեմն արջի խաղող կոչվող պտուղները, թփին չորանալուց հետո, ևս կոչվում են արջի չամիչ⁶⁴: Դրանց մեջ կան ուտելի և թունավոր բույսեր:

Ծվաղի կլոր և մսալի պտուղները դասավորությամբ նման են սև խաղողի ողկույզին: Ծվաղից չիր են պատրաստել, ուստի այն կոչվել է նաև չամչարակ⁶⁵: Ծիմելը (կարմրաբանջար) կոչվել է նաև ագռավի չամիչ⁶⁶, գերիմաստու մանր պտուղները՝ արջի չամիչ⁶⁷: Չամիչի նման ուտելի պտուղներով բույս է նաև կատվի չամիչը⁶⁸, որը կոչվում նաև կատվի խաղողը⁶⁹:

Եզրակացություն

Խաղողի որթը Հայկական լեռնաշխարհում ամենից տարածված և հնագույն մշակաբույսերից է, որին նմանեցվելով մի շարք վայրի բույսերի անուններ կազմվել են *ողկույզ, որթ, խաղող բառերով*: Այդ անվանումների մեծ մասը՝ շան խաղող, էջի խաղող, արջի խաղող, գայլի խաղող, աղվեսի խաղող, արջի չամիչ, կայուն

⁶¹ Ն. Ղազարյան, *Գարդման-Փառիսոս*, ՀԱԻ ԱԲԱ, 5/116, էջ 56:

⁶² Թեղիկ, նշվ. աշխ., էջ 92:

⁶³ Ն. Բյուզանդացի, *Քննադատություն Հայքուսակի*, Վիեննա, 1925, էջ 143: Ի.Հ. Մանուէլ *Քաջունի*, *Բառգիրք արուեստից և գեղեցիկ դպրութեան*, հ. 1, Վենետիկ, 1891, էջ 974: Թեղիկ, նշվ. աշխ., էջ 92:

⁶⁴ ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Ափնա, Ապարան, 2019:

⁶⁵ Գ. Գալուստեան, *Բոյսեր, որ դեղ են*, Հայ բոյժ, 12-րդ տարի, թիվ 141-142, սեպտեմբեր-հոկտեմբեր, Փարիզ, 1952, էջ 148: Կ. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 102:

⁶⁶ Ռ. Ղազարյան, *Բուսանունների հայերեն-լատիներեն, ռուսերեն-անգլերեն, ֆրանսերեն-գերմաներեն բառարան*, Ե., 1981, էջ 43:

⁶⁷ ԴԱՆ, Կոտայքի մարզ, Բուժական, 2021:

⁶⁸ ԴԱՆ, Լոռու մարզ, Արևաշող, 2009:

⁶⁹ ԴԱՆ, Սյունիքի մարզ, Անգեղակոթ, 2021:

կապակցություններ են: Ազգագրական նյութերում երբեմն հիշատակվում է միայն անվանումը, և հնարավոր չէ հստակորեն պարզել, թե խոսքը որ բույսի մասին է, սակայն ակնհայտ է, որ խաղողին նմանեցնելու և միննույն ժամանակ տարբերելու համար դրանց անունները բաղադրվել են *խաղող* բառով և որևէ կենդանու (որպես նմանակ, կեղծ խաղող լինելու ցուցիչ) անունով:

Օգտագործված գրականություն

Ալիշան Ղ., Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն, Վենետիկ-Ս. Ղազար, 1895:

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 1, Ե., 1926:

Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան // Էմիլեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց:

Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, տպ. Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի:

Ամիրտովլաթի Ամասիացւոյ Անգիտաց Անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Մխիթարեան տպ., Վիեննա, 1926:

Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Ս., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, տպ. Սրբոյն Ղազարու, 1836:

Բենսէ, Բուլանըլի կամ Հարք գաւառ, ԱՀ, Չորրորդ տարի, Ե գիրք, թիվ 1, տպ. Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1899:

Բիւզանդացի Ն., Քննադատութիւն Հայբուսակի, Վիեննա, 1925:

Գաբիկեան Կ., Հայ բուսաշխարհ, Երուսաղեմ, 1968:

Գալուստեան Գ., Բոյսեր, որ դեղ են, Հայ բոյժ, 12-րդ տարի, թիվ 141-142, սեպտեմբեր-հոկտեմբեր, խմբ. Շ. Նարդունի, Փարիզ, 1952:

Զարգարյան Ծ., Փերիայի ազգագրությունը, ՀԱԻ ԱԲԱ, Գործ 16, 1987:

Թէոդիկ, Որթն ու իր բերքը. Այգեբանական և մատենագրական ուսումնասիրութիւն Թէոդիկէ // Ամէնուն տարեցոյցը, 20-րդ տարի, տպ. Մխիթարեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1926, էջ 24-168:

- Թոռլաքյան Բ., Համշենահայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ. 13, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1981:
- Թորոսյան Ա., Հայաստանի դեղաբույսերը, «Հայաստան», Ե., 1983:
Հայաստանի բնաշխարհ. հանրագիտարան, գլխ. խմբ. Ն. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Ե., 2006:
- Հովակիմյան Հ., Գողթն գավառի Բիստ գյուղի ազգագրություն, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 71:
- Ղազարյան Ռ.Ս., Բուսանունների հայերեն-լատիներերն, ռուսերեն-անգլերերն, ֆրանսերեն-գերմաներերն բառարան, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1981:
- Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Հայկական ՄՍՌ պետական հրատ., Ե., 1944:
- Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Հայկական ՄՍՌ պետական հրատ., Ե., 1945:
- Հարությունյան Ա., Տարոնի ազգագրական նյութեր, ՀԱԻ ԱԲԱ, Գործ N 69:
- Մինասեան Լ., Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), տպ. Սր. Ամենափրկիչ վանքի, Նոր Ջուղա, 1998:
- Մուրադեան Յ., Համշենցի հայեր, ԱՀ, հինգերորդ տարի, Զ գիրք, տպ. Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1900:
- Նազարյան Ն., Գարդման-Փառիսոս, ՀԱԻ ԱԲԱ, Գործ 5/116:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ» հրատ., Ե., 2010:
- Սարգիսեան Յ. (Ալեոբ), Բալու (իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը), 1932, Գահիրէ:
- Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1978:
- Վարդանեան Խ., Ժողովրդական բառեր.- *Արեւելեան մամուլ*, 20-րդ տարի, թիվ 3, խմբագիր-տնօրէն Մ. Մամուրեան, Ջմիւռնիա, 1896:
- Տէր Վարդանեան Գ., Երզնկա-Կամախ գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր, տպ. Սրբոց-Յակոբեանց, Երուսաղէմ, 1968:

Փալլսոոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987:

Даль В., Толковый словарь, т. 4, изд. Художественная литература, М., 1882:

Колосова В., «Медвежи» растения в восточнославянских языках, с. 4, <https://www.academia.edu/11784819/>

Amirkhanyan Anzhela - The names of wild herbs composed by the word *khaghogh* (grape). - The fact that Armenia is a country with ancient agricultural culture had its influence on the names of wild herbs; a great number of the names of wild herbs was composed based on the similarity with cultivated plants. The grapevine stands out among them, and a number of new names of wild herbs were compiled by the words ‘voghku’jz’ and ‘vort’ (bunch and cluster). Based on the resemblance with the berries of grapes, and at the same time to distinguish them from real ones, a number of plant names were formed with the word "grape" and the name of the animal (which is just an indication of being a fake grape). Among them such names as bear's grape, dog's grape, wolf's grape, cat's grape are considered to be set expressions.

Keywords: grapes, agriculture, name, animal, wild berries, set expressions, bear's grape, dog's grape, wolf's grape.

Amirkhanyan Anzhela, Institute of Archaeology and Ethnography of National Academy of Sciences of Armenia. Junior Researcher. anjela.nersisyan.1969@mail.ru

Амирханян Анжела - Названия дикорастущих растений составленных словом *виноград*. - То обстоятельство, что Армения - страна с древнейшей земледельческой культурой, оказало влияние и на названия дикорастущих растений, наименования которых были составлены путем их внешнего уподобления с культивируемыми растениями. Среди таких наименований выделяется *виноград*, по аналогии с которым составлялись названия ряда дикорастущих растений. С одной стороны, эти плоды походят на виноград, а с другой, чтобы отличить их от настоящих, большое количество наименований растений было составлено словами *виноград* и названия какого-либо

животного (что является лишь имитацией, показателем ложного винограда). Среди них такие названия как медвежий виноград, собачий виноград, волчий виноград, кошачий виноград-являются устойчивыми сочетаниями.

Ключевые слова: виноград, земледелие, название, животные, дикие плоды, устойчивые сочетания, медвежий виноград, собачий виноград, волчий виноград.

Амирханян Анжела, Институт Археологии и этнографии НАН РА,
младший научный сотрудник. anjela.nersisyan.1969@mail.ru

**ՇՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ***

DOI: 10.54412/2738277X-2021.1-18

Թորոսյան Հռիփսիմե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող. hrispimehtorosyan@yahoo.com

Բանալի բառեր. դարձվածային միավոր, իմաստային առանձնահատկություն, կառուցվածքային առանձնահատկություն, փոխաբերական իմաստ, դարձվածային համարժեքներ, դարձվածային համապատասխանություններ:

Նախաբան

Հռոժվածի նպատակն է արդի հայերենի և պարսկերենի՝ *շուն* բաղադրիչով դարձվածային միավորների իմաստային և կառուցվածքային յուրահատկությունների բացահայտումը՝ նկարագրական, զուգադրական և համեմատական մեթոդների միջոցով: Զուգադրվող լեզուների տարբեր դարձվածաբանական բառարանների լեզվական նյութի հիման վրա ներկայացվում են *շուն* բաղադրիչով կազմված անվանական և հաղորդակցական կապակցությունները, դրանց ձևավորման կաղապարները, դարձվածային համարժեքներն ու համապատասխանությունները¹:

* Ներկայացվել է 28.07.2021, գրախոսվել՝ 20.08.2021:

¹ Պ. Բեդիրյան, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Ե., 2011, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1976, Г. Голева, *Фарси-русский фразеологический словарь*, М., 2006, H. Anvāri, *Farhang-e kenāyāt-e soxan*, jeld-e 2, Tehrān, 1383, A. Najafi, *Farhang-e fārsi-ye ā'miāne*, Tehrān 1378 բառարաններից դուրս են գրվել *շուն* բաղադրիչով 150 դարձվածային միավոր հայերենում, պարսկերենում՝ 16 և համարժեք 32 դարձվածային միավոր:

Դարձվածային միավորների բովանդակային պլանում դարձվածային ընդհանուր իմաստը ձևավորվում է գերադաս բաղադրիչով, որը մտնում է դարձվածային միավորի կազմի մեջ: Այդպիսի բաղադրիչներից են մարդու և կենդանու մարմնի մասերի անվանումները, բուսանունները, կենդանունները և այլն²:

Հայերենի և պարսկերենի կենդանիների անուններով կազմված դարձվածային միավորների մեջ մեծաքանակ են *շուն* բաղադրիչով դարձվածքները: Հայերենում այս դարձվածային միավորները, այնուամենայնիվ, քանակապես գերակշռում են: Պարսկերենում այս դարձվածային միավորների ոչ այնքան տարածվածության պատճառն ամենայն հավանականությամբ իրանցիների շան մասին կրոնահավատալիքային պատկերացումներն են: Իսլամում շունը «հարամ» է համարվում, մինչդեռ մինչիսլամական՝ զրադաշտական հավատալիքում՝ սրբազան³:

Դարձվածային միավորների քննություն

Հայերենում *շուն* բառը բացի բառային իմաստից ունի նաև փոխաբերական իմաստները, որոնք բնութագրում են անձին. 1. «անհամակրելի, հարզանք ու վստահություն չառաջացնող մարդ, 2. խորամանկ հնարամիտ մարդ, 3. անառակ, շնացող մարդ, 4. անարգ, չարագործ մարդ. 5. (ծծկլ.) լրտես»⁴: Պարսկերենում *շուն*-ը փոխաբերաբար նշանակում է «ստոր, ցածր, ճղճիմ մարդ», ինչպես նաև զուգորդվում է վատին, աղքատությանը և չարքաշ կյանքին⁵: Հետաքրքրական է, որ շանը բնորոշ դրական հատկանիշները՝

² Պ. Բեդիրյան, *Ճամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1978, էջ 89-92:

³ M. Omidshar and T. P. Omidshar, Mary Boyce, J-P. Digard, *Dog, DOG – Encyclopaedia Iranica (iranicaonline.org)*. E. Дорощенко, *Зороастрийцы в Иране*, М., 1982, էջ 56:

⁴ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 1124-1125:

⁵ H. Anvāri, *Farhang-e kenāyāt-e soxan*, jeld-e 2, Tehrān, 1383, էջ 951. A. Najafi, *Farhang-e fārsi-ye ā'miāne*, Tehrān, 1378, էջ 914:

նվիրվածությունը, հավատարմությունը, ազնվությունը, չեն ամրագրվել փոխաբերական իմաստների մեջ:

Շուն բաղադրիչով դարձվածային միավորները գործառապես լինում են անվանողական և հաղորդակցական: Վերջիններս քանակապես զիջում են անվանողականներին:

1. Անվանողական դարձվածային միավորները վերաիմաստավորված բնութագրում են առարկա, երևույթ, քերականորեն օժտված են որևէ խոսքի մասին բնորոշ հատկանիշներով: Այս կարգի դարձվածային միավորները նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ: Ըստ խոսքիմասային արժեքների՝ դրանք լինում են անվանական՝ գոյականական, ածականական, մակբայական և բայական:

Ա. *Անվանական* (գոյականական, ածականական, մակբայական) դարձվածային միավորները հիմնականում երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ քառաբաղադրիչ կառուցատիպերով են:

Երկբաղադրիչները կազմվում են հետևյալ կաղապարներով.

Հայ. Գոյական+գոյական. շան հոտ - անդուրեկան՝ անախորժ հոտ, գարշահոտություն, *շան հավատարմություն*-կույր՝ ծայրահեղ նվիրվածություն (իբրև բացասական երևույթ),

գոյական+դերբայ (ենթակայական). շուն խաղացնող (արհ.)- խեղկատակ, ծաղրածու, *շուն բռնող*-անպետք մարդ, ոչնչություն:

Պարսկերենում *շուն* բաղադրիչով երկբաղադրիչ դարձվածային միավորները ձևավորվում են *գոյական+գոյական* կամ *գոյական+ածական* կաղապարներով, օրինակ՝

sag-e Nāziābād սյնդերես լկտի (բոց. Նազիաբադի շուն)	سگ نازی آباد
mesl-e sag-e hār ջղային, կատաղած (բոց. կատաղի շուն)	سگ هار

Եռաբաղադրիչները լինում են հետևյալ կառույցներով.

ա) *գոյական+գոյական+գոյական* - ճակատը *շան կաշի* - 1. ա-

ներես, պնդաճակատ 2. անամոթ, անպատկառ, շան մսի գին – չափազանց էժան.

բ) գոյական+գոյական+դերբայ (հարակատար կամ ենթակայական) – շան ծիծ կերած – շան ծնունդ, շան որդի, շան բերանից ընկած // ~քաշած – խիստ տրորված՝ ճմռված, պատառոտված շուրեր:

Քառաբաղադրիչ անվանական դարձվածային միավորները հայերենում սակավաթիվ են: Առանձնացվել է մեկ դարձվածային միավոր, որն ունի հետևյալ կաղապարը՝ թվական + գոյական+ դերբայ+ գոյական – յոթ(ը) դռան հաշող շուն – 1. Հարմարվող, համակերպվող, անսկզբունքային մարդ, 2. Լուրեր՝ խոսք տանող-բերող:

Պարսկերենում եռաբաղադրիչ անվանողական կառույցները հիմնականում համեմատություն դարձվածային միավորներ են՝ ձևավորված mesl-e sag կապական կառույցով և տարբեր խոսքի մասերով.

Mesl-e sag+ածական

mesl-e sag-e hasan-dale քիթն ուրիշի գործերի մեջ խոթող մարդ (բոց. թափառական շուն)	مثل سگ حسن دله
mesl-e sag-e hār ջղային, կատաղած (բոց. կատաղի շան նման)	مثل سگ هار
mesl-e sag-e harze-maraz կույիտ, անտաշ մարդ (բոց. Թափառական, անտուն շան նման)	مثل سگ هرزه مرض

mesl-e sag+շաղկապ+գոյական

mesl-e sag o darviš անհաշտ մարդիկ (բոց. շան ու դերվիշի նման)	مثل سگ و درویش
---	----------------

Քառաբաղադրիչ կառույցները նույնպես համեմատություն- դարձվածային միավորներն են *mesl-e sag+գոյական+անցյալ դերբայ* կառուցատիպով, հմմտ.

<p>mesl-e sag-e pā- suخته աննպատակ դրնեդուռ ընկնող, թափառող մարդ (բոց. ոտքն այրած շան նման)</p>	<p>مثل سگ پا سوخته</p>
<p>mesl-e sag-e tātule –xorde անհանգիստ (բոց. ապտակ կերած շան նման)</p>	<p>مثل سگ تاتوله خورده</p>

Բ. *Բայական դարձվածային միավորները* անվանողական դարձվածքներ են՝ երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ քառաբաղադրիչ կառուցատիպերով, որոնց հարացուցային ձևերը կատարում են հաղորդակցական գործառույթ:

ա) Երկբաղադրիչ բայական դարձվածային միավորները բաղկացած են անվանական և բայական բաղադրիչներից: Անվանական բաղադրիչը միշտ արտահայտված է լինում *շուն* գոյականով, բայական բաղադրիչը՝ համադրական բայով: Հայ. *շուն հաչեցնել* (գոհկբ.) – առիթ տալ չարախոսելու, իզուր տեղը վրան խոսք բերել, *շուն թրջել* (բրբ.) – խենթի տեղ դնել, *շուն աղալ* – սուտ խոսել, *շուն կտրել* – կատաղել, *շուն խուզել* – աչքածակ լինել: Պրսկ.

<p>sag-koš kardan խայտառակ՝ չարաչար մահով սպանել (բոց. շան պես՝ նման սատկացնել)</p>	<p>سگ کوش کردن</p>
<p>sagi kardan կատաղեցել, սաստիկ բարկացնել, զայրացնել (բոց. շուն դարձնել (գոհկբ.))</p>	<p>سگی کردن</p>

բ) Եռաբաղադրիչ դարձվածային միավորներում անվանական բաղադրիչը թեք կամ ուղղական հոլովով է, օրինակ՝ հայ. *շան հոտատություն ունենալ* – հեշտությամբ կարողանալ կռահել, ճանաչել, գտնել մի բան, *շուն կերած (կուլ տված) լինել* – փորձված,

ճարպիկ լինել, *շան բախտ ունենալ* – հաջողակ լինել, բախտը բերել:

զ)Քառաբաղադրիչ դարձվածային միավորներն ունեն տարբեր կառուցատիպեր, որոնցում նույնպես անվանական բաղադրիչը ուղիղ կամ թեք հոլովով է. հայ. *մեկին իր շունը շինել* – իրեն ամուր կապել, իր կամքին ենթարկել, *շան պես պոչ պտտեցնել* – քծնել, շողոքորթել մի բանի ակնկալությամբ, *շան մածուն (միս) կերցնել* – նեղել, չարչարել, տանջահար անել, *շները լվանալ՝ գլխին լցնել* – ամոթահար անել, ցեխը կոխել հանել, *շան քթից (բերանից, պնչից) ջուր խսել* – աշխատել, արյուն-քրտինք թափել (մի բան հայթայթելու համար):

Պարսկերենում գերակշռում են բազմաբաղադրիչ կառույցները, որոնք գլխավորապես համեմատություն դարձվածային միավորներն են՝ կազմված *mesl-e sag* կապական կառույցով: Այս կապակցությունների բայական բաղադրիչը հիմնականում հարադիր բայ է: Օրինակ՝

mesl-e sag zuze kešidan ցավից տանջվել, լացել (բոց. շան պես ոռնալ)	مثل سگ زوزه کشیدن
mesl-e sag vāq vāq kardan չարախոսել (բոց. շան պես հաչել)	مثل سگ واق واق کردن
mesl-e sag mus mus kardan շողոքորթել, հաճոյախոսել (բոց. շան պես շողոքորթել)	مثل سگ موس موس کردن
mesl-e sag pāšne-ye hame rā gereftan բոլորի մեջ թշնամի տեսնել (բոց. շան նման բոլորի ոտքը բռնել)	مثل سگ پاشنه همه را گرفتن

2. *Շուն* բաղադրիչով կազմված **հաղորդակցական դարձվածային միավորներն** ունեն նախադասությանը բնորոշ հատկանիշներ՝ ստորոգում, հնչերանգային ավարտվածություն, շարադասություն: Հայ. *Շուն՝ նր չի դիմանա՝ չի տանի* (անտանելի է): *Շունը ձեռից հաց չի առնի՝ չի վերցնի (չի ուտի)* (1. Շատ խեղճ, խեղճացած

2. Սպառնական արտ. է (շան օրը կգցեմ՝ կգցի ...): *Շունը գլխին լափ է ուտում* (խիստ զբաղված է): Պրակ.

مثل سگ هفت جان دارد.
Mesl-e sag haft jän dārad շատ աշխույժ (ըստ իրանցիների հավատալիքների՝ շունը յոթ հոգի ունի) (բոց. Շան նման յոթ հոգի ունի)
هفت (یا: صد) تا سگ صورتش را بلیسد سیر می شود!
Haft (yā sad) tā sag surat-aš rā be-lisad sir mi-šavad! Շատ կեղտոտ մարդ (բոց. Յոթ (կամ հարյուր) շուն դեմքը լիզեն, կկշտանան:)
چشمش سگ دارد.
Čašm-aš sag dārad. Գրավիչ հայացք ունի: (բոց. Աչքը շուն ունի)

Հայերենի և պարսկերենի՝ *շուն* բաղադրիչով կազմված դարձվածային միավորները դասակարգվում են նաև իմաստային համարժեքության տեսանկյունից՝ առանձնացնելով **դարձվածային համարժեքները** և **դարձվածային համապատասխանությունները**: Զուգադրվող լեզուներում այս միավորների առկայությունը վկայում է հայերի և իրանցիների լեզվամտածողության ընդհանրությունների, ինչպես նաև յուրահասկությունների ու տարբերությունների մասին:

Ա. Դարձվածային համարժեքներ. սրանք կան և՛ հայերենում, և՛ պարսկերենում: Երկու լեզվում էլ այս կապակցություններն ունեն նույն իմաստն ու նշանակությունը: Օրինակ՝

շան բերան - լկտիաբար հայիոյոյ, չարաբանոյ	سگ دهن
	sag-dahan
շան թուլա, լակոտ	توله سگ
	tule-sag

շուն ու կատվի պես	مثل سگ و گربه
	mesl-e sag o gorbe
շան տեղ դնել (չդնել) - ոչ մի	محل سگ به کسی گذاشتن (نگذاشتن)

նշանակություն, արժեք չտալ, արհամարհել	mahal-e sag be kasi gozāštan (nagozāštan)
---------------------------------------	--

Բ. Դարձվածային համապատասխանություններ. Ա. Կունինը դարձվածային համապատասխանությունները համարում է այն կայուն կապակցությունները, որոնք իմաստով նույնական են գուգադրվող լեզուներում, սակայն ձևով մասամբ կամ ամբողջությամբ տարբերվում են⁶: Այս կապակցությունները արտահայտվում են միայն տվյալ լեզվին բնորոշ հասկացություններով և կառուցատիպերով: Դարձվածային համապատասխանությունները համեմատվող լեզուներում արտահայտվում են տարբեր բառերով և քերականական ձևերով:

Հայ.	Պրսկ.
շան բաժին դարձնել – նույնն է՝ շուն ու գելի բաժին դարձնել	سگ خور کردن sag-xor kardan
շան պես քարշ գալ - շատ քայլելով սաստիկ չարչարվել, տանջվել	سگ دو زدن ، سگ دوی کردن sag-do zadan, sag-davi kardan
Շան առաջ գցես՝ չի ուտի – ուտելու բան չէ	[اگر] پیش سگ بیندازند (بیندازی) بو نمی کند. [agar] piš-e sag bi-andāzand (bi-andāzi) bu nemi-konad.

Եզրակացություն

Հայերենի և պարսկերենի՝ շուն բաղադրիչով կազմված դարձվածային միավորները կառուցվածքային տեսանկյունից անվանողական (երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ) կամ հարորդակցական դարձվածքներ են, որոնք արտահայտում են ինչպես անձի, այնպես էլ առարկայի հատկանիշներ: Իմաստային համարժեքության տեսանկյունից գուգադրվող լեզուներում այս

⁶ А. Кузин, О фразеологической дефиниции. - *Вопросы английской фразеологии (коммуникативный и фразеологический аспекты)*: сб. науч. трудов, М., 1987, էջ110:

դարձվածային միավորներն ունեն համարժեքներ և համապատասխանություններ:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե. 1976.

Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, «Լույս», Ե. 1978:

Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ, Ե., 2011:

Սուրիապյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՊՀ հրատ., Ե. 1976:

Голева Г., Фарси-русский фразеологический словарь, “Муравей“, М., 2006.

Е. Дорошенко, Зороастрийцы в Иране, “Наука“, М., 1982.

Кунин А., О фразеологической дефиниции // Вопросы английской фразеологии (коммуникативный и фразеологический аспекты): сб. науч. Трудов, Высш. шк., М., 1987.

Anvāri H., Farhang-e kenāyāt-e soxan, jeld-e 2, Soxan, Tehrān 1383.

Najafi A., Farhang-e fārsi-ye ā'miāne, Enteshārāt-e nilufar, Tehrān 1378.

Omidstalar M. and Omidstalar T. P., Boyce M., Digard J-P., Dog, DOG – Encyclopaedia Iranica (iranicaonline.org).

Torosyan Hripsime - Structural-semantic peculiarities of phraseological units with component *dog* in Armenian and Persian languages. - The article discusses phraseological units with component *dog* in Armenian and Persian languages. From the structural point of view these units are nominative (two-component, three component, four-component) or communicative phraseologisms which express person's or subject's quality. From the point of view of semantic equivalency these units have equivalents and analogues.

Key words: Armenian language, Persian language, phraseological unit, semantic peculiarity, structural peculiarity, metaphorical meaning, phrase-equivalents, phrase-analogues.

Torosyan Hripsime – Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Junior Researcher.
hrispimehtorosyan@yahoo.com

Торосян Рипсима - Структурно-семантические особенности фразеологических единиц с компонентом *собака* в армянском и персидском языках. - В статье представлены фразеологические единицы с компонентом *собака* в армянском и персидском языках. С точки зрения структуры эти сочетания номинативные (двухкомпонентные, трехкомпонентные, четырехкомпонентные) или коммуникативные фразеологизмы, которые выражают признаки личности и предметов. По аспекту семантической эквивалентности эти фразеологизмы имеют эквиваленты и аналоги.

Ключевые слова: армянский язык, персидский язык, фразеологическая единица, семантическая особенность, структурная особенность, переносное значение, фразеологизмы-эквиваленты, фразеологические аналоги.

Torosyan Hripsime –Институт языка имени Р. Ачаряна НАН РА, младший научный сотрудник. hrispimehtorosyan@yahoo.com

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՈՒՆ + ՄԻԱՊԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ -
ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՄ
ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

DOI: 10.54412/2738277X-2021.1-28

Խաչատրյան Գուրգեն

բանասիրական գիտությունների դոկտոր
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան. gxachatryan@yahoo.com

Բանալի բառեր. միջին հայերեն, միադիմի միակազմ նախադասություն, եղանակավորիչ բառ, միադիմի բայաձև, անորոշ դերբայ, շարադասություն:

Նախաբան

Բայական միադիմի միակազմ է համարվում այն նախադասությունը, որի գերադաս անդամն արտահայտվում է կա՛մ դիմասահմանափակ բայի միադիմի ձևով, կա՛մ էլ անդիմասահմանափակ բայի եզակի թվի 3-րդ դեմքով (երբեմն՝ վերջինիս մասնակցությամբ), որը գործածվում է որպես միադիմի բայաձև¹: Օրինակ՝ Չեղեզն ես ի ձեռո՞ւ առեր, Հանե՛՛ զինքն, ի դուրս ձգէ, *Չլինի* որ ձեռքդ խայթէ (630)²: Հունան ասէ, թէ զվոքք տղաքն ի ձմռան ատուրքն ի

* Ներկայացվել է 20.07.2021, գրախոսվել՝ 21.09.2021:

¹ Միադիմի միակազմ նախադասությունները համարելով անենթակա նախադասությունների երկու տեսակներից մեկը՝ Գ. Ջահուկյանը դրանք անվանում է «վիճակա-եղանակային»՝ նշելով, որ դրանցում արձանագրվում կամ գնահատվում է որևէ անմիջական իրավիճակ կամ հոգեվիճակ որպես իրական ենթակա (*Ցրտում է, Ցուրտ է, Լավ է, Հիանալի է, Հարկավոր է գնալ*) (Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 396):

² «Հայրեններ» աշխատությունից (աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Ե., 1995) քաղված նյութը բերում ենք փակագծերում՝ նշելով համապատասխան էջը:

մրգէ *արգիլել կու պիտի* (ԱՍՕԲ): ... *զի սաստիկ քամի էր* (ՍԼ) և այլն:

Ըստ խոսքի մեջ գործածության՝ միադիմի միակազմ նախադասությունները երկու տեսակ են՝ անկախ և զուգորդվող:

1. *Անկախ* են այն միադիմի միակազմ նախադասությունները, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս իբրև ինքնուրույն հաղորդակցական միավորներ, սակայն անհրաժեշտության դեպքում կարող են գործածվել նաև բարդ կառույցների մեջ՝ բարդ ստորադասականների կազմում գրավելով քերականորեն գերադաս կամ ստորադաս, իսկ բարդ համադասականների կազմում՝ համագոր դիրք³, ինչպես Մ ր տ ի կ ս ա լ ի յ ի ս ա ս ա գ, Թ է ա ն որ թ ա ր կ ն պ ի տ ի տ ա լ (156): Յուցանէ օրինակս այս, թէ պարտ է մեծարել եւ դարմանել զծնօղս եւ հնազանդիլ (ԱՍՕԲ): Վայ է ինձ (ՎԱԱ) և այլն:

2. *Չուգորդվող* են այն միադիմի միակազմ նախադասությունները, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս միայն բարդ ստորադասական կառույցների կազմում՝ գրավելով գերադաս դիրք և պահանջելով մի երկրորդական նախադասություն, որը կատարում է ենթակայի շարահյուսական գործառույթ⁴, ինչպես՝ Եւ թէ լինի որ ի յականջնցաւ լինայ՝ ... քիչ մի յեամէկի ձէթ յականջն կաթեցուր (ԱՍՕԲ): Ասացած է, թէ կու պիտի, որ գինին ամիսն Ա տարպայ կամ Բ տարպայ խմէ (ԱՍՕԲ) և այլն:

Միջին հայերենի միակազմ նախադասություններն ուսումնասիրել է Պ. Վարդապետյանը, սակայն լեզվաբանի առաջադիր խնդիրը եղել է ոչ թե միջին հայերենի միակազմ նախադասությունների առանձնակի քննությունը, այլ գրական հայերենի հիշյալ շրջանի շարահյուսական համակարգում այդ նախադասությունները ընդհանուր գծերով ներկայացնել: Պ. Վարդապետյանը միջին հայերենի միակազմ նախադասությունները դասակարգել է, ինչպես ինքն է նշում, հայ լեզվաբանների կողմից միակազմ նախա-

³ Գ. Խաչատրյան, *Գրաբարի միակազմ նախադասությունները*, Ե., 2002, էջ 20-21:

⁴ Նշվ. աշխ., էջ 21-22:

դասությունների դասակարգման երկու սկզբունքների զուգակցմամբ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ խնդրո առարկա *պարտ է* և նման միադիմի բայերով ու անորոշ դերբայի համադրությամբ կազմված նախադասությունները («Պարտ է զայսպիսոյս արիւնն հեղել») նա համարել է անորոշ դիմավոր⁵:

Անուն+միադիմի բայաձև–անորոշ դերբայ կապակցությամբ արտահայտվող նախադասությունները մենք քննում ենք ոչ թե դիմավոր, այլ միադիմի բայերի կամ վերջիններիս մասնակցությամբ կազմվող միակազմ նախադասությունների շարքում:

Բայական միադիմի միակազմ նախադասությունները բնորոշ են գրական հայերենի բոլոր շրջաններին: Մասնավորապես միջին հայերենում թե՛ անկախ, թե՛ գուգորդվող միակազմ նախադասություններն աչքի են ընկնում արտահայտության և բովանդակության պլանների բազմազանությամբ: Այս կարգի նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է չեզոք կամ կրավորական սեռի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ:

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասությունները միատարր չեն նաև բովանդակության պլանում. նրանց միջոցով նկարագրվում են բնությանը, օդերևույթին, ժամանակին, մարդկանց առնչվող գործընթացներ, վիճակներ, պահեր, եղանակավորված և առանց եղանակավորման անդամ գործողություններ և այլն:

Անկախ և գուգորդվող միադիմի միակազմ նախադասությունները միջին հայերենում ունեն գերադաս անդամի՝ մեկ տասնյակից ավել արտահայտության միջոց: Ստորև նկարագրական և համեմատական մեթոդների կիրառմամբ կանդրադառնանք այն անկախ միակազմ նախադասություններին, որոնց գերադաս ան-

⁵ Համաձայն այդ սկզբունքներից մեկի՝ Պ. Վարդապետյանը միակազմ նախադասությունները բաժանում էն 2 հիմնական խմբի՝ նայած թե միակազմ նախադասության գերադաս անդամն ինչ խոսքի մասով է արտահայտված՝ ա) բայով, թե բ) անուն խոսքի մասով (*Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Խ. Բ, Ե., 1975, էջ 133-136):

դամն արտահայտվում է *անուն+միադիմի բայաձև-անորոշ դերբայ* կապակցությամբ:

Միջին հայերենի անուն+միադիմի բայաձև - անորոշ դերբայ կապակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ

Ի տարբերություն որոշ միակազմ նախադասությունների, որոնք տիպիկ միջինհայերենյան լեզվական իրողություններ են, միջին հայերենը *անուն+միադիմի բայաձև-անորոշ դերբայ* կապակցությամբ արտահայտվող միակազմ նախադասությունները ժառանգել է գրաբարից: Օրինակ՝ *Պարտ է խնդրել*, թե արդեօք մայր գո՞յր նոցա (ԵԿ): *Որովք ոչ է հնար գիտել*,՝ զինչ է ճանապարհ հողմոյ (Ժող., ԺԱ, 16)⁶ և այլն:

Անուն+միադիմի բայաձև-անորոշ դերբայ կապակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասություններում անորոշ դերբայով արտահայտված գործողությունը, որպես կանոն, եղանակավորվում է: Եղանակավորիչի դեր են կատարում *արժան, ժան, լաւ, հարկ, պատեհ, պատշաճ, պարտ, պիտոյ* և այլ գոյականներ ու ածականներ, ինչպես՝ *Զխօսքն գիտութեամբ պարտ է դասասել, Ոսկով [պարտ է] կշռել և ապա խօսել* (963): Վասն զի *չէ պատեհ* փութով *հաւատալ* ամենայն բանից եւ քննել եւ իմանալ զճշմարտութիւն (ՎԱԱ) և այլն:

Այս նախադասությունների՝ բաղադրյալ գերադաս անդամի միադիմի բաղադրիչը գերազանցապես արտահայտվում է *եւ* բայի է անկատար ներկա ժամանակաձևի մասնակցությամբ, *լինիլ//լինել//լինալ* էական բայերի միադիմի ձևերով: Օրինակ՝ *Եթէ ոք ընդ անգէտս հաղորդի անսուրբ, նա պատեհ է տեսնուլ* գմարդն՝ թէ ինչ մարդ է եւ կամ յինչ հասակի (ՍՄԴ): Ասվածին հակառակ՝ *լինիլ* բայի *եղև* միադիմի ձևի մասնակցությամբ արտահայտված հետև-

⁶ Աստվածաշնչյան լեզվական նյութը բերում ենք զիտական աշխարհին հայտնի ծանոթագրություններով (տե՛ս *Գիրք Աստուծաշունչք Հին և Նոր կտակարանաց*, Վենետիկ, 1860):

յալ նախադասությունը բացառիկ է՝ Բայց ինձ Սմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ *հարկ եղև* յայս տեղիս *գտնուլ* զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն (ՄԳԲ) և այլն:

Անուն+միադիմի բայաձև-անորոշ դերբայ կապակցությամբ արտահայտվող անկախ միադիմի նախադասությունների գերադաս անդամի բաղադրիչները կարող են հանդես գալ տարբեր շարադասությամբ, սակայն *անուն* և *միադիմի բայաձև* բաղադրիչների կապն անխզելի է. թե՛ դրական և թե՛ ժխտական կառույցներում նրանք կա՛մ նախորդում են անորոշ դերբային, կա՛մ հաջորդում⁷: Այսուհանդերձ, ակնհայտ է *անուն+միադիմի բայաձև-անորոշ դերբայ* շարադասությամբ անկախ միադիմի նախադասությունների հաճախադեպությունը, որը հետագայում ամրագրվել է աշխարհաբարի երկու ճյուղերում:

Խնդրո առարկա նախադասությունների ժխտական տարբերակները գործածվում են միայն «ժխտական խոնարհման միադիմի բայաձև+անուն-անորոշ դերբայ» շարադասությամբ: Օրինակ՝ Փուշքարին տանն առջեն եւ եհար զիս ջումխով ի քուրծս եւ անհարկի խօսօք զիս ամաչեցոյց. զոր *չէ պարտ սսել* (Կ-Պ) և այլն: Նկատելի է, որ ժխտական խոնարհման միադիմի բայաձևն այս դեպքում տեղաշարժվում է անվանական բաղադրիչից առաջ՝ եւ կաշառաք *ոչ է պարտ թիրել* զիրաւունքն (ՍՄԴ): Եւ նայ ի բաց վարեաց զաւձն եւ ասաց. *ոչ է արժան առնուլ ինչ ի թունալից բերանոյ քումէ* (ՎԱԱ): Ժխտական իմաստն այստեղ արտահայտվում է *ոչ* բառի և *չ* մասնիկի միջոցով, որոնք ավելանում են միադիմի բայաձևի դրական խոնարհմանը: Անզամ նույն հեղինակն է վերոնշյալ մասնիկներով զուգաձևեր գործածում: Հմնտ. Եւ ծեր շուն ասաց եւ այլ շատ բաներ ասաց. զոր *ոչ է պարտ խօսել* (Կ-Պ): Եւ գորացիսներն անհարկիք խօսօք ամօթեց եւ յետոյ եկաւ եւ սկսաւ Սէրհիյին կնոջն անպատեհ խօսօք անհարկութիւն իտուր. զոր *չէ պարտ լսել* (Կ-Պ):

⁷ Այդ է պատճառը, որ եղանակավորիչի և միադիմի բայաձևի կապն արտահայտում ենք *+* նշանով, իսկ այդ երկուսի և անորոշ դերբայի կապը – նշանով:

Անկախ միադիմի նախադասությունների կազմում երբեմն հանդես են գալիս գոյականների, փոխանունների կամ էլ 1-ին, 2-րդ և կամ 3-րդ դեմքի դերանունների տրական հոլովով արտահայտված անդամներ: Վերջիններս տվյալ կառույցներում կատարում են հանգման խնդրի շարահյուսական գործառույթ՝ կողմնակի կերպով ցույց տալով գործողություն կատարողին: Օրինակ՝ *Բայց եւ մեզ աշխարհական հաստիս պարտ է մերոց հովուացն հնազանդ լինել իբրեւ Աստուծոյ հայցն (ՍՄԴ)* և այլն:

Երբ խնդրո առարկա նախադասություններում բացակայում է տրական հոլովով արտահայտված հանգման խնդիրը, գերադաս անդամով արտահայտված հատկանիշը ենթադրաբար վերագրվում է բոլորին, ինչպես՝ *Եւ թէ ատեցվոր լինին մեկումեկն՝ անմեղանք՝ առանց բոգութեան՝ նա պատեհ է յերկար ժամանակ փնտռել (ՍՄԴ)*: Ասվածից հետևում է, որ նշված կարգի անկախ նախադասությունները բովանդակության պլանում համանիշ են ոչ թե անորոշ-դիմավոր, ինչպես գտնում է Պ. Վարդապետյանը, այլ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին, քանի որ վերջիններիս նման սրանք նույնպես արտահայտում են բոլորին և ոչ թե մեկ կամ մի քանի անձերի վերաբերող գործողություն: Պատահական չէ, որ այս կառույցներում կարելի է տեղ տալ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների բովանդակության պլանում ենթադրվող *սովորաբար, առհասարակ* կամ *ընդհանրապես* բառերից որևէ մեկին⁸, ինչպես՝ *Պարտ է գիտենալ (ընդհանրապես-Գ.Խ.)*, որ ջերմն օտար տաքութիւն է գատ ի բնութենէն (ԶՄ):

Եզրակացություններ

Միջին հայերենը *անուն+միադիմի բայաձև-անորոշ դերբայ* կապակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասությունները ժառանգել է գրաբարից: Անվանական բաղադրիչներով

⁸ Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 58-59:

եղանակավորվում է անորոշ դերբայով արտահայտված գործողությունը:

Նշված կապակցության բաղադրիչների շարադասությունը ազատ է, սակայն միտում կա *անուն + միադիմի բայաձև – անորոշ դերբայ* տարբերակի կայունացման: Ժխտական իմաստն այս նախադասություններում հավասարապես արտահայտվում է միադիմի բայաձևի հետ գործածվող *ոչ* բառով կամ *չ* մասնիկով:

Խնդրո առարկա միակազմ նախադասությունները շարահյուսորեն համանիշ են բայական ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին, քանի որ դրանցում ևս արտահայտված գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել բոլորին:

Պատմական երկերից բացի, որոնք միջին հայերենում սովորաբար շարադրվում էին գրաբարով, այս կարգի նախադասություններ գերազանցապես գործածվում են խոսքը ոճավորելու նպատակով՝ ավելի հաճախ հանդիպելով արձակ, քան թե չափածո շարադրանքներում:

Համառոտագրություններ

ԱՍՕԲ – Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940:
<https://digilib.aua.am/book/57/57/570/%D5%95%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%20%D4%B2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6>

ԵԿ – Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
<https://books.google.am/books?id=TIRemCEXcmkC&printsec=frontcover#v=onepage&q&f=false>

Կ-Պ-Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVIդ.), աշխ.՝ Վ.Ռ. Գրիգորյանի, Ե., 1963:
<http://koha.etchmiadzinlibrary.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=3914>

ՂՓ – Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Սամիկոնեան, Տիֆլիս, 1907:

<https://archive.org/details/patmutiwnhayots00ghazgoog/page/n7/mode/2up?view=theater>

ՋՄ – Մխիթար բժշկապետ Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:

<https://www.digitale-sammlungen.de/de/view/bsb10250123?page=7>

ՍՍԴ – Սմբատ Սպարապետ, Դատաստանազիրք, Ե., 1958:

<https://digilib.aa.am/book/332/%D4%B4%D4%B1%D5%8F%D4%B1%D5%8D%D5%8F%D4%B1%D5%86%D4%B1%D4%B3%D4%BB%D5%90%D5%94>

ՍԼ – Սիմեոն Լեհացի, Ուղեգրութիւն,

<https://polona.pl/item/notatki-podrozne,MTMzMDYzNTM/2/#info:metadata>

ՎԱԱ – Ժողովածոյ առակաց Վարդանայ:

<https://hycatholic.ru/pro/biblioteka/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B5%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf>

ՎՎ – Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1962:

<https://books.google.am/books?id=YGA-AAAAcAAJ&printsec=frontcover&dq=inauthor:%22Vardan+%28Aygek c%CC%95i%29%22&hl=en&sa=X&ei=JWD9VNv1G8ThywP1wIDYBA&ved=0CBoQ6AEwAA#v=onepage&q&f=false>

Khachatryan Gurgen -Middle Armenian’s Independent Mononuclear Sentences Expressed with Connection *Noun+Impersonal verb – Infinitive*.- Middle Armenian inherited *noun+impersonal verb – infinitive* expressions connected with independent mononuclear sentences from Old Armenian. Middle Armenian inherited the independent mononuclear

sentences expressed with the connection *noun + impersonal verb - infinitive* from Old Armenian. However, Middle Armenian inherited not all modal words playing the role of nominative component. The nominative component modalizes the action expressed with an infinitive.

The syntactic order of the constituent parts of the specified connection is free, but there is a tendency to stabilize the variant *name + impersonal verb - infinitive*.

The negative meaning in these sentences is equally expressed by the particles *n*₂ [voč] (“no”) or *z* [č] (“not”), which are used together with the impersonal verb.

The specified mononuclear sentences are syntactically synonymous with verbal generalized-personal mononuclear sentences, since the expression of action in them can also presumably be attributed to all persons.

Apart from historical works, which were usually written in Old Armenian, such kind of sentences in Middle Armenian language sources are mostly used to style a speech. They are often met in prose (especially in scientific) than in writing verse.

Keywords: Middle Armenian, impersonal mononuclear sentence, modal word, impersonal verb, infinitive, syntax

Khachatryan Gurgen – Doctor of Philology, Vanadzor State University after H. Tumanyan. gxachatryan@yahoo.com

Хачатрян Гурген - Независимые односоставные предложения среднеармянского языка, выраженные сочетанием *имя+ безличная форма глагола - инфинитив*. - Независимые односоставные предложения, выраженные сочетанием имя + безличная форма глагола – инфинитив, среднеармянский язык унаследовал из древнеармянского языка (грабара), однако не все слова, которые выступают в функции номинальной единицы, перешли в среднеармянский язык. В этих предложениях номинальная единица выступает средством модализации действия, выраженного инфинитивом.

Синтаксический порядок составных частей указанного сочетания свободный, однако есть тенденция к стабилизации варианта имя + безличная форма глагола – инфинитив.

Отрицательный смысл в этих предложениях в равной степени выражается с помощью частиц *ոչ* [voč] (“нет”) или *չ* [č] («не-»), которые употребляются вместе с безличной формой глагола.

Исследуемые нами односоставные предложения синонимичны глагольным обобщенно-личным односоставным предложениям, так как выполнение выраженного в них действия можно предположительно отнести ко всем.

Кроме исторических произведений, которые обычно излагались на древнеармянском языке, предложения такого рода в языковых источниках, переданные среднеармянским языком, преимущественно употреблялись для стилизации речи, обычно встречаясь в прозе (особенно, научного характера), чем в стихотворных сочинениях.

Ключевые слова: среднеармянский язык, односоставное безличное предложение, модальное слово, безличная форма глагола, инфинитив, синтаксический порядок слов.

Хачатрян Гурген - доктор филологических наук, Ванадзорский государственный университет им. О. Туманян. gxachatryan@yahoo.com

ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՇԵՆԻ ԲԱՐԲԱՆՈՒՄ*

DOI: 10.54412/2738277X-2021.1-38

Խաչատրյան Հասմիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. khachhasmik@yahoo.com

Բանալի բառեր. բարբառային հայերեն, փոխանունություն, բնիկ հայերեն բառ, իմաստափոխություն, հնչյունափոխություն, գրաբար, դարձվածք, բառիմաստային զարգացում, խոսվածք:

Նախաբան

Հայերենի բարբառներում բառերը շատ հաճախ բարբառից բարբառ իմաստային ուշագրավ տարբերություններ են դրսևորում: Ինչպես Է. Աղայանն է նշում, «Բառերի իմաստային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում խոսքի մեջ, բառագործածության գործընթացում և գերազանցապես փոխաբերական, փոխանվանական ու համըմբոնական գործածությունների հետևյալնք են»¹:

Բառի փոխաբերական և փոխանվանական գործածությունները հաճախ առաջնային պլան են մղվում, որն էլ պատճառ է դառնում բառիմաստի զանազան փոփոխությունների, որոնք, ժամանակի ընթացքում խոսքից դուրս ամրանալով բառին, դառնում են նրա հիմնական իմաստը:

* Ներկայացվել է հուլիսի 27.07.2021, գրախոսվել՝ 10.09.2021:

¹ Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 78:

Բառաբնական դիտարկումներ

Արաքս՝ արագ՝ հեղեղ: Համշենի բարբառի յուրօրինակ իմաստափոխական դրսևորումներից է *արագ* բառանունը, որը «սելավ, հեղեղ» նշանակությամբ է գործածվում: Բառանունը վկայված է ն՝ Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» աշխատության, ն՝ Հ. Գուրունյանի «Համշենահայ բանահյուսության» մեջ²:

Ուշագրավ դիտարկում է անում Հ. Աճառյանը՝ նշելով, որ պատմական և աշխարհագրական տեսանկյունից շատ հետաքրքրական է *արագ* բառի գոյությունը Համշենի բարբառում: Այն, բնականաբար, Արաքս գետի անունից է, և այս բարբառում նրա առկայությունը գիտնականը համարում է «համշենցոց հին բնակավայրի և գաղթականության ժամանակի վերջին գեղեցիկ հիշատակը, որ շարունակում է իր գոյությունը այսօր էլ Կովկասյան նոր գաղթավայրում, բայց առանց գիտակցվելու նրա առնչությունը Արաքս գետի հետ»³:

Կարծում ենք՝ այս դեպքում տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում, որն էլ իմաստափոխական այն երևույթն է, երբ լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը, կորցնելով իր էական հատկանիշների մի մասը, ընդարձակում է իմաստային ծավալը:

Դրուժան: Արևմտյան բարբառներից Պոլսի բարբառում հետաքրքիր զարգացում է ապրել *դրուժան* բառանունը: Ինչպես Հ. Աճառյանն է փաստում, *դրուժան*-ը այստեղ հանդես է եկել *դրոջան* հնչատարբերակով և գործածվում է իբրև հույներին վերագրվող նախատական վերադիր: Այս բառանունը նույն իմաստով դրսևորված է նաև Տրապիզոնում՝ տվյալ բարբառին բնորոշ հնչունափոխությամբ՝ *դրոջան*>*դրոջոն*⁴: Նկատենք, որ եթե *արագ* բառում հատուկ անունը բառիմաստի ընդլայնմամբ դարձել է հասարակ անուն, ապա *դրուժան*-ի դեպքում գործ ունենք փոխանու-

² Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետ՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 221, 13: Հ. Գուրունյան, *Համշենահայ բանահյուսություն* (այսուհետ՝ ՀԲ), Ե., 1991, էջ 314:

³ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 13-14, Հ. Գուրունյան, ՀԲ, էջ 314:

⁴ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 47, 227:

նության դասական օրինակի հետ, երբ առարկայի և հատկանիշի միջև եղած հարաբերություններում հատկանիշը գործածվում է առարկայի փոխարեն, ինչպես՝ *դրուժան հույն*-ը՝ որպես *դրուժան*, որը համեմատելի է առօրյա խոսքում առկա լեզվական այլ դրսեվորումների հետ: Օրինակ՝ վատ հատկանիշներ ունեցող մարդուն «թուրք» ենք անվանում, կամ ժլատ մարդուն՝ «ցիգան»: Փոխանունության նույնպիսի արտահայտություն է նաև *Լոռու բարբառում* առկա *առնառուտ* բառը, որը, ի դեպ, բառարաններում բացատրվում է որպես «ալբանացի», իսկ *Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններում* գործածված է «արնախում, արյունառուշտ» իմաստով⁵:

Փեթակ: Հետաքրքրական է Համշենի բարբառում առկա *փեթակ* բառանվան «ուղևորությունը»: Բարբառում այն դրսևորված է *փեթսնդ* հնչատարբերակով: Պարզվում է՝ *փեթակը* հայերենից անցել է թուրքերենին՝ դառնալով *փեթսնդ* այնուհետև՝ թուրքերենից հայերենին՝ արդեն թուրքերենին բնորոշ *փեթսնդ* հնչատարբերակով: Պետք է փաստենք, սակայն, որ *փեթսնդ*-ին զուգահեռ Համշենի բարբառում գործածվել են նաև բառիմաստային յուրօրինակ զարգացումներով *փոր* արմատից ձևավորված *փորօք*>*փորեք*, *փորիք*, *փորիկ*⁶ ուշագրավ բառանունները: Հարկ է նշել, որ համշենահայերի փեթակները տարբերվում են մյուս վայրերի փեթակներից: Ինչպես Թողաքյանն է փաստում, համշենահայերը որպես փեթակ օգտագործում էին նաև դալար ճիպոտներից հյուսված գլանաձև կողովներ⁷: Եվ քանի որ այդ փեթակները կլորավուն են և փորի տեսք ունեն, կարծում ենք՝ այդ նմանությունն էլ հիմք է հանդիսացել *փորօք*, *փորիք* բառանվանումների առաջացման:

Հոսպոս: Իմաստափոխական իրողության յուրահատուկ օրինակներ են Համշենի բարբառում գործածվող *սանր* արմատի և *իկ*

⁵ Հ. Մաթևոսյան, *Վիպակներ*, Ե., 1990, էջ 457, 478, 495:

⁶ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 47:

⁷ Բ. Թողաքյան, *Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ*, Ե., 1981, էջ 147-148:

ածանցի համադրությամբ ձևավորված *սօնրիկ*, *սօնդռէկ*, *սօնդրիկ*, *սօնդրիկ*, *սօնդէրիկ* բառանունները՝ որպէս *հոպոպ* հասկացության նշանակելիներ, որ արձանագրված են մեր ձեռքի տակ եղած գրեթէ բոլոր խոսվածքների նյութերում: Այս բառանունների առկայությունը վկայում է, որ բարբառային հայերենում բառի մեջ տվյալ առարկայի հատկանիշի իմաստը հաճախ այնքան է արժևորվում, որ դառնում է տվյալ առարկայի անվանում: Այդպէս է առաջացել, օրինակ, *սօնդռէկ* բառանունը՝ պայմանավորված հոպոպի՝ գլխին սանր ունենալու հանգամանքով (*Սօնդռէկի* կըլխուն սօնդռ գա):

Քոյլ՝ «խումբ» իմաստով, բառանունը հին հայերենում գործածվել է «մարդկանց, երեւների, եղջերուների, եղնիկների և ցուլերի խմբեր» իմաստով, իսկ *ք* հոգնակերտով՝ *քոյլքը*՝ «բազմաստեղք» նշանակությամբ է կիրառվել: Բարբառային հայերենում, *քուլքը* բացի «աստեղատուն կամ մի աստղի անվանում» նշանակություններից, հանդես է գալիս նաև այլ իմաստներով: Օրինակ՝ Ակնում *ք'օլ* խումբ, Ալաշկերտում, Մուշում *ք'ուլ* թուփ և այլն:

Խնդրո առարկա Համշենի բարբառում հիշյալ բառանունը վկայված է *պուլկ*, *պուլք* տարբերակներով, որը *քոյլ* արմատի և գրաբարյան *ք* հոգնակերտի բաղադրությամբ ձևավորված բառանուն է: Այն բարբառում *թուփ* հասկացության նշանակելին է (սեռ՝ *պըլկօն*), օգտագործվում է հատկապէս վարդի կամ կաղնու նման բազմաթիվ ցողուններից կազմված թփերի դեպքում: Բարբառում գործածական է նաև *պուլկ* բառից և *ոտ* (*ոտ>էդ*), *ուտ* ածանցներից բաղադրված *պըլկէդ*՝ թփոտ, *պըլկուդ*՝ թփուտ բառանունները⁸: Օրինակ՝ Այդին ջօտին փըշի *պըլկուդ* մը գա: Համշենի բարբառում *պուլկ* բառով ձևավորված դարձվածային ուշագրավ կիրառություն ենք արձանագրել մեր բարբառախոսների խոսքում: Օխտը *պուլկը* մէյ մը նէդվի գու (անբարոյական աղջկան են ասում՝ յոթ թուփ միանգամից է թռչում):

⁸Ն. Աճառյան, ՔՀԲ, էջ 223, Խ.Թախազ, Ձենիզի բարբառի բառարան (այսուհետև՝ ՋԲԲ), Մոշի, 2014, էջ 169:

Ջերծանիլ: Հինհայերենյան այս բառանունը՝ «ազատիլ, պըրծնիլ, ձեռքից փախչիլ» իմաստներով, գործածվել է դեռևս Աստվածաշնչում: Այն բնիկ հայերեն *զերծ*՝ ազատ, ապահով, անվտանգ բառարմատից է սերում, որն էլ կազմված է *զ* մասնիկից և *երծ* արմատից. վերջինս առանձին գործածական չէ⁹:

Համշենի Ճենիկի խոսվածքում հիշյալ բառանունն առկա է *զէյձնուշ, զէյզնուշ* (բարբառին բնորոշ *ը>յ* անցումով) հնչաձևերով: **Ջերծանիլ**-ը Համշենի բարբառում, ենթարկվելով բառիմաստային փոփոխությունների, ձեռք է բերել «պատրաստ լինել, պատրաստություն տեսնել, վերջացնել, գնալու պատրաստվել» նշանակությունները (զէյձա՝ պատրաստվեցի, զէյձար՝ պատրաստվեցիր, զէյձավ՝ պատրաստվեց, զէյձաձ՝ պատրաստված, զէյզնօղ՝ պատրաստվող, «Ջէյձա՞ձ իս, տսն էշտօնկ»՝ Եթե պատրաստվել էք, գնանք, «Հայսնիկ *զէյձսնսն*»՝ պատրաստվում է՝ հարսանիքի գնա, «Կընա՛ *զէյձի*»՝ գնա՛, պատրաստվի՛ր)¹⁰:

Կազմել: Ինչպես գիտենք, *կազմել* բայանունը արդի հայերենում գործածվում է «հավաքելով, համախմբելով, միավորելով կազմակերպել՝ ստեղծել (որևէ ամբողջական բան)» իմաստով:

Համշենի բարբառում *կազմել* բայը դրսևորված է *զազնուշ* հնչաձևով և ունի «հարսի շորերը հագցնել, որևէ բան զարդարել, ձին սարքել» նշանակությունները: Հա յս *զազնեյդ* գու տսն (Հա ըս էիր զարդարվում), Ներ հայտուն *զազնեձին* (Նորահարսին զարդարեցին):

Հարկ ենք համարում նշել, որ ըստ ՆՀԲ-ի՝ կազմել բայանունը, բացի մեզ հայտնի իմաստներից, գրաբարում գործածվել է նաև «յարդարել, զարդարել, հանդերձել» նշանակություններով¹¹: Այդ դեպքում բառանունը թերևս ոչ թե իմաստափոխվել է, այլ

⁹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 2, Ե., 1973, էջ 92-93:

¹⁰ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 228, Խ. Թահմազ, ՋԲԲ, էջ 62:

¹¹ Նոր բառեզիրք հայկազեն լեզուի, Վենետիկ, 1836, էջ 1030:

պահպանել է բառի հինհայերենյան նշանակությունները: Հավելենք նաև, որ վրացերենը հայերենից փոխառել է հիշյալ բառը *ակազմա*՝ նույն «գարդարել, յարդարել, ձին թամբել» իմաստներով¹², ինչն էլ հաստատում է, որ Համշենի բարբառում առկա *գազնուշ* բառում ամրակայվել են հին՝ «գարդարել, ձին թամբել» կիրառությունները:

Ածուք: Բնիկ հայերեն՝ հ.ե. *ag*⁻¹ արմատից սերած *ածել* բառի առաջին և նախնական իմաստն է «բերել»-ը, որից էլ հետագայում ձևավորվել են նրա երկրորդական նշանակությունները (փոխադրել, շարժել, հագնել, հեղեղել, լցնել, զարնել, կտրել, սափրել, բուսցնել, նվազել, ձու ածել և այլն):

Արդի գրական հայերենում գրաբարյան *ածել* արմատը կորցրել է իր առաջնային «բերել» նշանակությունը և գործածվում է հիմնականում *ձու ածել* իմաստով: Հիշյալ իմաստից բացի հայերենի բարբառներում այն գործածվել է նաև «ջուր լցնել, նվազել» նշանակություններով: Հարկ է փաստել, որ *ածել* բայից ձևավորված *ածու* բառանունը՝ «բանջարանոց» իմաստով, բարբառային հայերենում տարածական լայն ընդգրկում ունի (*ածու*՝ Ագուլիս, Վան, *ա՛ծո*՝ Ոզն, *ածուկ*՝ Ջեյթուն, *ածվիկ*՝ Կեսարիա և այլն): Համշենի բարբառում *ածել* բայը ևս գործածական է. նախ՝ «ձու ածել» իմաստով՝ *ածուշ*, որից էլ՝ *ածոն* (ածան) ածականը (Ածոն հավը գոնգոնուգ գըլլի¹³, այսինքն՝ Ածան հավը կչկչան կլինի), *ածըպուն*՝ հավերի ածելու բույնը: Բարբառում առկա են նաև *ածել* բայարմատից ձևավորված *ածիլի*, (նաև *ածիլա*) *ածիլուշ*, *ածիլիճ* (*Ածիլն ածիլվուշի* օմբնտ ան՝ Ածելին սափրիչի գործիքն է) բառանունները: Համշենի բարբառում գործածվում է նաև *ածել* բառից բառիմաստային յուրօրինակ գուգորդումներով բաղադրված *ածուք* (նաև՝ *ածուկ*) բառանունը՝ որպես «բանջարանոց» բառի նշանակելի, ինչպես և *ածուկ*-ից բաղադրված *ածուկեղեն*-ը՝ «բանջարեղեն» իմաստ

¹² Հ. Աճառյան, ՀԱԲ, հ.2, Ե., 1973, էջ 478:

¹³ Խ. Թահմազ, ՋԲԲ, էջ 7:

տով: Օրինակ՝ Աստարի *ածուկեղէն* շաղ սաղոթած ունիմ (Այս տարի բանջարեղէն շատ եմ տնկել):

Մաշնակ: Հնչյունափոխական և բառակազմական իրողությունները բարբառներում հաճախ իմաստափոխական էական գործոններ են դառնում: Այսպես, օրինակ, *մարդ* բառանունը Համշենի որոշ խոսվածքներում դրսևորված է բարբառին բնորոշ *ր>շ* անցումով՝ *մաշտ* հնչատարբերակով, որից էլ ձևավորված է *մաշնակ* բառանունը՝ մարդավարի» իմաստով: Ս. Մալխասյանցի բառարանում վկայակոչված է *մարդնակ* բառանունը՝ որպես «մարդավարի, քաղաքավար» բառերի նշանակելի¹⁴: *Մարդ* բառանունից կազմված *մարդանակ* կամ *մարդնակ* բառանունն էլ Համշենի բարբառում, ամենայն հավանականությամբ հնչյունափոխվելով, դարձել է *մաշտնակ*, որից հետո էլ *տ* հնչյունի անկմամբ ստացել է *մաշնակ* հնչաձևը: Բառիմաստային ճյուղավորմամբ բարբառում այն ձեռք է բերել նաև «լավ» իմաստը¹⁵:

Համշենի բարբառում ունենք օրինակներ, որոնցում նույն բառի հնչյունական կամ քերականական տարբեր ձևերը գործածվում են զուգահեռաբար՝ դրսևորելով տարբեր իմաստներ: Երբեմն, օրինակ, բայական ածանցը փոխում է նաև բառիմաստը: Այսպես՝ *տալ* բայը բարբառում ունի *տալ>դըվուշ*՝ պարզապես «տալ» իմաստը (Յէս ընու կիրկ մը *դըվի*՝ ես նրան մի գիրք տվեցի), իսկ *վ* ածանցով տարբերակը դրսևորված է «ծեծել» իմաստով (Յէս ընու շապալը մը *տըվվի*, Մէգը մեզին քարով *տըվված* ունէր, այսինքն՝ Ես նրան հարվածեցի, Մեկը մեկին քարով հարվածեց): Վկայված է նաև բայի պատճառականը՝ *տըվվեցընուշ*՝ «ծեծել տալ» իմաստով¹⁶:

Համշենի բարբառում բառիմաստային ուշագրավ զարգացումներ է դրսևորում նաև *սիրտ* արմատը, որից էլ բաղադրված է *սեյդրուշ* բայանունը՝ «խոովել» նշանակությամբ: Ըմրն բարբառ

¹⁴ Ս. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 277:

¹⁵ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 244:

¹⁶ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 254:

պժնի հոմար *սէյրոտէր* գու, հեղըս խօսիլ չէր¹⁷: Հ. Աճառյանը վկայել է նաև *սէյրոտ*՝ «քեն, ոխ պահած» նշանակությամբ բառաձևը¹⁸:

Ս. Վարդանյանը կրոնափոխ համշենահայերի բառապաշարում արձանագրել է նաև *սիրտ* բառից բաղադրված *սէրոտ*-ը՝ «գայրացած» (*սէրոտ* մարթ՝ գայրացած մարդ), *սէրէտուշ*-ը և *սէյրէտուշ*-ը՝ «գայրանալ, վիրավորվել, խռովել», իսկ *սիրդ*-ը «գայրույթ» իմաստներով¹⁹:

Մայր «մթություն, խավար» իմաստով բառանունը գրաբարում անկախ գործածություն չի ունեցել, գործածվել է միայն որոշ դարձվածներում (ի մայր դառնալ, ի մայր մտանել, ի մայր դարձուցանել՝ ճրագը հանգցնել, մայր արևու՝ արևմուտք, որից արևմար կամ արևմարք՝ վերջալույս)²⁰:

Հայերենի բարբառներում «մթություն» իմաստով *մայր* բառից է բաղադրված *մարէլ* բայանունը՝ «հանգցնել, նվաղել» իմաստներով (Մուշ, Պուլիս, Խարբերդ, Վան, Ակն և այլն):

Համշենի բարբառում *մարէլ* բառը (*մայրուշ* հնչատարբերակով) ևս դրսևորում է ուշագրավ բառիմաստային տարբերակներ: Բացի վերոհիշյալ «շիջանիլ, նվաղիլ» իմաստներից, բարբառում բառն ունի նաև «պարզաջրել, ամանը ջրով ողողել» իմաստները: Օրինակ՝ Լուսը մայրէծո՛ւ, Գըրագը մայրէծու՛մ: Լըվըծա՛մ հալվընիս մայրէր գու (պարզաջրում էր): Օմընդանկը մայրէ՛ծ (Ամանները պարզաջրեց):

Համշենի բարբառում բացի *մայր*՝ «մթություն, խավար» իմաստով բառից, առկա է նաև նրա համանուն *մայր*՝ «մայրիկ» իմաստով բնիկ հայերեն արմատից բաղադրված ուշագրավ *մէյցու*, (*մայցու*, *մայծու*) բառանունը՝ որպես «մերան, մակարդ» հասկա-

¹⁷ Տե՛ս ՀԲԱ ծրագրով հավաքած նյութեր, տետրեր 39, 99, 252:

¹⁸ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 253:

¹⁹ Ս. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը*, բանասիրականությունը և երգարվեստը, Ե., 2009, էջ 317:

²⁰ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 248-249:

ցության նշանակելի: Կարծում ենք՝ բարբառում առկա *մայցու*, *մեյցու* բառանունները *մերան* բառի բառակազմական և հնչյունական այլ տարբերակներ են, որոնք էլ ծագումնաբանորեն առնչակից են *մայրիկ* իմաստով բնիկ հայերեն *մայր* արմատին: Հ. Աճառյանը *մեյցու*, *մայցու* բառանունները բառակազմորեն վերլուծում է իբր մայր-ցու, որից էլ՝ *մայծվուշ*՝ «մերվել, մակարդվել», *մայծվեծի*՝ «մերեցի, մակարդեցի»: Օր.՝ Հայսը օմօմը մաձուն մայծվեծ (Հարսը մի աման մաձուն մերեց):

Հարկ է փաստել, հայերենում առկա է նաև *մայրան* բառանունը, որը «ծառի ծունկը, նրա պատվաստվելու տեղը» այսինքն՝ պատվաստի մայրը²¹, նշանակությունն ունի: Կարծում ենք՝ *մերանը* նույն տրամաբանությամբ էլ մաձունը պատրաստողն է, նրա մայրը:

Եզրակացություն

Ինչպես է նշում Մ. Աբեղյանը, բառիմաստի փոփոխությունները հիմնականում կատարվում են բառիմաստի նեղացման, ընդլայնման, շրջման, համաբանության, իմաստի մեկ ուղղությամբ զարգանալու, ըստ գործառույթի և նմանության նոր իմաստ ձեռք բերելու և այլ պատճառներով²²:

Համշենի բարբառում դիտարկված *մաշնակ*, *մեյցու*, *սձուկ*, *պուլկ*, *տրվվուշ*, *դրվուշ* օրինակները մեկ անգամ ևս ապացույցն են այն բանի, որ բարբառներում շատ հաճախ հնչյունական, բառակազմական և քերականական իրողությունները իմաստափոխական էական գործոններ են դառնում:

Քննվող նյութի շրջանակներում հիշյալ բարբառում առկա են նաև բառիմաստի ընդլայնման, նեղացման, շրջման և բառի վերաիմաստավորման դրսևորումներ, ինչպիսիք են *արագ*-ը, *դրոջօն*-ը,

²¹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 247, ՔՀԲ, էջ 243:

²² Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, հ. 2, էջ 140-153:

սօնդռէկ-ը, *գազնուշ*-ը, *զէյձնուշ*-ը, *փօրէք*-ը, *մւրրուշ*-ը, *սէյդրուշ*-ը
և այլն:

Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, հ. 2, Ե., 1974:

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973:

Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947:

Գուրունյան Հ., Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991:

Թահմազ Խ., Ջենիգի բարբառի բառարան, Սոչի, 2014:

Թողաքյան Բ., Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, Ե., 1981:

Մաթևոսյան Հ., Վիպակներ, Ե., 1990:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944:

Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990:

Նոր բառեզիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836:

Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Ե., 2009:

Khachatryan Hasmik - Meaning Change Realities in Hamshen dialect.-

Within the scope of the discussed material, the Hamshen dialect has manifestations of semantic expansion, semantic restriction, semantic inversion, and semantic reinterpretation, such as: *աղազ* [araz] - torrent, *դրճոն* [dyrjon] - Greek traitor, *սօնդռէկ* [sondrek] - hoopoe, *գազնուշ* [gaznush] (to compose) - to dress the bride, *զէյձնուշ* [zeydznush] (զերծանիլ [zertsanil] to free, to be done with) to get ready to leave, *փօրէք* [poreq] (belly) - beehive, *սէյդրուշ* [seydyrush] - to get angry, etc.

The examples such as *մաշնակ* [mashnak] (properly), *մէյցու* [meytsu] (ferment), *աձնիկ* [adzuk] (vegetable garden), *սուլիկ* [pulk] (bush), *մւրրուշ* [merush] (to rinse clothes or dishes), *տրվիւմ* [tyvvush] (to hit), *դրվիւմ* [dyvush] (to give) observed in the Hamshen dialect once again come to prove that quite often, phonetic, word-formative and grammatical realities become key factors for semantic change.

Keywords: Dialects of Armenian, metonymy, native Armenian word, semantic change, alternation, ancient Armenian, idiomatic phrase, semantic development, idiom.

Khachatryan Hasmik - PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Senior Researcher. khachhasmik@yahoo.com

Хачатрян Асмик - Факты изменения смысла слов в амшенском диалекте.- В рамках исследуемого материала в указанном диалекте отмечены проявления расширения, сужения, сдвига, переосмысления слов, таких, как: *իրիզ* (*араз*) - потоп, *իրիջոյ* (*дрджон*) - предатель грек, *սոնդրեկ* (*сондрек*) - удод, *գազնուշ* (*газнуш* - комплектовать) - одевать невесту, *զէյձնուշ* (*зейдзнуш* - освободить, избавить) - готовиться к уходу, *փորէք* (*порэк* - животик) - улей, *սէյճրուշ* (*сейдруш*)-злиться, негодовать, и др. Отмеченные в амшенском диалекте примеры *միշնիւ* (*машнак*) - по-человечески, *մէյցու* (*мэйцу*) - закваска, *սձու* (*адзук*) - огород, *սուկ* (*пулк*) - куст, *մարուշ* (*маруш*) - полоскать одежду, посуду, *տէքուշ* (*тэввуш*) - ударять, *դէքուշ* (*дэвуш*) - давать, являются доказательством того, что фонетические, словообразовательные и грамматические реалии довольно часто становятся значительными факторами, изменяющими значение слов в диалектах.

Ключевые слова: диалектный армянский, субстантивация, исконно армянское слово, изменение значения (переосмысление), изменение звука (звукоизменение), грабар (древнеармянский язык), фразеологизм, смысловое развитие, говор.

Хачатрян Асмик - кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.
khachhasmik@yahoo.com

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՓՈՐՁ
(ԸՍՏ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ)***

DOI: 10.54412/2738277X-2021.1-49

Կատվայան Վիկտոր

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
առաջատար գիտաշխատող. viktorkatvalyan@mail.ru

Բանալի բառեր. բարբառ, հատկանիշ, արևելյան, արևմուտյան, բարբառախումբ, հնչյունական, քերականական, տարածք:

Նախաբան

Հայերենի բարբառների առանձնացման կամ դասակարգման առաջին իսկ փորձերը կատարվել են ըստ աշխարհագրական ընդգրկման¹: 19-րդ դարում աշխարհագրական դասակարգումներ են կատարել Ա.Այտրնյանը և Ք.Պատկանյանը, և երկու դեպքում էլ առանձնացվել են բարբառների արևելյան և արևմտյան խմբեր²: Հեղինակները նշել են նաև արևելյան և արևմտյան բարբառախմբերը միմյանցից տարբերող հատկանիշներ³: Ճիշտ է, Հ. Աճառյանը «սխալ և անյարմար» է դիտել բարբառները արևելյան կամ արևմտյան կոչելը⁴, սակայն գրել է, որ Ում ճյուղ ասելով՝ հասկանում է արևելյան բարբառների ամբողջությունը, իսկ Կը ճյուղ ասե-

* Ներկայացվել է 31.08.2021, գրախոսվել՝ 18.09.2021:

¹ Ինչպես հայտնի է, 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին կատարել է բարբառների տարածական դասակարգման առաջին փորձը (տե՛ս **Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն**, Ե., 1972, էջ 16-17):

² Տե՛ս նշվ. աշխ., էջ 17-18:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս **Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն**, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 34:

լով՝ արևմտյան բարբառների ամբողջությունը⁵: Գ. Ջահուկյանը ևս, կատարելով բազմահատկանիշ դասակարգում, նախ և առաջ առանձնացրել է բարբառների արևելյան և արևմտյան խմբակցություններ⁶: Ինչ խոսք, աշխարհաբարի՝ արևելյան և արևմտյան ճյուղերի գոյության փաստը հենց վկայությունն է բարբառային հայերենի աշխարհագրական առավել ընդհանուր տարբերակվածության, արևելյան և արևմտյան բարբառախմբերի գոյության⁷: Հայ իրականության մեջ հետազոտական աշխատանքներ են ծավալվել նաև լեզվաբանական աշխարհագրության մեթոդով: Կազմվել է Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր⁸, կատարվել են զգալի աշխատանքներ հատկապես բառային գուգաբանությունների ուսումնասիրության ոլորտում, հրապարակվել է «Հայոց լեզվի բարբառային ատլասի» Ա պրակը⁹: Սակայն հայերենի բարբառային հատկանիշների տարածական բաշխվածության օրինաչափությունների վերհանման ուղղությամբ դեռևս բավարար ծավալի աշխատանքներ չեն կատարվել, մինչդեռ դրանց արձանագրումն ու վերլուծությունը մեծապես կարող են նպաստել ինչպես բարբառագիտական, այնպես էլ հայոց լեզվի պատմության շատ հարցերի պարզաբանմանը: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ փորձել ենք վեր հանել բարբառների լեզվական հատկանիշների տարածական բաշխման որոշ օրինաչափություններ՝ նախ և առաջ նկատի ունենալով բարբառների բաշխումը ըստ արևմտյան և արևելյան խմբակցությունների: Դիտարկումներ և վիճակագրություն կատարել ենք Գ. Ջահուկյանի ընտրած 100 հատկանիշների

⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 35:

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 132-136:

⁷ Տե՛ս նաև նշվ. աշխ., էջ 30-31:

⁸ *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:

⁹ **Ա.Սարգսյան**, *Հայոց լեզվի բարբառային ատլաս*, Պրակ Ա, Ե., 2008, հեղ. հրատ., 37 էջ, 18 քարտեզներ:

շրջանակում և ըստ լեզվաբանի կազմած աղյուսակների¹⁰: Հատկանիշները խմբավորել ենք ըստ տարածվածության և աշխարհագրական վերաբերության: Ընդհանուր ենք համարել այն հատկանիշները, որոնց տարածվածության ցուցիչը 90 և ավելի միավոր է: Առանձնացրել ենք արևելյան և արևմտյան խմբակցություններից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները՝ նկատի ունենալով խմբակցություններից մեկում դրսևորումների քանակի բացարձակ գերազանցությունը: Օրինակ, *ժխտական մասնիկների հետադաս գործածություն* (97)¹¹ հատկանիշը համարել ենք արևելյան խմբակցությանը բնորոշ, որովհետև այստեղ այն ունի 33 միավոր տարածվածության ցուցիչ, իսկ արևմտյաններում՝ 3 միավոր ցուցիչ: Առանձնացրել ենք նաև առավելաբար արևմտյաններին կամ արևելյաններին հատուկ հատկանիշները՝ հաշվի առնելով դրսևորումների զգալի տարբերությունը: Օրինակ, *քնայնացած հետնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում* (8) հատկանիշը համարել ենք հիմնականում արևելյաններին հատուկ, որովհետև այն այստեղ ունի դրսևորման 40 միավոր ցուցիչ, իսկ արևմտյաններում՝ 25,5 միավոր ցուցիչ: Երկու խմբակցություններում գրեթե հավասար տարածում ունեցող ենք համարել հատկանիշների քանակական մոտավորապես նույն կարգի դրսևորումները: Օրինակ, *բառասկզբի ձայնեղների խլություն* (3) հատկանիշը արևմտյաններում ունի դրսևորման 26 միավոր ցուցիչ, իսկ արևելյաններում՝ 28 միավոր ցուցիչ:

Վիճակագրություն և վերլուծություն

Հաշվի առնելով Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակներում առկա տվյալները՝ բարբառային հայե-

¹⁰ Հատկանիշների ավելի մեծ խումբ ընդգրկել հնարավոր չէր՝ տվյալների սակավության կամ բացակայության պատճառով: Հասկանալի է, որ ստացված արդյունքները և կատարված դիտարկումները բացարձակ ճշգրիտ համարվել չեն կարող, սակայն թույլ կտան ունենալ ընդհանուր պատկերացում և հիմք կդառնան հետագա հանգամանալի ուսումնասիրությունների համար:

¹¹ Փակագծերում նշում ենք հատկանիշի ջահուկյանական համարակալումը:

րենում դիտարկել ենք ընդհանուր բնույթի 5 հատկանիշ՝ բոլորն էլ հնչյունական: Հայ բարբառների արևելյան և արևմտյան խմբակցություններում գրեթե հավասար տարածում ունեն 25 հատկանիշներ, որոնց մեջ ևս մեծ թիվ են կազմում հնչյունականները: Արևելյան բարբառներին բնորոշ են 10 հատկանիշներ, հիմնականում՝ ձևաբանական, ևս 15-ը առավելաբար տարածված են այդ խմբակցությունում: Արևմտյան բարբառներին բնորոշ են 27 հատկանիշներ՝ մեծամասամբ ձևաբանական, ևս 15-ը առավելաբար տարածված են այդ խմբակցությունում: Երկու խմբակցությունները ավելի շատ տարբերվում են բայական հատկանիշներով՝ առանձնանալով ա-

	ընդհան.		հավասար		արևել.		հիմն.արյ.		արևմտ.		հիմն.արմ.	
	բղ	ձյ	բղ	ձյ	բղ	ձյ	բղ	ձյ	բղ	ձյ	բղ	ձյ
հնչ.	2	3	9	11	1	1	2	5	6	-	4	5
քեր.	բլ	անվ	բլ	անվ	բլ	անվ	բլ	անվ	բլ	անվ	բլ	անվ
	-	-	1	4	5	3	5	3	11	10	2	4

Օճանդություն: Աղյուսակը, ըստ հնչյունական ու ձևաբանական մակարդակների, քանակական տվյալներ է ներկայացնում ընդհանուր բնույթի և խմբակցություններում գրեթե հավասար տարածում ունեցող հատկանիշների, ապա արևելյան ու արևմտյան խմբակցություններին հատուկ և դրանցից մեկում կամ մյուսում առավել տարածված հատկանիշների վերաբերյալ:

րևմտյաններում տարածված 13 ու արևելյաններում տարածված 10 բայական հատկանիշներով, իսկ գրեթե հավասար տարածում ունի ընդամենը մեկ նման հատկանիշ (*Ե խոն պարզ բայերի ոչ ցոյական կատարյալ /95/*՝ 10,5-9): Գրեթե հավասար տարածում ունեցող անվանական հատկանիշները 4-ն են, արևմտյաններում տարածված անվանական հատկանիշները 14-ն են, արևելյաններում տարածվածները՝ 6-ը: Խմբակցությունները ավելի քիչ տարբերություններ ունեն ձայնավորական հատկանիշներով. գրեթե հավասար տարածում ունեցող ձայնավորական հատկանիշները 11-ն են,

արևմտյաններում տարածվածները՝ 5-ը, արևելյաններում տարածվածները՝ 6-ը: Հավասար տարածում ունեցող բաղաձայնական հատկանիշները 9 են, արևմտյաններին բնորոշները՝ 10-ը, արևելյաններին բնորոշները՝ 3-ը: Փաստերը վկայում են, որ ընդհանուր առմամբ արևելյան և արևմտյան խմբակցությունները ունեն ավելի շատ քերականական, քան հնչյունական տարբերություններ:

Գրեթե ողջ բարբառային հայերենն ընդգրկող բաղաձայնական երկու հատկանիշներն էլ առաջ են եկել լեզվի պատմական զարգացման ընթացքում: Դրանցից առաջինը՝ *ոչ բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ իլություն (բ,գ,դ,ձ,ջ – փ,ք,թ,ց,չ)* (4), իր արտահայտությունը չունի 120 բարբառախոս վայրերից 13-ում: Երկրորդը՝ *Ֆ-ի առկայություն* (21), բացակայում է 120 վայրերից 26-ում: Ընդհանուր բնույթի ձայնավորական երեք հատկանիշներից երկուսը նույնպես լեզվի պատմական զարգացման ընթացքում առաջացած իրողություններ են: Դրանցից մեկը՝ *միավանկ բառերի սկզբնային ե-ից առաջ յ-ի հավելում /ե-յէ/* (32), իր արտահայտությունը չունի 24 բարբառախոս վայրերում: Մյուս հատկանիշը՝ *միավանկ բառերի սկզբնային ո-ից առաջ շրթնային տարրի հավելում /ո – վօ, վէ, , ուօ, ուէ/* (33), իր արտահայտությունը չունի 20 վայրերում: Նկատելի է, որ ձայնավորային այս երկու հատկանիշները բացակայում են գրեթե նույն տարածքներում¹², որը կարող է վկայել այդ տարածքների խոսվածքների համար ավելի ընդհանուր մի իրողության առկայության մասին, ինչպես նաև այլ տարածքներում այդ երկու իրողությունների դրսևորումների փոխկապակցվածության մասին: Գրեթե ընդհանուր ընդգրկում ունեցող ձայնավորական երրորդ հատկանիշը՝ *քմայնացած ձայնավորների /ա, ո, օ, ու/ առկայություն* (34), ունի տարատեսակ դրսևորումներ, հնչյունական, որոշ դեպքե-

¹² Պոլիս, Կեսարիա, Մասունի բարբառների խոսվածքներ, Մալաթիա, Ջեյթուն-Մարաշ, Տալվորիկ-Մոսկան, արևելյան խմբակցության Մեղրու, Ագուլիսի, Հավարիկի բարբառներ և այլն:

րում՝ արտալեզվական պայմանավորվածություններ: Այս հատկանիշը իր արտահայտությունը չունի 19 բարբառախոս վայրերում:

Արևելյան ու արևմտյան բարբառախմբերում գրեթե հավասար տարածում ունեցող հնչյունական հատկանիշները հայերենում արձանագրված պատմական զարգացումների կամ հնարավոր փոխազդեցական հնչյունափոխությունների դրսևորումներ են, նաև այլ լեզուների ազդեցությունների արդյունք: Հայերենի պատմական զարգացման տարբերակային իրողություններ են ներկայացնում *բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլություն* (3), *ոչ բառասկզբի շնչեղ խուլերի ապաշնչեղության առկայություն* (7), *բառասկզբի հ-ի դիմաց ոչ առնմանական խ* (16), *շեշտակիր այ-ի դիմաց առաջին շարքի ձայնավոր* (26), *յու-ի դիմաց ոչ շրթնային ձայնավոր* (28) և այլ հատկանիշներ: Երկու խմբակցությունների տարբեր միավորներում փոխազդեցական ու դիրքային հնարավոր հնչյունափոխությունների դրսևորումներ են *տ-ի առնմանական փոփոխություն* *ն,ր,ռ ձայնորդներից առաջ* (11), *կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում* (13), *բառասկզբում՝ ո-ից առաջ հ-ի դիմաց շրթնային շփական* (17), *խ-ի դիմաց տարնմանական հ* (18) և այլ հատկանիշները: Այլ լեզուների ազդեցությամբ են ի հայտ եկել *հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի առկայություն* (20), *ռ-ի և ր-ի շփոթություն ոչ նախաբաղաձայնական դիրքում* (23) և այլ հատկանիշներ: Երկու բարբառախմբերում գրեթե հավասար տարածում ունեցող քերականական հատկանիշները հիմնականում հայերենի անվանական համակարգի հնարավորությունների պատմականորեն ձևավորված իրացումներ են՝ *նի և նրանով բաղադրված հոգնակերտներ* (52), *ց-ով բացառական* (59), *վերլուծական բացառական և գործիական* (60,62):

Բարբառային հատկանիշների տարածական դրսևորումները հետաքրքրական պատկեր են ներկայացնում ըստ բարբառների արևմտյան և արևելյան խմբակցությունների: Խմբակցություններից մեկին կամ մյուսին բնորոշ հատկանիշները հանդես են գալիս իբրև

հիմնական տարբերակիչ իրողություններ, որոնք, որպես կանոն, վկայում են բարբառախմբերում առկա ինքնուրույն զարգացումների մասին¹³: Այսպես, բարբառների արևմտյան խմբակցությանն են հատուկ *բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ խլություն* (1)¹⁴, *բառասկզբում խուլերի դիմաց ձայնեղների գործածություն* (5)¹⁵, *միջձայնավորական բաղաձայնների ոչ սաստկական և ոչ առնմանական կրկնություն* (12), *որևէ դիրքում հ-ի դիմաց յ, ղ-ի առկայություն* (14), *բառասկզբի դ-ի դիմաց խ-ի առկայության* (19), *ը-ի քմայնացածություն* (22) հնչյունական հատկանիշները: Այդ խմբակցությանը բնորոշ անվանական տասը հատկանիշներից երեքը դրսևորվում են բարբառախոս գրեթե բոլոր վայրերում: Դրանցից *վի և նրանով բաղադրված հոգնակերտներ* (51) հատկանիշը բացակայում է Սիվրիհիսարում, Բեյլանում և Վարդենիսում, *անորոշ հոդի էտադասություն* (71) հատկանիշը չի դրսևորվում Ամասիայում և Վարդենիսում, իսկ *դերանունների թեք հոլովածներում ի-ի առկայություն* (65) հատկանիշը չի արձանագրվել Գեղիեգուզանում և Բաստում: Արևմտյաններում մեծ տարածում ունեցող հաջորդ հատկանիշներն են՝ *բացառականի ձևերում մ-ի առկայություն* (63), */ի/կ-ով դերանվանական ձևեր* (66), *ստան, ստար և նրանցով բաղադրված հոգնակերտներ* (54) և *զ նախդրի գործածություն* (72): Այս խմբակցությունում քիչ տարածում ունեն *շուն, տուն բառերի արտաքին թեքմամբ հոլովում* (57), *ցուցական դերանունների երկադիմություն* (68), *արդի գրական լեզուների էտադաս կապերի նախադաս գործածություն* (73) հատկանիշները: Խմբակցության բարբառներին բնորոշ բայական 11 հատկանիշներից առավել ընդհանուր բնույթ ունեւեն *կու-ով ներկա* (78), *առաջին և երկրորդ /ել և իլ/ լծորդությունների անսաձանց բայերի խոնարհ-*

¹³ Հասկանալի է, որ հատկանիշի՝ խմբակցություններից մեկին բնորոշ լինելը չի նշանակում, թե այն հատուկ է տվյալ խմբակցության բոլոր միավորներին:

¹⁴ Արևմտյան խմբակցությանը բնորոշ առավել քիչ տարածում ունեցող այս հատկանիշը ընդգրկում է 9 բարբառախոս վայր:

¹⁵ Ի տարբերություն նախորդի՝ այս հատկանիշը արևմտյան խմբակցությունում լայն տարածում ունի (52 բարբառախոս վայր):

ման ձևերի տարբերակվածություն (76) և *բ-ով վաղակատար* (85) հատկանիշները: Ջգալի տարածում ունեն *ուլ լծորդության առկայություն* (77), *շարունակական ներկա* (81), *ուկ-ով հարակատար դերբայ* (86) հատկանիշները: Բայական այլ հատկանիշներ՝ *ներկայի այլ մասնիկների առկայություն* (79, 80), *ման-ով դերբայ* (84), *անցողական անածանց բայերի կատարյալի հոգնակի 1-ին դեմքի ա ձայնավորով վերջավորություն* (94), *ժխտականի բաղադրյալ ձևերի կրկնադիմություն* (98), մյուսներից պակաս տարածում ունեն:

Արևելյան խմբակցությանը բնորոշ հատկանիշները քիչ են: Դրանցից մեկը բաղաձայնական է՝ *բաղաձայնահաջորդ ն-ի պահպանվածություն* (24), մեկը՝ ձայնավորական՝ *նախավերջնավանկային շեշտակրություն* (49): Արևելյան բարբառներին առավել բնորոշ և ընդհանուր անվանական հատկանիշը *ոււ-ով ներգոյականի առկայություն* է (64)¹⁶: Այս խմբակցությանն են բնորոշ նաև *անձի և իրի առումների տարբերակում* (74), */ն/եր-ով հոգնակիի Բ հոլովում* (56) հատկանիշները: Արևելյաններին բնորոշ բայական հատկանիշներից համեմատաբար տարածված են *ոււ-ով ներկա* (82), *լիս-ով ներկա* (83), *ժխտական մասնիկների հետադաս գործածություն* (97) հատկանիշները: Ավելի քիչ տարածում ունի *այլ տիպի դերբայներով բաղադրյալ ապառնի* (91) հատկանիշը, շատ քիչ է հանդիպում *բաղադրյալ կատարյալ* (96) հատկանիշը:

Հիմնականում արևմտյան կամ արևելյան խմբակցություններում տարածված հատկանիշների դիտարկումները երևան են բերում տարբեր իրավիճակներ: Շատ դեպքերում առկա է ուղղակի լեզվական իրողության տարածական ընդգրկման տարբերություն՝ թերևս պայմանավորված բարբառային միավորների զարգացման յուրահատկություններով ու պայմաններով: Այդպիսիք են, օրինակ, առավելաբար արևելյաններում տարածված *բառասկզբում հավելական շնչի առկայություն* (15), *Ե լծորդության բայերի ըզձականի եզ. երրորդ դեմքում է-ից տարբեր վերջավորություն* (87) հատկանիշները և առավելաբար արևմտյաններում տարածված *է/ն-ով*

¹⁶ Այս հատկանիշը չունեն Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառները:

/կամ ան-ով/ բացառական (58)¹⁷, հատկացուցչի հոդառություն (70) հատկանիշները: Այլ դեպքերում հատկանիշը կայուն դրսևորվում է բարբառախմբերից մեկում, իսկ մյուսում որպես կանոն մասնակի դրսևորումներ ունի (նոր սկզբնավորվող է կամ մարող): Այսպես, *ոչ բառասկզբի խուլ պայթականների ու կիսաշփականների ձայնեղություն (6)* և *նզն, նկն-ի դիմաց յն (9)* հատկանիշները կայուն դրսևորումներ ունեն արևմտյան բարբառներում (տարածման 62 և 42,5 ցուցիչներով) և մասնակի՝ արևելյաններում (16,5 և 11 ցուցիչներով), իսկ *ձայնավորների ներդաշնակության առկայություն (38)* և *օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի ա-ով ձև (88)* հատկանիշները կայուն դրսևորումներ ունեն արևելյան բարբառներում (համապատասխանաբար 30 և 36 ցուցիչներով) և մասնակի՝ արևմտյաններում (17,5 և 13,5 ցուցիչներով): Խմբակցություններից մեկում լայն տարածում ունեցող հատկանիշի առկայությունը նաև մյուս խմբակցության որոշ միավորներում երբեմն կարող է բացատրվել տարածական մերձավորությամբ: Օրինակ, առավելաբար արևելյաններում տարածված *օժանդակ բայի անցյալ անկատարի երկ-ձայնավոր ձևերի մեջ ձայնավորներից մեկի տղում (89)* հատկանիշը դրսևորվում է նաև տարածականորեն մերձավոր արևմտյան Սշո, Վանի, Դիադինի բարբառներում:

Եզրակացություններ

Բարբառային հայերենի սակավաթիվ հատկանիշներ ունեն լայն տարածում և ընդհանուր բնույթ. դրանք հիմնականում լեզվի պատմական զարգացմանն առնչվող հնչյունական իրողություններ են: Հատկանիշները դրսևորումների զգալի տարբերություններ են հանդես բերում ըստ արևելյան և արևմտյան խմբակցությունների: Հարյուր հատկանիշների շրջանակում մոտ չորս տասնյակ հատկանիշներ բնորոշ են արևմտյան բարբառներին կամ առավելաբար տարածված են դրանցում, իսկ քսանհինգ հատկանիշներ վերաբե-

¹⁷ Ճիշտ է, այս հատկանիշն ընդգրկում է արևմտյան բոլոր բարբառախոս վայրերը, բայց և զգալի տարածում ունի նաև արևելյաններում, տարածման ցուցիչը՝ 31:

րում են արևելյան բարբառներին: Երկու խմբակցությունները միմյանցից տարբերվում են ավելի շատ ձևաբանական (հատկապես՝ բայական), քան հնչյունական հատկանիշներով: Խմբակցություններից մեկին կամ մյուսին բնորոշ իրողությունները տարբերակիչ հատկանիշներ են, որոնք վկայում են բարբառախմբերում առկա ինքնուրույն զարգացումների մասին: Մի խումբ հատկանիշներ գրեթե հավասար տարածում ունեն երկու բարբառախմբերում: Այդ կարգի հնչյունական հատկանիշները հայերենում արձանագրված պատմական զարգացումների կամ հնարավոր փոխազդեցական հնչյունափոխությունների դրսևորումներ են, նաև այլ լեզուների ազդեցությունների արդյունք, իսկ քերականական հատկանիշները հիմնականում հայերենի անվանական համակարգի հնարավորությունների պատմականորեն ձևավորված իրացումներ են:

Օգտագործված գրականություն

Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն.- Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911, 307 էջ:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1972, 347 էջ:

Սարգսյան Ա., Հայոց լեզվի բարբառային ատլաս, Պրակ Ա, Ե., 2008, հեղ. հրատ., 37 էջ, 18 քարտեզներ:

Katvalyan Viktor - An attempt to group dialect features (by territorial coverage). - There are some rules for the territorial distribution of linguistic features in the eastern and western groupings of Armenian dialects. Of a hundred features, about 40 are characteristic of Western dialects or are most often found in them, and 25 of them belong to Eastern dialects. The distinctive features of the two groups are morphological rather than phonetic.

Keywords: dialect, feature, eastern, western, dialect group, phonetic, grammatical, area.

Katvalyan Victor, Doctor of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Advanced Researcher. viktorkatvalyan@mail.ru

Катвалян Виктор - Попытка сгруппирования диалектных признаков (по территориальному охвату). - Существуют некоторые правила территориального распределения языковых признаков в восточной и западной группировках армянских диалектов. Из ста признаков около 40 характерны для западных диалектов или наиболее часто встречаются в них, а 25 из них относятся к восточным диалектам. Отличительные признаки двух группировок скорее морфологические, чем фонетические.

Ключевые слова: диалект, признак, восточная, западная, диалектная группа, фонетическая, грамматическая, ареал.

Катвалян Виктор, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, ведущий научный сотрудник.
viktorkatvalyan@mail.ru

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅ. ՀԱՐԿ- < ՀԵ. *(H)a/ork/g-t-*

DOI: 10.54412/2738277X-2021.1-60

Համբարձումյան Վազգեն

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գլխավոր գիտաշխատող. vazgengurgeni@mail.ru

Բանալի բառեր. ստուգաբանություն, խեթերենի և կելտական լեզուների տվյալների օգտագործում, հայերեն *հարկ-ան-եմ* բայի ծագման նոր մեկնություն, հիմք-լեզվի արմատի և ցեղակից լեզուների ձևերի միջև անցման օղակների առանձնացում:

Ներածություն

Ընդհանուր վերնագրով այս աշխատանքը հայերենի կառուցվածքում նախահունչ *q-//ø-* (գրո), *q-//h-* հակադրությամբ արմատի քննություն է՝ հիմնված ոչ միայն նախկինում կատարված, այլև առավելապես նոր առաջ եկած, բայց չօգտագործված տվյալների վրա: Հայերենի ստուգաբանական քննությունների տվյալները ցույց են տալիս, որ արմատի լծորդական բաղադրիչներ են առաջ գալիս այնպիսի մասնիկներով, ինչպիսիք են *q*, *h* և այլն, որոնց առկայությունը արմատի կազմում հակադիր է բացակայությանը (հմմտ. praef. -R//ø-R կամ ø-R //praef.-R):

Հայտնի է, որ հայերեն մի շարք արմատներ գրավոր շրջանի աղբյուրներում ներկայացնում են *q-//ø-* (գրո), ինչպես նաև *q-// h-*, *ø-*(գրո)// *h-* հակադրություն (գուգաձևություն). հմմտ. մի կողմից՝ *q-qալ* (*q-qոն*- [**qqաւն*])//*qալ* (< հե. **uadh-mi*), *q-qէնում* (<*q-qէստ* «հագուստ») // **qէստ* (<հե. **ues-*), *q-արմ*//*արմ*, որից՝ *զարմանամ*//*արմանամ* (<հե. **or-mo-*) և այլն, իսկ մյուս կողմից՝ *անդ*//*հանդ*

* Ներկայացվել է 29.07.2021, գրախոսվել՝ 24.09.2021:

«(մշակովի) դաշտ» (<հե. *Hand^[h]- «ուտելի բոյս»), *գարկանեմ/հարկանեմ* (<*արկանեմ*) և այլն:

Այս հոդվածում առանձին անդրադառնում ենք *հարկանեմ/գարկանեմ* (<*արկանեմ*) զուգաձևերի միջև ձևային և իմաստային առնչությանը [հմմտ. (praef.)-R//praef.-R (< ø-R)]՝ համեմատությամբ ցեղակից մյուս լեզուների (առանձնապես՝ հին հնդկերենի և կելտական լեզուների). նոր տվյալները հայերենի համար ստեղծում են լրացումների և ճշգրտումների հնարավորություն:

Չուգաձևերի ձևային և իմաստային առնչությունը

ա) Ըստ դասական համեմատաբանության տվյալների՝ հայ. *հարկ*- արմատի պարզ ձևն է *հար*-, որ ծագում է հե. *per- «գարկել, խփել» արմատից, և որի ձայնդարձով ձևերն են՝ *per-, *pɾ-, իսկ աճականով ձևերը՝ *perg-, *porg-, *pɾg-, այլն *spher-, *spherg-. այս մոտեցումը գալիս է դեռևս Հյուբշմանի նախորդներից: Ըստ Աճառյանի՝ «հայերեն *հար*- ծագում է *pɾ - ձևից, իսկ *հարկ* < *pɾg- ձևից». և տալիս է զուգահեռներ ցեղակից լեզուներից (լիտվ. periu, periaù, perytis «թափիչով խփել. լողացնել», լատվ. per'ù, pè'ri «ճիպոտներով ծեծել». հսլավ. perǫ, prati «ծեծել, լվանալ» և այլն)¹:

բ) Ավելի ուշ ինդրին անդրադառնում է Գ. Ջահուկյանը, որ հնարավորություն ուներ վերանայելու ավանդական մոտեցումը հայ. *հարկանեմ* և նրան լծորդ ձևերի ծագման աղբյուրի ճշգրտման հարցում, քանի որ հայտնի էին ոչ միայն հին հնդկերենի, կելտական լեզուների տվյալները, այլև խեթերենի երևան եկած համարժեքները: Սակայն դա տեղի չի ունենում, քննությունը մնում է ավանդականի սահմաններում: Ըստ այդմ՝ Ջահուկյանը նախընտրում է արմատի ծագումը հանգեցնել նախալեզվի երկրորդ՝ *pɾg-

¹ Հմմտ. H. Hübschmann, *Armenische Grammatik*, Leipzig, 1895 [= Հ. Հյուբշման, *Հայերենի քերականություն*, Ե., 2003, էջ 464]: Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 53:

(<*perg- «խփել») տարբերակին, անցյալի հիմքը՝ *հարի*, դարձյալ համեմատելով բալթյան-սլավոնական ձևերի հետ²:

զ) Այնուհետև, նախքան այդ նկատել են, որ գոյություն ունի ծագումնային առնչություն խեթ. *hark-* «ոչնչանալ, կոտորվել, կորչել», իռլ. *org-* «սպանել, ոչնչացնել, ավերել» և հայ. *հարկանեն* «խփել» (վերջինիս իմաստը ըստ 5-րդ դ. գրական լեզվի), որ, անշուշտ, իրական հիմք է հայերենի և ցեղակից այդ և մյուս լեզուների միջև ծագումնային առնչությունների ըստ հնարավորին ձևային և իմաստային նոր մեկնաբանությունների համար³:

Սակայն նկատված է, որ խեթ. *hark-* «ոչնչանալ, կոտորվել, կորչել» իմաստը ավելի հետին է, քան որ այդ պարզ արմատը նախապես ունեցել է «սպանել» իմաստը. նույնիսկ ըստ Պեդերսենի, ավելի ընդհանուր իմաստ՝ «վնասել»⁴: Խեթերենի ներսում նկատվող իմաստային այս զարգացումը (մինչև լեզվի գրի առնվելը) օրինակ է նման քննության հայերենի նախագրային վիճակի համար՝ բայարմատի իմաստաբանական զարգացման, այլև առհասարակ նման երևույթների քննության պարագայում:

դ) Ավանդաբար լեզուներում առկա «խփել, ծեծել» հատկանիշի հիման վրա զուգահեռ է անցկացվում նաև գերագույն ուժի (որոտի) նույն գործառույթի համաբանությամբ՝ գործողության (nōmen actiōnis) («հարվածել. հարված») և գործիչի (nōmen auctōris) («որոտ. Որոտի աստված») միջև. ըստ այդմ՝ բերվում են օրինակ-

² Г. Джаукян, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ереван, 1965, էջ 88 և այլն: Ի դեպ՝ ավանդականի սահմաններում նման մի օրինակ տալիս է Ֆոգտը, երբ փորձում է հայ. *երկու* թվականի և *երկուտասան*, *երկիցս* ձևերի հիման վրա հաստատել նախահնդեվրոպական *ǵ/*o/*i հերթագայություն (*երկու* <*ǵwō, *երկու* <*ǵwo, *երկի* <*ǵwi-), տրադիցիոն (անքննադատ) ձևով գտնելով, որ հայ. *երկու* ձևը ծագում է հե. *ǵwō արմատից, որ ներկայումս առարկելի է (Ֆոգան ինքն էլ է նշում, որ «առաջին հայացքից թվում է տարօրինակ»): Տե՛ս Գ. Փոգտ, *Индоевропейские языки и сравнительные методы* .- "Вопросы языкознания", 1971, 4, էջ 37:

³ А. Сипу, *Linguistique du Hittite* .- "Revue hittite et asianique", 1934, II, F. 1247, p. 205 (հղումը ըստ Վյաչ. Վս. Իվանովի ստորև նշվող գրքի, էջ 80):

⁴ Տե՛ս Բ. Կյաչ. Իվանով, *Индоевропейские корни в хеттском языке*, М., 2007, էջ 79-80:

ներ. հմմտ. ընդհ.սլավ. *Perunŏ «որոտի աստված», լիտվ. Perkūnas (նույնը), լատվ. Pērķūnas (նույնը) և այլն. այս բացատրությունը, թերևս, հենվում է նախորդների տեսության վրա՝ ավանդական քրնությունը և բառարանագրմամբ⁵: Այդպես նաև հետագա աշխատանքներում բալթյան-սլավոնական ձևերը, օրինակ, ծագում են հե. *p^[h]erk^[h]o-//*p^[h]eru- տարբերակային արմատից (առաջինը՝ *k^[h]o- ածանցով հիմք). նախնական մտածողության հիմքում՝ «կաղնի», «ժայռ», որին հարվածում է որոտը (կայծակը և այլն)⁶: Այս համեմատության մեջ, կարելի է կարծել, որ բնական է համարվել ներառել հայերենի նյութը. *հար-կ-//հար-ի* իմաստային զարգացմամբ և հետևյալ անցումներով՝ «խըփել, հարվածել»>«կաղնի. ժայռ» (?):

Սա առարկելի է, քանի որ. կարծում ենք, հե. *p^[h]erk^[h]o-//*p^[h]eru- արմատին ավելի շուտ առնչվում է *հերկ-ել//հերձ-ել* (նախնականը իմաստը՝ «կիսել, երկատել, բաժանել», ուշ՝ «(հողը) վարել. պատռել, ճեղքել») տարբերակային արմատը. Աճառյանը դրանք համարում է «անստույգ բառ», իսկ Գ. Ջահուկյանի տարբեր տարիներին գրված աշխատություններում այդ արմատները կա՛մ մասամբ են ստուգաբանված (տրադիցիոն մոտեցմամբ), կա՛մ համարվում են «հավաստի ստուգաբանություն չունեցող»⁷: Այնինչ, նրկատի ունենալով այս թեմային վերաբերող նորագույն տվյալները, կարծում ենք, որ *հար-կ- // հար-ի* արմատի ծագումն առնչվում է հե. *(H)a/ork/g-t- արմատին: Նման առաջարկի հիմքը ամենից առաջ համեմատությունն է իեթական և կելտական լեզուների հա-

⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 55: Այս կետում հարցը պիտի քննվի այլ տեսանկյունից, որին այս հոդվածում չենք անդրադարձնում:

⁶ **Т.В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры**, I-II, Тбилиси, 1984, էջ 614-615, 792-793 և այլն:

⁷ **Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան**, հ. 3, էջ 56-58: **Г. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка**, էջ 181, 191 և այլն: **Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան**, Ե., 1987, էջ 144: Նույնի՝ *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 458-459: Հմմտ. **Վ. Համբարձումյան, Հայերենը և կելտական լեզուները**, Ե., 2020, էջ 200: Այս տարբերակային արմատներին անդրադառնալու ենք առանձին:

մարժեքների հետ, ընդ որում ոչ միայն արմատի հնչյունական կազմի, այլև հիմքակազմիչ մասնիկների զուգադիպումը, մանավանդ հայերենի և իտալականի դեպքում [խեթ. *harnink* - *hark-*, հայ. *հարկանեմ* - *հարկ* (*հար*-)]:

ե) Թե՛ ավանդաբար եկող և թե՛ վերջինիս հիման վրա ձևակերպվող տեսության համաձայն հե. *per- // *perg- (նոր՝ *p^[h]erk^[h]o- // *p^[h]eru-) արմատը նախնական իմաստով նշանակում է «զարկել, խփել. ծեծել», որը, ինչպես կտեսնենք ստորև, առարկելի է, որովհետև նախնական չէ, այլ հետագա ձեռքբերում է:

Նշենք, որ ավելի նախնականը պիտի եղած լինի «բաժանել, կիսել, երկատել՝ ճեղքել» իմաստը, որ «համարժեք» է մեկ այլ արմատի նույնպիսի իմաստի հետ. հմմտ. *հերկ-եմ* «առը շուռ տալ»// *հերձ-եմ* (*հերձ-ան-եմ*, *հերձ-ն-ում* «կիսել, երկատել», «ճեղքել, պատռել» և այլն). դասական համեմատաբանության մեջ տեղիք է տվել, այսպես կոչված, իմաստային բաղարկության (կոնտամինացիայի): Մյուս կողմից՝ արձանագրվում է այն, որ հնդեվրոպական պատումներում («ասքերում» և այլն) որոտի («ամպրոպ», «կայծակ» և այլն) հարվածը ժայռին (կաղնուն) ձևանում է բանաստեղծական պատկերացումներում, որը, թերևս, համեմատաբար ավելի ուշ ժամանակների կարող է լինել:

Համեմատություն ցեղակից լեզուների հետ

ա) Մինչև իտալական լեզուների տվյալների ներառելը հընդ-եվրոպաբանության մեջ այն տեսությունն էր իշխում, թե լեզուների քերականական կառուցվածքի գրեթե ամեն կարգի իրողություն հնարավոր է բացատրել, օրինակ, հին հնդկերենի տվյալների հիման վրա: Մակայն հետագա քննությունները ցույց տվեցին, որ նախալեզվում նկատելի են նաև երևույթներ, որոնց մեկնաբանումը միայն հին հնդկերենով բավարար չէ:

Խեթալուվական, այլև թոխարական և արևելաիրանական լեզուների շատ փաստեր նոր հարցադրումների շեմ են բացում. իսկ

դա լրացուցիչ խթան է հայերենի տվյալներին ևս դարձնելու ավելի լայն ուշադրություն:

Նման մի օրինակ է հայ. *հարկ-* (*հարկ-անեմ*, *հար-ի* և այլն) արմատի ծագումնային առնչության քննությունը անցյալ դ. 30-ական թթ. գրված աշխատանքներում (Ա. Կունի, Հ. Պեդերսեն և ուրիշներ), որոնց հետագայում, ինչպես նշվեց, ավելանում է խեթ. *hark-* «կորչել», *har-nin-k-* (*հար-* արմատի միջաձանցական տարբերակ. հմմտ. հայ. *հարկ-անեմ*) (ընդ սմին բայի կերպային-տիպային ձևեր՝ *harninkišk*, *harganu-*, *harninkuṣar-* «մահ» և այլն) և այլ ձևերի քննությունը: Այս երևույթին ժամանակին անդրադարձել է Վյաչ. Իվանովը, որը հայտնի չէր մինչև վերջին ժամանակներս⁸:

բ) Ըստ այդմ՝ հայ. *հարկանեմ* (*հարկ-ան-եմ*) ձևը զուգահեռ է դիտվում իռլանդերենի (անցյալ ժամանակի եզ. 3-րդ դ.) *ort* (< *orcht*) [*(H)org-t] և խեթ. *har-ak-ta* (իմա՝ *harkt*) ձևերին. Իվանովը, հղելով նաև Լուիսին և Պեդերսենին, գրում է. «Այս ընդհանուր կելտական արմատից առաջ եկածներից ամենից շատ ուշագրավ են *or-n*, *orgon*, որ հանգում են (հե.) *(H)org-na արմատին, որտեղ ռնգային վերջածանցը կարող է կապված լինել ռնգային ածանցին՝ խեթերենում և հայերենում, այդ նույն արմատի կազմում»⁹:

Ուստի հայ. *հարկանեմ* և ցեղակից մյուս (խեթական, կելտական) ձևերի նոր քննությունը՝ արմատի և նրան ավելացող ձևակազմական բաղադրիչների նշումով, կարևոր է հիմք-լեզվի և հետագա ձևերի ժամանակագրական անցումների մասին ավելի իրական պատկերացում ունենալու համար:

գ) Նկատենք, որ հայ-խեթական զուգադիպություն գոյություն ունի ոչ միայն արմատի, այլև ռնգային միջաձանցման դեպքում. «Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ խեթականում *-ni-*

⁸ Տե՛ս **Вяч. Иванов**, նշվ. աշխ., էջ 79-83:

⁹ Նույն տեղում, էջ 82: Տե՛ս նաև **Г. Льюис, Х. Педерсен**, *Краткая сравнительная грамматика кельтских языков*, М., 1954, էջ 445:

ածանցի և *-nin-* միջածանցի հայերենում զուգահեռությունը համապատասխանում է *-նու-* և *-անե-* զուգահեռությունը»¹⁰:

Այս իրողությունը, ինչ խոսք, հետաքրքիր է հայերենի միջածանցման երևույթի հնատիպության բնութագրման տեսանկյունից, ինչպես նաև ըստ այնմ, թե դրանց կարգային (կատեգորիալ) համընկումն ինչ ընթացք է ունեցել լեզուների ինքնուրույն պատմության մեջ [ըստ Իվանովի՝ հմմտ. հայ. *հարկ-ան-եմ* «խփում եմ», հինդկ. *ri-nā-k-tl* «թողնում է», լատ. *li-n-quo* «լքել», իւեթ. *ḡar- ni-k-mi/ḡar(a)-nu-*)]¹¹:

դ) Կունիի, հետագայում, ըստ Իվանովի. *հար-կ-*, իւեթ. *ḡark-*, կելտ. *or-n, orgon* [<հե. **(H)org-na*] ձևերի զուգադրման հարցի լուծումը հանգում է նրան, որ «իւեթերենում *-nu-* վերջածանցի և *-nin-* միջածանցի զուգահեռությունը համընկնում է հայերենում *-նու-* և *-անե-* ածանցների զուգահեռությունը: Նկատի ունենալով այս փաստերը՝ ենթադրելի էլ, որ իւեթերենի կանոնավոր համընկնումը ռնգային *-nin-* միջածանցին պիտի լինեն հայերենում *-անե-* ածանցով հիմքերը: Ուստի իւեթ. *ḡarnink-* և հայ. *հարկանեմ* համընկնումը ձևի տեսանկյունից միանգամայն օրինաչափ»¹² է: Իսկ հնչյունական կազմի տարբերությունը պիտի եղած լինի այդ լեզուների ինքնուրույն զարգացման ընթացքում. կելտականը ներկայացնում է արմատի պարզական ձևը, (նախահունչ կոկորդայինի (**H*) բացակայությունը), այլն՝ արմատի ձայնավորին նախորդող կոկորդային արտացոլում իւթականում և հայերենում, որ ևս օրինաչափ է:

Ցեղակից լեզուների տվյալների գնահատությունը

ա) Նոր վերականգնվող հե.**(H)a/ork/g-t-* ընդհանուր արմատը ներկայանում է տարբերակումով, իւթահայկականի դեպքում՝ հե.

¹⁰ Вяз. Иванов, նշվ. աշխ., էջ 82: Հեղինակը նկատի ունի, օրինակ, հայ. *ամնում* «վերցնել» և *էլանեմ* «ելնել» տիպի բայերի հիմքի կազմության միջածանցական տիպը՝ խոնարհիչ ձայնավորով հանդերձ:

¹¹ Նույն տեղում, էջ 83:

¹² Նույն տեղում, էջ 82 (հղում՝ Brugmann, *Grundriss*. Bd. II, t. 3, p. 315):

*(H)ark-t-, իսկ կելտականի դեպքում՝ հե. *(H)org-t-, ընդ որում կարելի է ենթադրել, որ առաջին տարբերակը ավելի հին է, քան երկրորդը, եթե նկատի ունենանք մի կողմից՝ կոկորդային *H-ի առկայություն/բացակայություն հասկանիչի դրսևորումը (բերվում է փակագծում՝ իբրև կամընտրական՝ ֆակուլտատիվ), մյուս կողմից՝ a/o լրացական ձայնավորման և հետնալեզվային k /g լծորդության գոյության հետ, որ առանձին քննության են արժանի՝ զարգացման ժամանակային փուլերի (օղակների) մեջ:

բ) Ավանդական վերականգնումով արմատի *p-ի փոխարեն հանդես է գալիս կոկորդային *H, որ կարող է հիմք հանդիսանալ մի այնպիսի վարկածի, ըստ որի արմատի նախահունչ դիրքը թույլ է եղել, որ հայերենում, խեթականում և կելտականում սկզբից նեթ եղել է կոկորդային, ոչ թե շրթնային արտասանության դիրք. վարկած է այն, որ այս արմատի դեպքում հե. *p-ն այլ է, քան հե. *H-ն, որի նախնական (ավելի հին) լինելը պահում են խեթական լեզուները և հայերենը:

գ) *Հարկանեմ//զարկանեմ* լծորդների մեջ *h//q* սկզբնամասբաղադրիչները այլ ծագման են: Ավանդաբար նկատված է, որ *q*-ն ծագում է հե. *g'hō «հետևում, հետո, համար» (ըստ Ջահուկյանի՝ «վաղնջահայերեն» *jō) մասնիկից (հայերենում այն հոլովական «ցուցիչ» է կամ նախածանց)¹³: Ուստի կարելի է կարծել, որ հիշյալ լծորդությունը հետագա, այսպես կոչված, գուգիմաստություն է, երբ *հարկանեմ*-ը «վնասել. սպանել» իմաստից անցել է նոր «խփել, զարկել» իմաստին (հմմտ. *արկանեմ* «զցել. դնել» և այլն):

դ) Ուշադրության է արժանի նաև, որ հայ. *հարկանեմ* բայի անցյալի հիմքը արմատական է (*հարկ>հար-*). հմմտ. վալլերեն *dyni-or-n* (<-or-<-org-) «մարդ սպանելը», իսկ իռլանդերենի անցյալ ժամանակի ձևն է՝ -ort -orcht. Խեթականում՝ արմատական *hark-* ձևը¹⁴: Ուստի ընդհանուր արմատի հետնալեզվային բաղաձայնը կա՛մ սղված է, կա՛մ առկա խուլ //ձայնեղ տարբերակմամբ:

¹³ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, էջ 243:

¹⁴ Вяч. Иванов, նշվ. աշխ., էջ 82: Հմմտ. Г. Льюис, Х. Педерсен, նշվ. աշխ., էջ 447:

Եզրակացություններ

1. Հայ. *հարկանեն* (*զարկանեն*, *արկանեն*) բայի ծագումնային քննությունը նոր տվյալների հիման վրա նոր խնդիրների է առնչվում և ինչ-որ չափով ենթադրում է նույնպիսի լուծումներ:

2. Ավանդաբար առանձնացվող հե. *p > հայ. h (հմմտ. հե. *p > ph > f > h) օրենքին հակասում է հե. *H > հայ. h, խեթ. փ, կելտ. ø (զրո) համընկումը, թե՛ նոր խնդիր է առաջ բերում, որի վերջնական լուծումը պիտի հիմնված լինի լրացուցիչ փաստերի վրա:

3. Ամենից առաջ խեթական լեզուների տվյալները թույլ են տալիս մասամբ քննության առնելու նախորդ կետում նշված հարցադրումը (թեկուզ իբրև վարկած):

4. Հայերենի տվյալների հնավանդ (արխաիկ) լինելը (ինչպես խեթականի, թոխարականի, արևելահրանականի և այլն) արդի համեմատական-տիպաբանական լեզվաբանության համար (մի քանի տասնամյակ է, որ նկատելի է) ունի որոշակի կարևորություն:

Օգտագործված գրականություն

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977:

Համբարձումյան Վ. Գ., Հայերենը և կելտական լեզուները, Ե., 2020:

Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Ե., 2003:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I-II, Тбилиси, 1984:

Джаукян Г.Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1965:

Иванов Вяч., Индоевропейские корни в хеттском языке, М., 2007:

Льюис Г., Педерсен Х, Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954:

Фогт Г., Индоевропейские языки и сравнительные методы.- "Вопросы языкознания", 1971, 4, էջ 37:

Cuny A., Linguistique du Hittite .- “Revue hittite et asianique”, 1934, II, F. 1247:

Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig, 1895:

Hamardzumyan Vazgen-Etymology: Arm. *հարկ-* [hark-] “strike, beat; kill” < IE.*(H)a/ork/g-t-. In the article, based on the data collected from the Hittite and Celtic languages, it is stated that it is preferable to derive the origins of the Armenian word *հարկ-ան-եմ* [hark-an-em] “slay, kill; hit” related to the root *(H)a/ork/g-t- “slay, kill”.

Keywords: etymology, use of facts of Hittite and Celtic languages, new etymology of Armenian words *հարկ-ան-եմ* [hark-an-em] ‘strike, hit; kill’ < IE *(H)a/ork/g-t- “harm, injure; kill”.

Hamardzumyan Vazgen, Doctor of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Principal Researcher. vazgengurgeni@mail.ru

Амбарцумян Вазген-Этимология. арм. *հարկ-* [hark-] “бить; убить” < и.-е.*(H)a/ork/g-t-. В статье, исходя из новых данных хеттского и кельтских языков, предпочитается, что происхождение арм. слова *հարկ-ան-եմ* [hark-an-em] “губить; бить, убить” связывается с и.-е корнем *(H)a/ork/g-t- “губить; убить”.

Ключевые слова: этимология, данные хеттского и кельтских языков, новая этимология арм. слова *հարկ-ան-եմ* [hark-an-em] “бить, убить”.

Амбарцумян Вазген, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, главный научный сотрудник. vazgengurgeni@mail.ru

**ՀԱՅԵՐԵՆ «ԿԱՊԵՐՏ-ԿԱՐՊԵՏ» ԲԱՌԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ***

DOI: 10.54412/2738277X-2021.1-71

Հմայակյան Հասմիկ

պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. hhmayakyan@yahoo.com

Բանալի բառեր. կարպետ, կապերտ, հայերեն, իտերեն,
T^ՍGkaparta, T^ՍGkapartasamna, հիւսել, հյուսել, ասր, բուրդ:

Նախաբան

Հայկական լեռնաշխարհում կարպետագործությունը հին ավանդույթներ ունի¹: «Կարպետ» բառը (գրաբար՝ «կապերտ») հայերենում հիշատակվում է դեռևս Աստվածաշնչում. օրինակ, Աւետարան ըստ Մատթեոսի. «Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրութիւն նորա ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի»²: «Կապերտ» ձևով վկայված է նաև Յայտնութիւնում. «Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղև շարժումն մեծ, և արեգակն եղև սեաւ իբրև զկապերտ այծեայ, և լուսինն բոլորովին եղև արիւն»³: Այս և աստվածաշնչյան այլ վկայությունները դիտարկելով՝ ակնհայտ է, որ այն ընկալվում է

* Ներկայացվել է 30.08.2021, գրախոսվել՝ 23.09.2021:

¹ Հայկական կարպետագործության պատմության մասին առավել մանրամասն տես՝ Մ. Դավթյան, *Հայկական կարպետ*, Ե., 1975:

² **Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ:** Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրպայեան վարդապետի, Աւետարան ըստ Մատթեոսի, 9.10-32, 16, Վենետիկ, 1805:

³ Յայտնութիւն 6.1-16 ԺԸ 12:

որպես քուրձ, կտոր՝ այծի մազից հյուսված, բայց ոչ «կարպետ» ժամանակակից իմաստով:

Ստուգաբանության փորձ

«Կապերտ» բառը հայերենում հավաստի ստուգաբանություն չունի: Ըստ Աճառյանի՝ այն անհայտ ծագման բառ է, հանդիպում է վաղ մատենագրությունից սկսած⁴, և «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ նա ենթադրում է, որ այս բառը այլ ուստայնագործական եզրույթների հետ հնարավոր է փոխառյալ լինի ուրարտերենից, այդ թվում նաև «հիւսել» բայը, որին կանդրադառնանք ստորև⁵: Գ. Ջահուկյանը ևս այս տեսակետը հնարավոր է համարել⁶: Սկզբնական շրջանում «կապերտն» ընկալվել է ոչ թե որպես գորգի ենթատեսակ, այլ որպես «կապայի փերթ, պատառ պաստառի, կոտորակ ձորձոյ, հանդերձ անարգ, մաշեալ ցնցոտի, կտաւ բրդեայ, լաթի կտոր և այլն»⁷: Միջին հայերենում արդեն հանդիպում է «կարպետ» ձևով և նշանակում է «բրդյա հաստ գործվածք, որն իբրև գորգ փռում են հատակին՝ թախտին»⁸:

«Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառում» ևս հանդես է գալիս «կարպետ» ձևով, որ նշանակում է «քիլիմ», «գորգ»⁹:

Ստ. Մալխասյանցի բառարանում ներկայացված են այս բառի պատմական զարգացման արդյունքում ձևավորված երեք բառիմաստները՝ «ա. «շորի կտոր, լաթ», բ. «մի քանի կտորներից կարած աղքատիկ զգեստ, ցնցոտի, զրզլեակ», գ. «բրդեայ գործուածք»

⁴ **Ա. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ.2, Ե., 1973, էջ 523-524:

⁵ **Ա. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս Ա, Ե. 1940, էջ 181-185:

⁶ **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ), Ե. 1987, էջ 436:

⁷ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, երկասիրություն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքայազնի **հ. Գաբրիելի Աւետիքեան**, **հ. Խաչատրոյ Միսմելեան**, **հ. Մկրտչի Ազեկեան**, հատոր առաջին Ա-Կ, ի Վենետիկ, 1836, էջ 1055:

⁸ **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 367:

⁹ **Ե. Հիւրմուզեան**, *Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ*, Վենետիկ, 1869, էջ 268:

գոյնգոյն թելերով, նախշերով, երկու երեսի, որ իբրև գորգ փռում են սենեակի յատակին»¹⁰:

Ժամանակակից հայոց լեզվում կիրառվում է վերջին իմաստը՝ «կարպետ»՝ որպես հատակին փռվող անխավ գորգի տեսակ¹¹:

Ուշագրավն այն է, որ արդեն լատիներենում ըստ Հ. Աճառյանի, առկա է *carpita* ձևը՝ «բրդե ձորձ», որը ծագել է *carpo*՝ «բուրդ կամ թել մանել» բայից: Հ. Աճառյանն այս լատիներեն բառը փոխառյալ է համարում հայերեն «կարպետ»-ից¹²: Գ. Ջահուկյանը ևս գտնում է, որ լատ. *carpita* և անգլ. *carpet* «գորգ» բառի աղբյուրը կարելի է համարել հայերեն բարբառային մի ձև¹³:

Նշենք, սակայն, որ «կարպետ»-ն ավելի ուշ բարբառային ձևն է, իսկ առավել վաղ հանդիպող նախնական գրաբարյան ձևը «կապերտ» է: Եվ խեթերենում առկա է ^{TUG}*kaparta*- «ինչ-որ գործվածք» նշանակող բառ, որի ստույգ իմաստը, թե ինչ կտոր կամ գործվածք է, հստակ չէ¹⁴, հստակ չէ նաև կիրառությունը. այն հանդիպում է խեթական գույքագրական բնույթի տեքստերում, բայց ենթադրվում է, որ ինչ-որ կրծողի մազից ստեղծված գործվածք է: Նման ենթադրության համար հիմք է ծառայել այն, որ խեթերեն հավանաբար «առնետ կամ մուկ» նշանակող *kapart*, *kapirt*- բառն է խեթերենում բարդ կազմությամբ և վերոնշյալ բառի գուգահեռը հանդիսացող *kapartasamna* բառի հիմքը, որի «*samna*» բաղադրիչը այլ դեպքերում նշանակում է՝ «ինչ-որ բանից սարքված, ստեղծված»: Ըստ այդմ՝ ենթադրվում է, որ *kapartasamna*- բառում արմատը «մուկ կամ առնետ» բառն է, որի մազից էլ ստեղծվել է այդ գործվածքը¹⁵: Նշենք, որ խեթերեն բառի ստուգաբանությունը վերջնական չէ, և եթե մեր դիտարկումները ճիշտ են, ապա հայերեն

¹⁰ Ստ. Մախասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ.2, Ե., 1944, էջ 391:

¹¹ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 708:

¹² Հ. Աճառյան, *ՀԱԲ*. հ 2, էջ 523-524:

¹³ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 384:

¹⁴ J. Tischler, *Hethitishes Handwörterbuch*, Innsbruck, 2001, S.72.

¹⁵ J. Puhvel, *Hittite Etymological Dictionary*, (այսուհետև՝ HED), vol. 4, Words beginning with K, Berlin-New York-Amsterdam, 1997, p. 61.

բառը հնարավորություն կընձեռի խեթերեն բառիմաստն առավել ճշգրտելուն:

Ի դեպ, ասվագործությունը, այսինքն՝ կենդանու մազից ու բրդից գործվածքներ պատրաստելը, ինչպես նշում է Բ. Առաքելյանը, անդրջրհեղեղյան ճյուղ է եղել Հայկական լեռնաշխարհում¹⁶: Բրդյա գործվածքների արտադրությունը և առևտուրը հնագույն ավանդույթներ ունի նաև խեթական տերությունում, և դրա մասին կան բազմաթիվ ուսումնասիրություններ¹⁷: Ընդհանրապես խեթական գործվածքներին, կտորների տարբեր տեսակներին առնչվող ուսումնասիրությունները հատկապես շատ են վերջին տասնամյակներում¹⁸, որի շնորհիվ առավել համապարփակ պատկերացում կարելի է կազմել Փոքր Ասիայում և հարակից տարածքներում բրդյա և այլ տիպի թելերից արտադրված գործվածքների ու դրանց անվանումների մասին, ինչպես նաև հնարավոր է դառնում վերոնշյալ համատեքստում Հայկական լեռնաշխարհին առնչվող համապատասխան նյութերի առավել արդյունավետ դիտարկումը:

Ինչպես նշեցինք, մենք ենթադրում ենք, որ խեթական տեքստերում հանդիպող ^{TÜG}kaparta, ^{TÜG}kapartasamna բառերից հնա-

¹⁶ Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII-րդ դդ.*, Ե., 1958, էջ 269-270:

¹⁷ Տե՛ս, օրինակ՝ Ռ. Ղազարյան, Կանանց դերը Աշշուր Բանեշ միջագային առևտրում, *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XXXIII (1), Ե., 2020, էջ 78-94. աշխատանքում խոսվում է Ք. ա. 20-18-րդ դարերում Փոքր Ասիայի արևելքում, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և Ասորիքի հյուսիսում առևտրական կայաններ հիմնելու և առևտրային գործունեություն ծավալելու մասին, որոնցում շատ կարևոր դեր ունի բրդյա գործվածքների ու բրդի առևտուրը: Իսկ Փոքր Ասիայում բրդի և բրդյա գործվածքների արտադրության մասին առավել մանրամասն տես՝ A.W.Larsen, *Wool in Anatolia in the Old Assirian Period. Wool Economy in the Ancient Near East and the Aegean, From the Beginnings of Seep Husbandry Textile Industry*, 2014, edited by Catherine Breniquet and Cécile Michel, pp.255-263.

¹⁸ Տե՛ս օրինակ՝ M. Pozza, *Traces of 'Weaving' in Hittite: A Brief Overview*, *Athens Journal of Philology*, Vol. 3, Issue 4, 2016, pp. 227-238. G.Bacelli, B.Bellucci, M.Vigo, *Elements for a comparative Study of Textile Production and Use, Hittite Anatolia and in Neighbouring Areas*, M. Harlow, C. Michel, M-L Nosch (eds.), *Prehistoric, Ancient Near Eastern and Aegean Textiles and Dress. An Interdisciplinary Anthology*, Oxford, Philadelphia, 2014, pp. 97-142.

րավոր է փոխառված լինի հայերեն «կապերտ» բառը որպես ինչ-որ գործվածք, որ հայերենում սկզբնապես ընկալվել է ոչ որպես «կարպետ» ժամանակակից ընկալմամբ, այլ որպես կենդանու մազից հյուսված կտոր, որը համապատասխանում է իտեթերեն բառիմաստին՝ «ինչ-որ կտոր, գործվածքի տեսակ, հավանական է կենդանու մազից հյուսված»:

Հարկ է նշել, որ չնայած Հայկական լեռնաշխարհում գորգագործության, կարպետագործության, ընդհանրապես ուստայնանկության այդքան լայն տարածմանը, վերջինիս առնչվող մի շարք եզրույթներ, այդուհանդերձ, հայերենում հստակ ստուգաբանություն չունեն: Ժամանակին, ինչպես նշվեց վերը, Յ. Աճառյանը դրանց մի մասը համարել է ուրարտերենից փոխառյալ: Ուշագրավ է, որ վերոնշյալ շարքին են պատկանում նաև «կապերտ-կարպետ», «հիւսել-հյուսել» և այլ բառեր: Հետաքրքրական է, որ ուստայնանկության, կարպետագործության և գորգագործության ամենակարեւոր հումք հանդիսացող «ասր»-«բուրդ»-ը ևս իտեթալուվական լեզուներից փոխառություն են համարել, ի դեպ, միմյանցից անկախ Գ. Ղափանցյանը¹⁹ և վան Վինդեկենսը²⁰: Սակայն, ի տարբերություն վերջիններիս, թե՛ Յ. Աճառյանը, թե՛ Գ. Ջահուկյանը «ասր» բառի հնարավոր արմատներն են համարել հնդեվրոպական *rok u-/*pek u-«բուրդ, ոչխար, անասուն»²¹: Նշված տարակարծությունները վկայում են, որ այս առումով վերջնական տեսակետներ հայտնելը դեռևս վաղ է: Ուստայնագործությանն առնչվող հաջորդ կարևորագույն բառերից կամ եզրույթներից է հայերեն «հիւս», որից՝ «հիւսել» բառը, որը սկզբնապես համարվում էր անհայտ ծագման, և հանդիպում է վաղ մատենագրությունից սկսած: Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ, հետևելով Աճառյանի ժամանակին հայտնած տեսակետին, այն

¹⁹ Գ. Կապանյան, *Историко-лингвистические работы*, т.1, Ереван, 1957, с. 350-351.

²⁰ A.J. van Windekens, Quelques conforations lexicales armeno-hittites, *Annual of Armenian Linguistics*, vol.1, 1980, pp. 41-42.

²¹ Յ. Աճառյան, *ՀԱԲ*, հ.1, Ե., 1926, էջ 282-283: Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 81:

դիտարկել է հնարավոր ուրարտական փոխառությունների մեջ²², սակայն հետազայում փորձել է տալ հնդեվրոպական ստուգաբանություն՝ բխեցնելով *pek «բուրդ, գգել, պոկել» արմատից²³: Այսուհանդերձ, լեզվաբանների ուշադրությունը կցանկանայինք հրավիրել խեթերենում առկա *huesa- huisa, huesa*, ^{GIS}*huesas*-«իլիկ» բառին, որի ստուգաբանությունը խեթերենում հստակ չէ. առավել հավանական է համարվել բառը հենց հնդեվրոպական *Hiweys- «ուլորել» արմատից բխեցնելը, որը, ըստ Պուհվելի, ձևով նման է ռուսերեն "веха"- «փայտե սյուն, ցից» բառին և հայերեն «գիհի» բառին՝ բացատրելով, որ փայտե սյունը կամ գիհին իլիկ ստեղծելու հարմար նյութ են: Սակայն հենց ուսումնասիրողի կարծիքով այս ստուգաբանությունները միանշանակ և հստակ չեն²⁴, մինչդեռ խեթերեն բառը և՛ իմաստային առումով, և՛ հնչողությամբ շատ մոտ է հայերեն «հիսել» բային, և մեր դիտարկած զուգադրման դեպքում կարծում ենք, կարելի է վերանայել այս բառերի ծագումն ու ստուգաբանությունը երկու լեզուներում էլ: Մեզ հավանական է թվում, որ սա ևս խեթերենից հայերենին անցած մի զուգահեռ է:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ հայերենում «կապերտ-կարպետ» բառիմաստը ունեցել է հետևյալ զարգացումը՝ 1. շորի կտոր, լաթ, 2. մի քանի կտորներից կարած աղքատիկ զգեստ, ցնցոտի 3. բրդյա գործվածք, գույնզգույն թելերով, նախշերով, որ իբրև գորգ փռում են սենյակի հատակին, և որի նախնական նշանակությունը միանգամայն համապատասխանում է խեթերեն բառիմաստին. մենք հնարավոր ենք համարում, որ հայերեն «կապերտ-կարպետ» բառը նախնական իմաստով փոխառյալ է խեթերեն ^{TUG}*kapart* ^{TUG}*kapartasamna* բառերից, որոնք նշանակում են «գործվածքի տեսակ», որը հետագայում հայերենում բառիմաստի

²² Գ. Ջահուկյան, *ՀԼՊ.*, էջ 436:

²³ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 462:

²⁴ J. Puhvel, *HED*, Vol. 3, Words beginning with H, Berlin- New York- Amsterdam, 1991, p. 341-342.

զարգացման արդյունքում, արդեն հայկական իրականության մեջ վերահիմաստավորվել է որպես մեր մշակույթի հնագույն դրսևորումներից մեկը հանդիսացող, կենդանու մազից հյուսված կարպետ:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Ե., 1958:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Ե. 1940:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973:

Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Չօհրապեան վարդապետի, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ բարունապետի և առաջին արքայի: Տպագրեալ հրամանաւ Տ.Տ. Ստեփաննոսի Ագոնց աստուածապատիւ արհիեպիսկոպոսի և առաջնորդի ուխտին սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1805:

Դավթյան Ս., Հայկական կարպետ, Ե., 1975:

Հիւրմիւզեան Ե., Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, Վենետիկ, 1869:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ղազարյան Ռ., Կանանց դերը Աշշուր Քանեշ միջազգային առևտրում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXXIII (1), Ե., 2020:

Մալխասեանց Սո., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւններից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքաւոր հ. Գաբրիէլի Աւետիքեան, հ. Խաչատրոյ Միւրմելեան, հ. Մկրտչի Աւգերեան տպագրեալ յառաջնորդութեան տեառն Սուրբասայ արհիեպիսկոպոսի Սոմալեան ընդհանրական արքայի Մխիթարեան ուխտին,

հատոր առաջին Ա-Կ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու յամին 1836 ՌՄՁԵ:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Капанцян Г., Историко-лингвистические работы, т.1, Ереван, 1957.

Bacelli, G., Bellucci, B., Vigo, M., Elements for A Comparative Study of Textile Production and Use, Hittite Anatolia and in Neighbouring Areas, Edited by M. Harlow, C. Michel, M-L Nosch, Prehistoric, Ancient Near Eastern and Aegean Textiles and Dress. An Interdisciplinary Anthology, Oxford, Philadelphia, 2014.

Larsen, A.W., Wool in Anatolia in the Old Assirian Period. Wool Economy in the Ancient Near East and the Aegean, From the Beginnings of Seep Husbandry Textile Industry, 2014, Edited by Catherine Breniquet and Cécile Michel.

Pozza, M., Traces of ‘Weaving’ in Hittite: A Brief Overview, Athens Journal of Philology, Vol. 3, Issue 4, 2016.

Puhvel, J., Hittite Etymological Dictionary, vol. 3, Words beginning with H, Berlin- New York-Amsterdam, 1991.

Puhvel, J., Hittite Etymological Dictionary, vol. 4, Words beginning with K, Berlin-New York-Amsterdam, 1997.

Tischler, J., Hethitishes Handwörterbuch, Innsburk, 2001.

Windekens, A. J. van, Quelques confortations lexicales armeno-hittites, Annual of Armenian Linguistics, vol.1, 1980.

Hmayakyan Hasmik – An Etymological Attempt of the Armenian Word *kapert-karpet*. The Armenian Highlands has an ancient tradition of carpetmaking (rugmaking). The Armenian word *karpet* is already met in the Bible having a form *kapert* of the Ancient Armenian language (Grabar). No clear etymology has been offered for these words so far.

Originally the word *kapert-kapert* had the meaning of a worn-out cloth, or worn-out woolen fabric, while in the Middle Armenian, these word was transferred into the form *karpet* at the same time acquiring the modern definition.

We suggest that this word has been borrowed from the Hittite language and can be traced back to the words ^{TÜG}*kaparta*, ^{TÜG}*kapartasamna* with the meaning of a fabric or a fabric type.

Later as a consequence of the word semantics transformation designating one of the most ancient expressions of the Armenian culture, the word started denoting a carpet (rug) weaved from animal's wool.

Keywords: carpet, *kapert*, Armenian, Hittite, ^{TÚG}*kaparta*, ^{TÚG}*kapartasamna*, weave, wool.

Հմայակյան Հասմիկ, PhD of Philology, Institute of Oriental Studies of National Academy of Sciences of Armenia, Senior Researcher.
hmayakyan@yahoo.com

Амаякян Асмик – Попытка этимологии слова *kapert-karpet* в армянском языке.- Ковроделие имеет древнюю традицию на Армянском Нагорье. Армянское слово *karpet* («ковер») встречается уже в Библии в древнеармянской форме *kapert*. Армянское слово *kapert-kapert* до сих пор не имеет ясной этимологии.

Изначально слово *kapert-kapert* означало "изношенное тряпье или изношенную шерстяную ткань", а уже в среднеармянском, данное слово трансформируется в форму *karpet* и получает современный смысл.

Мы предполагаем, что данное слово заимствовано из хеттского языка и восходит к словам ^{TÚG}*kaparta*, ^{TÚG}*kapartasamna*, со значением «ткань», вид ткани.

В дальнейшем, вследствие трансформации семантики слова-обозначающего одно из древнейших проявлений армянской культуры, оно стало означать ковер, сотканный из шерсти животного.

Ключевые слова: ковер (арм. *karpet*, *kapert*), армянский, хеттский, ^{TÚG}*kaparta*, ^{TÚG}*kapartasamna*, плести, шерсть, ковер.

Амаякян Асмик, кандидат исторических наук, Институт востоковедения НАН Республики Армения, старший научный сотрудник.
hmayakyan@yahoo.com

**ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌԻ ԲԱՅԱԿԱՆ
ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

DOI: 10.54412/2738277X-2021.1-80

Հովհաննիսյան Լավրենտի
բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գլխավոր գիտաշխատող

Բանալի բառեր. հնաբանություն, բայ, անցյալ կատարյալ, բայահիմք, խոնարհում, բայաձև, Ղարաբաղի (Արցախի) բարբառ:

Բարբառների բայական համակարգում առկայանում են գրաբարի, միջին հայերենի, զուտ բարբառային, փոխառությունների հիմքով կազմված բայեր և բայաձևեր: Այս բազմազանությունը, ինչպես նաև բարբառային հին գրավոր աղբյուրների չգոյությունը խոչընդոտում են հնաբանությունների առանձնացմանը:

Բնականաբար բայաձևերի հարցում պետք է հաշվի առնել գրաբարյան զուգահեռները: Գրաբարում բայը ունի չորս խոնարհում կամ լծորդություն՝ *-ալ, -ել, (-իլ) -ուլ*: Արցախի և մի շարք այլ բարբառներում *-ուլ*-ով անորոշ դերբայներ չկան: Գրաբարի և բարբառի անորոշ դերբայի ձևերը ունեն ընդհանրություններ ու տարբերություններ. *ասել-ասել, ասիլ, բերել-պիրել, պիրել, գրել-կիրիլ, կարդալ- կարթել, կարթալ, կարթիլ...¹*: Բարբառում ակնհայտորեն գգալի են *-իլ*-ով անորոշ դերբայները:

Ըստ Ա. Աբրահամյանի՝ «*-իլ* մասնիկը եղել է V դարից առաջ, որովհետև գրաբարի շրջանից են գալիս *ի* խոնարհման բազմաթիվ

* Ներկայացվել է 21.07.2021, գրախոսվել՝ 16.09.2021:

¹ Նկատի չունենք Չայլու-Մարաղա-Մեհտիշեն բարբառները:

բայեր, և դրանք առանձին խոնարհում են կազմում»²:

Ղարաբաղի (Արցախի) բայական հնաբանությունները ներկայացնենք հետևյալ դասակարգմամբ.

ա) **Հնդեվրոպական արմատներով կազմված բայեր.** *բիլբիլսիլ* «հնչել, մոնչալ», *լէթվէլ* «շփանալ, լրբանալ», *լըխլըխալ* «երերալ», *լըկըգտվէլ* «երես առնել», *լըմլամէլ* «լնդերով ծամել», *լըպըռտէլ* «սահել, գայթել», *լուսվէլ* «շատ շփվելուց ողորկ դառնալ», *խըլըշիլ* «ականջները ցցել», *կըլօլէլ* «գնդաձև փաթաթել», *հարէլ* «զարկել, խփել», *մըլմըլսիլ* «թույլ վառվել», *մըկըկալ*, *շէկէլ* «խփել, հարվածել», *շըկակէլ* «արագ գնալ, վազել», *տըհանէլ* «հնալ»³, *տըաքէլ* «ճայթել», *փըմփըխէլ* «խմորի բարձրանալը», *փըռոթալ* «հանկարծակի բոցավառվել», *քըծըծէլ* «կտրել, անջատել, պատառոտել», *քընձըռէլ* «քնձոռոտ դառնալ, ողորմելի տեսք ստանալ», *փըռոթէլ* «թելի մազերը մաքրել»⁴:

բ) **Անցյալ կատարյալի հիմքով կազմված ձևեր**

Գրաբարում և բարբառում կան արմատական և ցոյական հիմքերով կազմություններ:

Գրաբար *իմանալ*-անց. կատարյալ՝ *իմաց*, բուն. հրամայական՝ *իմա՛* կամ *իմա՛ց*, բարբառ՝ *իմաց*:

Կան բայեր, որոնց հրամայականի հիմքը գրաբարում անցոյական է, բարբառում՝ ցոյական, լողամ-*լողա-լըղաց*, լուանամ-*լուա - լըվաց*⁵:

² Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953, 57:

³ *Տեսնիլ*-ի հոմանիշն է *թանչիլ*: Բառասկզբի *թ*-ն կարող է առաջացած լինել *տի* հնչյունախմբից: Գ. Ջահուկյանը *տեսնիլ*-ի զուգահեռը համարում է խեթերեն տեհիձ «հնալ» (Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1970, 157):

⁴ Վերոգրյալ բայերի հնդեվրոպական արմատները հիմնականում արձանագրված են Գ. Ջահուկյանի «Նայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ:

⁵ Ն. Աճառյանը Ղարաբաղի բարբառի *ծակէլ*, *կիրիի*, *չափէլ* հրամայական ձևերը ավելի հին է համարում, քան արդի հայերենի ծածկի ը, գրի ը, չափի ը-ը (Ն. Աճառյան, *Լիակատար քերականություն*, հ. Ա, 491):

Գրաբարի *ղիմանալ, հասկանալ, հեռանալ* բայերի բուն հրամայականի ձևերը չկարողացանք պարզել: Բարբառում՝ *տիմա՛ց, հրսկա՛ց, հրռա՛ց*:

զ) **Անկանոն կամ զարտուղի խոնարհման բայեր**⁶

Գրաբար *աննել* «անել, կատարել, ստեղծել» բայի անց. կատարյալի հիմքը՝ *արար*, բուն հրամայական *արա՛* կամ *արարէ՛ք*: Բարբառում՝ *անէլ*, անցյալ կատարյալ *ըրէ/ըրըզէ*, հրամայականը՝ *ըրա՛*, *ըրէ՛ք*:

«Գրաբարում անց. կատարյալի հիմքից կազմող ձևերում հանդես է գալիս ներկայի հիմքից կազմվող ձևերում շատ քիչ գործածական *եղաննել* բայի *եղ* արմատը»⁷:

Գրաբար		բարբառ
անցյալ	կատարյալ	“-----“
եղէ	եղաք	իլի (իլն)
եղէր	եղէք	իլիր (իլնր)
եղև	եղեն	իլավ

բուն	հրամայական	“-----“
լէ՛ր	լերո՛ւք	ի՛լ ⁸

Գալ		Կալ
անցյալ	կատարյալ	“-----“
եկի	եկաք	եկէ եկէնք

⁶ Գրաբարի անկանոն բայերի քերականական ըմբռնման, քանակի հարցում առկա են տարբեր մոտեցումներ: Կանոնադառնանք այն բառերին, որոնք արձանագրված են **Ա. Աբրահամյանի** «Գրաբարի ձևաբանություն» (Ե., 1976, 186-207):

⁷ **Ա. Աբրահամյան**, *Գրաբարի ձևաբանություն*, Ե., 1976, 204:

⁸ **Հ. Աճառյանը** լինիլ-ի նախաձևը համարում է *լենիլ-ը (ՀԱԲ, II, 284): Ըստ էության՝ բառը ՀԱԲ-ում ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը լինիլ-ը համարում է բնիկ հայերեն. հ.-ե. *klei-n-՝ *klei՝ նշելով, որ «ինարավոր է կապը *եղաննել* և *եղաննել* բայերի հետ, որոնք ծագում են հ.-ե. *el- «շարժ»(վ)ել արմատից (**Ջահուկյան Գ.**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, 298):

Այս, ինչպես նաև գրաբարում չվկայված, բարբառային շուրջ երեք տասնյակ բայեր, որոնք կազմված են հ.-ե. արմատներով, թույլ են տալիս եզրակացնել, որ բարբառի բայական համակարգը ձևավորվել է նախագրային շրջանից:

Hovhannisyan Lavrenti – Archaic Verbs of Kharabakh (Artsakh) Dialect. - The dialect contains many words with Indo-European roots that are not mentioned in the ancient Armenian language. Forms based on the past perfect tense of grabar and dialect have some similarities and differences. Irregular verbs and their conjugations are also archaisms.

Keywords: archaism, verb, past perfect, verb stem, conjugation, non-finite verbs, Karabakh (Artsakh) dialect.

Hovhannisyan Lavrenti, Doctor of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Principal Researcher.

Оганесян Лаврентий - Архаичные глагольные формы Карабахского (Арцахского) диалекта. - В диалекте есть много слов с индоевропейскими корнями, которые не засвидетельствованы в древнеармянском языке. Формы, с основой прошедшего совершенного времени грабара и диалекта, имеют некоторые сходства и различия. Неправильные глаголы и их спряжения тоже являются архаизмами.

Ключевые слова: архаизм, глагол, прошедшее совершенное, глагольная основа, спряжение, глагольная форма, Карабахский (Арцахский) диалект.

Оганесян Лаврентий, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, главный научный сотрудник.

ԲԱԳԱՅԱՌԻՃ ՏԵՂԱՆՎԱՆ ՇՈՒՐՁ*

DOI: 10.54412/2738277X-2021.1-85

Հովհաննիսյան Լավրենտի

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի
ինստիտուտ, գլխավոր գիտաշխատող

Բանալի բառեր. տեղանուն, Ագաթանգեղոս, տաճար, գրաբար, ստուգաբանություն, շարահյուսություն, շարահյուսական անկանոնություն:

V դ. հայ պատմագրության մեջ տեղանունը առաջին անգամ վկայել է Ագաթանգեղոսը. «Գայր հասաներ ի Սրհական մեհեանն անուանեալ որդոյն Արամագղայ, ի գիւղն զոր Բագայառիճ կոչեն ըստ պարթևարեն լեզուին: Եւ զայն ի հիմանց բրեալ իւլէին, և զգանձս մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին, և զտեղին նուիրէին եկեղեցոյ»¹: Այս և նախորդ պարբերություններում Ագաթանգեղոսը ոգևորությամբ արձանագրում է հին հեթանոսական մեհյանների, արձանների ավերումը՝ քրիստոնեությունը ամրապնդելու և տարածելու նպատակադրումով:

Մ. Աբեղյանը Ագաթանգեղոսի գրքի վերաբերյալ գրում է. «Պարզ երևում է, որ այս գիրքը հորինված է իբրև մի օրինակ անվեհեր մաքառման ընդդեմ հեթանոսական կրոնի և սրա ոչնչացման իր պաշտոնական պաշտամունքի տեղերում: Մյուս կողմից՝ Մ. Գրիգորի վարդապետությամբ, քարոզով, նրա և Հռիփսիմյան

* Ներկայացվել է 21.07.2021, գրախոսվել՝ 16.09.2021:

¹ **Ագաթանգեղոս Պատմութիւն Հայոց.** քննական բնութագիրը՝ **Գ. Տեր-Մկրտչյանի** և **Ս. Կանայանի.** աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Արամ Տեր-Ղևոնդյան,** Ե., 1983, § 790:

կույսերի աղոթքներով, ձգտել են քրիստոնեական կրոնի սկզբունքները սովորեցնելու ընթերցողներին:

Այդ է եղել 5-րդ դարում հայ հոգևորական դասի ձգտումն ամենից առաջ²:

Բագայառիճ բառը՝ որպես գյուղանուն կա և Մովսես Խորենացու *Պատմության* մեջ՝ դարձյալ եզակի վկայությամբ. «... Տիգրան կանգնեաց զՈղիմպիական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիլ ... և զԵփեստուն ի Բագայառիջ»³:

Բագայառիճ-ը գտնվում է Մեծ Հայքի Դերջան գավառում: Հեթանոսական շրջանում Տիգրան Մեծի ժամանակ այստեղ կառուցվել է Միհր աստծո Մեհյանը⁴:

Բագայառիճ բառի ստուգաբանության տարբեր փորձեր կան:

Գ. Ղափանցյանը ենթադրում է, որ «հայասական pattei(arig) քաղաքանունը, որի նմանը կար և իտերերենի մոտ Pittariga ձևով, համընկնում է Երզնկայի *Բըթառիճ* անվան...»⁵, իսկ առինջ «տեղ, բնակատեղի», բառը ստեղծված է համարում Փոքր Ասիայի իտերական (թե պրոտոիտերական) լեզվաստեղծման բնագավառում: Գիտնականը *առիջ*- համարում է տեղանուն՝ համեմատելով իտերերեն Alodar-ariza «հացագյուղ» բառի հետ⁶:

Հ. Աճառյանը *Բագայառիճ*-ը համարում է իրանական փոխառություն՝ հղելով Հյուբշմանին⁷: Գ. Ջահուկյանը բառի առաջին բաղադրիչն է համարում իրանական⁸:

Կարծում ենք՝ տեղանվան ճիշտ մեկնությունը տվել է Ագաթանգեղոսը՝ բառը համարելով պարթևերեն: Նա քաջատեղյակ էր

² Մ. Աբեղյան, Երկեր, Ե., 1968, 185:

³ Մովսես Խորենացի, *Պատմություն Հայոց*. քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Ե., 1991, 127:

⁴ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. I, 531:

⁵ Գ. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*. հին շրջան, Ե., 1961, 67:

⁶ Ն.ս., 68:

⁷ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 1940, 307:

⁸ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 436:

պարթևերենին⁹: Պատմիչը պարթևերեն է համարում և *Բագուան*-ը «Գայր հասաներ ի քաղաքագեղն Բագուան, որ անունանեալ կոչի ի պարթևարէն լեզուն՝ Դիցուան» (§ 817):

Ակնհայտ է, որ *բագա* բառով բառերի (ոչ միայն տեղանունների) նշանակությունները (իմաստները) կրոնի, հավատքի իմաստային խմբին են պատկանում. այդպես է և *Բագայառիճ* տեղանվան դեպքում:

Հ. Դյակոնովը համաձայն է այն կարծիքին, որ հնդիրանականում *bhaga «աստված» գոյություն չի ունեցել, բառը այդ նշանակությամբ հայտնվում է միայն իրանական լեզուներում՝ արևմտյան Իրանում հիմնականում Միհրի պաշտամունքում¹⁰:

Ագաթանգեղոսի *պատմության* մեջ շեշտադրվում է մեհյանը, որը հիմնահատակ ավերել են, գանձերը բաժանել ժողովրդին և մեհյանի հիմքի վրա կառուցել քրիստոնեական եկեղեցի:

Այս նկատառումները հաշվի առնելով՝ ենթադրում ենք, որ *Բագայառիճ* բառի երկրորդ բաղադրիչը իրան. (պրս.) *riša* (րիշա) «արմատ, հիմք» բառն է: Այսինքն՝ ավերվել է զրադաշտական հավատքը հաստատող մեհյանը. հավատքի հիմքը: Գրային (հնչյունական) տեսանկյունից կարող է առարկելի թվալ բառավերջի ճ-ի փոխարեն՝ շ-ն: Պարթևերենի *í* (շ)-ն ոչ միայն շփական *í*-ն է, այլև պայթաշփական *ì*-ն (ճ), որը առկայանում է հատկապես հետձայնավորային դիրքում¹¹: Ագաթանգեղոսը, անշուշտ տեղյակ էր վերոհիշյալ առանձնահատկությանը:

Բագայառիճ տեղանունը վկայել է նաև Ստրաբոնը. *βαριζα*: Ս. Երեմյանը նշում է, որ «Ճիշտ ընթերցումը պիտի լինի *βαγαριζα*»՝ հավելելով. «Այստեղ է Միհրի հոչակավոր տաճարը, Կարինի և Արտաշատի վրայով դեպի Էկրատան (Համադան) տանող կարավանային ճանապարհին»¹²:

⁹ Պարթևերեն բառը V դ. և հետագա դարերի պատմագրության մեջ վկայված չէ:

¹⁰ И. Дьяконов, *Арийцы на ближнем востоке: конец мира*, “Вестник древней истории”, 1970, № 4, 45.

¹¹ *Основы иранского языкознания. среднеперсидский язык*, Москва, 1981, 153, 159.

¹² Ս. Երեմյան, *Հայաստանը ըստ «Մշխարհացոյց»-ի*, Ե., 1963, 42:

Հին հունարենում շ, ժ տառերը չկային: Օտար բառերում հանդիպող այդ տառերը հունարենը տառադարձում է s (ս) կամ z (զ). օրինակ՝ *Պատիժահար* տեղանունը Ստրաբոնի վկայած *πατεισχορεῖος*-ը, իրանական լեզուներում *պադեշխվարգար* է¹³:

Ամփոփում. Վերոհիշյալ դիտարկումները հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել.

ա) *Բազայաշիճ* տեղանունը, իրոք, պարթևերեն բառ է:

բ) Հավանաբար այդպես է կոչվել մեհյանը, ոչ թե գյուղը: V դ. պատմագրության մեջ *Բազայաշիճ*-ը որպես գյուղանուն հստակ է միայն Խորենացու *Պատմության* մեջ: V և հետագա դարերի մատենագրության մեջ նման բնակավայր վկայված չէ:

Աշխարհաբար թարգմանության մեջ էլ հստակություն չկա:

Թարգմանված է այսպես. «Եկավ հասավ Արամազդի որդի կոչված Միհրի մեհյանը, այն գյուղում, որը *Բազայաշիճ* են կոչում պարթևերեն և այն հիմանց բրելով քանդեցին»:

Գրաբարում հաճախ որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը, ուղիղ խնդիրն ու բայը դրվում են ոչ թե կողք կողքի, այլ իրարից հեռացած: Շարահյուսական այս անկանոնությունը առկա է և Ագաթանգեղոսի պատմության մեջ. «Յամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում *գորձանս ծովաց*» (§ 123), «Նա և զխոստմունսն յիշեր գպարգևացն» (§ 32)¹⁴:

¹³ Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, *Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ*, Ե., 2016, 125-126:

¹⁴ Շարահյուսական անկանոնությունները ավելի ակնառու են Խորենացու *Պատմության* մեջ: Ս. Մալխասյանը նշում է հետևյալ նախադասությունները. «*Ձանդուլ* հոգւոյն ի վերայ ... քոյ *շարժունս*», «*Բ քաջէն* գրկեալ *հովուէ* և *հովուակցէ*. *Բ մերոյս* վերայ շահատակեալ յարձակեր *տերութեան* (Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Ս. Մալխասյանի, Ե., 1990, XLVIII):

Անկանոն շարադասության օրինակներ բերենք՝ քաղված Ա. Աբրահամյանի «գրաբարի ձեռնարկ»-ից. «Արտաւազդայ ոչ գտեալ քաջի որդւոյն *Արտաշիսի* (285): «... Հաստատեալ կարգեցին զիւրեանցն ժամանակս» (հատկացուցիչը և հատկացյալը բաժանված են ստորոգյալով, 421):

Կարծում ենք՝ շարահյուսական անկանոնություն կա և Ագաթանգեղոսի՝ վերոհիշյալ համատեքստում: Եթե *ի գիւղն* կապակցությունը դրվի վերջում, ապա, իրոք, կհաստատվի, որ *Բագարիչ*-ը գյուղանուն չէ, այլ՝ մեհյանը, որ գտնվում է «ի գիւղն»՝ գյուղում:

Hovhannisyan Lavrenti - On Toponym *Bagaharj*. - Toponym *Bagaharj* first mentioned by Agatangeghos considering it a Parthian word. It is believed that *Bagaarj* is the name of the village. It can be assumed that there is a syntactic anomaly in the context (which is typical for the Old Armenian language), and the word does not refer to a village but to a pagan temple in the village.

Keywords: toponym, Agatangeghos, temple, grabar (Ancient Armenian), etymology, syntax, syntactic incorrectness.

Hovhannisyan Lavrenti, Doctor of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Principal Researcher.

Оганесян Лаврентий - О топониме *Багаарич*. - Топоним *Багаарич* впервые упоминал Агатангехос, считая это слово парфянским. Полагают, то *Багаарич*- это название села. Мы считаем, что в контексте имеется синтаксическая аномалия (что типично для древнеармянского языка), и слово относится не к деревне, а к языческому храму в деревне.

Ключевые слова: топоним, Агатангелос, храм, грабар (древнеармянский), этимология, синтаксис, синтаксическая неправильность.

Оганесян Лаврентий, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, главный научный сотрудник.

**ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ***

DOI: 10.54412/2738277X-2021.1-90

Ներսիսյան Վարսիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. varsik.nersisyan@mail.ru

Բանալի բառեր. տնօրենություն, տնօրինություն, հնչյունափոխություն, գրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն, բառարաններ, հայ գրականություն:

Նախաբան

Տնօրեն գոյականից են բաղադրված ժամանակակից հայերենում խիստ գործածական *տնօրենություն* և *տնօրինություն* բառերը, որոնք կազմությամբ նույնն են և զուտ ձևային առումով տարբերվում են նրանով, որ առաջինը հնչյունափոխված է, երկրորդը՝ ոչ: Հայերենում, որպես կանոն, բաղադրական հիմքերի տարբերակներով են հանդես գալիս հիմնականում գործածական հաճախականություն ունեցող բառերը: Դա առավելապես դրսևորվում է բառակազմական հիմքերում: Տարբերակային դրսևորումներ սովորաբար չեն ունենում օտար բառերը և տերմինները, որոնք և՛ ձևակազմության, և՛ բառակազմության մեջ սովորաբար չեն ենթարկվում հնչյունափոխության¹:

* Ներկայացվել է 30.07.2021, գրախոսվել՝ 15.08.2021:

¹Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում. - ՎԷՍ՝ *համահայկական հանդես*, Թ (ԺԵ), Ե., 2017, 1, էջ 145: Տե՛ս նաև **Ս. Ավետյան**, Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժա-

Ուսումնասիրության նպատակն է պարզել վերոհիշյալ բառերի իմաստային դրսևորումներն ու գործածությունը հայերենում: Խնդրո առարկա բառերի դեպքում տարակարծությունները պայմանավորված են միայն մեկ՝ **«ղեկավարություն»** իմաստի գործածությամբ, որը փոխարինում է խորհրդային տարիներին լայնորեն տարածված **դիրեկցիա** բառին: Այդ բառերին անդրադառնալու կարիք թերևս չլիներ, եթե դրանք, խիստ գործածական լինելով, միանշանակ ընդունվեին և տարակարծությունների տեղիք չտային նաև մասնագետների շրջանում: Որոշ ձեռնարկներում «ղեկավարություն» իմաստով մերժելի է համարվում **տնօրինություն**-ը: Այսպես՝ Շ. Գալստյանը գրում է. «Արդի արևելահայերենում **տնօրինություն**-ը շատ անգամ գործածում են **դիրեկցիա** բառի դիմաց, ինչը, սակայն, պիտի համարել աննպատակահարմար, քանի որ կա **տնօրենություն**-ը, որը հենց տեսչություն, ղեկավարություն է նշանակում և որը արևմտահայերենում վաղուց ի վեր է արմատավորվել»²: Ինչու՞ է աննպատակահարմար չի պարզաբանվում:

Բառարանային տվյալների վերլուծություն

Փորձենք պարզել բառերի գործածությունը հայերենի պատմական զարգացման ընթացքում առհասարակ՝ նկատի ունենալով, որ լեզվում բառերի ճնշող մեծամասնությունը բազմիմաստ է, և յուրաքանչյուր բառի իմաստային առանձնահատկությունները քրննելիս անհրաժեշտ է հաշվի առնել դա: Խնդրի լուծումը փորձենք գտնել հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում՝ նախ ներկայացնելով **տնօրեն** բառի իմաստային դրսևորումները: Այսպես՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ բառի համար տրվում է հետևյալ բացատրությունը. «Տնօրեն-ա., գ., ինի, նաց. տան օրենսգիր, կարգաւորիչ տան մեծի՝ կամ աշխարհիս.

մանակյա և տարաժամանակյա քննություն).-«Հայագիտության հանդես», 2, Ե., 2020, էջ 212:

² Շ. Գալստյան, Ճիշտը և սխալը, Բառագործածության, բառաձևի և կապակցական սխալները հայերենում, Ե., 2007, էջ 27:

որպես **տնտես, և տեսուչ, հազարապետ, մատակարար, հրամանատար, վարիչ, ուղղիչ, քաշխիչ, հոգացող, կոնսուս, իկոնսուս**»³ (ընդգծումն այս և մյուս մեջբերումներում՝ Վ.Ն.): Ի դեպ, ՆՃԲ-ում բառը հոլովվելիս հնչյունափոխված (**տնօրինի**) տարբերակով է ներկայացվում⁴: «Առձեռն բառարանում» նշված է «ամէն բանը հոգացող»⁵ իմաստը ևս: «Միջին հայերենի բառարանում» բառը վկայված չէ, սակայն նրանից բաղադրված **տնօրինիչ** ձևը ներկայացված է՝ «նա, որ տնօրինում է» իմաստով⁶, ինչպես ՆՃԲ-ում (ՆՃԲ, էջ 887): Ստ. Մալխասյանցը **տուն** և **օրէնք** բաղադրիչներից կազմված գոյականի համար նշում է հետևյալ իմաստները. «տան գործերը կարգադրող՝ վարող՝ կառավարող», «Աստուած», «բարձրագոյն վարիչ և կառավարիչ մի հիմնարկութեան, օր.՝ դպրոցի, լրագրի, գործարանի ևն»՝ վերջինիս համար նշելով նրա անգործածական լինելը (**բառարանը ստյագրվել է խորհրդային տարիներին, երբ ընդունված էր օտար եզրույթը**)⁷: Է. Աղայանի, ինչպես նաև ակադեմիական քառահատոր բացատրական բառարաններում **տնօրէն** բառի համար նշված մի քանի իմաստներից առաջինը որպես հնացած և արևմտահայերենին բնորոշ ձև է ներկայացվում՝ «**որևէ հիմնարկության կամ ուսումնական հաստատության ղեկավար, կառավարիչ**», «**տնօրինող՝ կարգադրող անձ, որևէ բան տնօրինելու իրավունք ունեցող անձ**»⁸: Նկատելի է, որ **տնօրէն** բառը «ղեկավար» իմաստով գործածվել է դեռևս գրաբարյան շրջանում, վկայված չէ

³ Գ. Աւետիքեան, Խ. Միրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազգեան լեզուի* (այսուհետև՝ ՆՃԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 886:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս Մ. Աւգերեան, Գր. Ճլլալեան, *Առձեռն բառարան հայկազգեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 788:

⁶ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 763-764:

⁷ Տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 4, Ե., 1944, էջ 429:

⁸ Հմմտ. Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 1452: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲ), հ. 4, Ե., 1980, էջ 519:

միջին հայերենի բառարաններում, իսկ խորհրդային շրջանում կազմված բառարաններում հնացած է համարվում:

Այժմ անդրադառնանք **տնօրենություն** և **տնօրինություն** բառերի քննությանը և համառոտ ներկայացնենք հայերենի բառապաշարն ընդգրկող բառարանների տվյալներն այդ առիթով: Այսպես՝ ՆՀԲ-ում **տնօրենություն** գոյականի համար նշված են «տնտեսություն, կարգաւորութիւն, **հոգաբարձութիւն**, սպասաւորութիւն կամ զիջումն» և բազմաթիվ այլ իմաստներ (ՆՀԲ, էջ 886), որոնցից մենք առանձնացրել ենք **«հոգաբարձութիւն»**-ը՝ որպէս մեզ հետաքրքրող իմաստի դրսևորում: Մինչդեռ **տնօրինություն** բառն առհասարակ արձանագրված չէ ՆՀԲ-ում, և կարելի է ենթադրել, որ մինչև 19-րդ դարի սկիզբ բառի անհնչյունափոխ տարբերակը գործածական է եղել բոլոր հնարավոր իմաստների համար: «Միջին հայերենի բառարանում» երկու տարբերակներն էլ բացակայում են⁹:

Ստ. Մալխասյանցն արձանագրում է երկուսն էլ՝ բացատրություն տալով միայն անհնչյունափոխ տարբերակի համար՝ «կարգաւորութիւն», «տեսչութիւն» և՛ երկրորդի համար վկայակոչելով նախորդները¹⁰: Ի դեպ, **անհնչյունափոխ ձևը տալիս է հնացած և գործածությունից դուրս եկած բառերին հատուկ նշումով**, ինչպես **տնօրէն** բառի դեպքում:

Քառահատոր բացատրական բառարանում տրված են հետևյալ բացատրությունները. «**Տնօրենություն**, թյան գ. 1. **Տնօրեն լինելը**, 2. **Տնօրենի պաշտոն**: Ալաշկերտի վարժարանին տնօրենությունը բաց էր. ընդունեց, աղաչելով միայն, որ կարելի եղածին շուտով ճամփա ելլէ (ԳԶ) (օրինակը, կարծում ենք, ճիշտ ընտրված չէ, քանի որ պաշտոնը նույնացվել է պաշտոնավարման տեղին. իրականում բառը գործածվել է «տնօրենի աշխատասենյակ» իմաստով, որը նշված չէ որոշ բառարաններում՝ Վ.Ն.): 3. նույնն է՝ **Տնօրինություն...** 1. Տնօրինելը, տնօրինելու իրավունք, իշխանություն... 2. Կարգաւորություն, հրաման: Ուստի հոգաբարձություն կլինդրէ, որ ձեր այցե-

⁹ Տե՛ս Ռ. Ղազարյան, **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 764:

¹⁰ Տե՛ս Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 429:

լությունները դադարեցնեք ցնոր տնօրինություն (ՏԿ)... 6. **Տեսչություն, ղեկավարություն: Հյուրանոցի տնօրինությունը մեզ տամսվ կարող է ապահովել միայն վաղը առավոտյան (ՄԿ)**» (ԺՀԼԲ, էջ 519):

Է. Ադայանի բառարանում հետևյալ մեկնաբանություններն են. «**Տնօրենություն**-1. Տնօրեն լինելը: 2. Տնօրենի պաշտոնը: 3. (հնգ.) Նախախնամություն: 4. **Տեսչություն, ղեկավարություն**: 5. Տնօրինած՝ կարգադրած գործ: **Տնօրինություն** գ. 1. Տնօրինելը: 2. Տնօրինելու իրավունք, իշխանություն: 3. Կարգադրություն, հրաման: 4. Նախախնամություն, նախասահմանում: 5. Տնօրինած՝ կատարած՝ կարգադրած գործ: 6. **Տեսչություն, ղեկավարություն**: 7. Մեկի մը մարմնի իրավասության՝ տնօրինելու ենթակա գործ՝ գործունեություն. բնագավառ՝ երկիր (շրջան են): 8. (կրոն.): Քրիստոսի մարդանալը և կատարած գործերը»¹¹: Ինչպես տեսնում ենք, մեզ հետաքրքրող իմաստները երկու բառերի դեպքում էլ նշվում են:

Ուղղագրական բառարաններից մեկում երկու բառերն էլ նըշված են՝ առանց բացատրությունների¹², իսկ մյուսում անհնչունափոխ տարբերակի դիմաց տրված են՝ «1. տնօրեն լինելը, 2. տնօրենի պաշտոնը», հնչունափոխված բառի դիմաց 1. «տնօրինելը», 2. «կարգադրություն», 3. «ղեկավարություն» իմաստները¹³:

«Օտար բառերի բառարանում» **դիրեկցիա** (дирекция <լատ. direction ղեկավարում) բառի դիմաց նշված է. «... հիմնարկի՝ ձեռնարկության ուս. հաստատության ղեկավար մարմինը՝ դիրեկտորի գլխավորությամբ, տնօրենություն»¹⁴: Մինչդեռ «Հայ-ռուսերեն բառարանում» **տնօրենություն** բառի դիմաց գրված է. «Տե՛ս Տնօրինություն- 1. Распорядительство, ведение. 2. Распоряжение, приказ, 3. **Дирекция**»¹⁵: «Գրպանի նոր բառարանում» **տնօրինություն**

¹¹ Է. Ադայան, նշվ. աշխ., էջ 1452:

¹² Ա. Մուքիսյան, Ք. Մուքիսյան, *Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան*, Ե., 2002, էջ 341-342:

¹³ Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան, *Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան. պատկերազարդ ընթերցարան*, Ե., 2011, էջ 149:

¹⁴ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 161:

¹⁵ *Հայ-ռուսերեն բառարան*, Ե., 1987, էջ 662:

բառը թարգմանված է՝ direction, administration, management հոմանիշներով, իսկ **տնօրենություն** տարբերակը նույն տեղում բացակայում է¹⁶, սակայն անգլերեն **direction** բառի դիմաց նշված է **տնօրենություն**¹⁷: Հոմանիշների բառարանում **տնօրենություն**-ը ներկայացվում է որպես արևմտահայերենին բնորոշ բառ՝ **տեսչություն, վարչություն, դիրեկտորություն** հոմանիշներով, իսկ **տնօրինություն**-ը որպես **տնօրենություն, տնօրինում, կարգադրում, մատակարարություն, դարսողություն** (բրբ.)¹⁸: Թեև բառարաններում հիմնականում անհնչյունափոխ տարբերակն է նշվում որպես արևմտահայերենում գործածական, սակայն Ա. Սարգսյանի «Արևմտահայերենի բառարանում» միայն հնչյունափոխված ձևն է վկայված՝ «տնօրեն լինելը» իմաստով¹⁹: Մինչդեռ Ռ. Սաքապետոյանի բառարանում նշված է միայն **տնօրէնութիւն** գոյականը՝ «հիմնարկի ղեկավար մարմին (դիրեկցիա)» իմաստով²⁰:

Այժմ ներկայացնենք «ԱՐԵՎԱԿ»-ի տվյալները՝ պարզելու երկու տարբերակների գործածության հաճախականությունը²¹: Այսպես՝ անհնչյունափոխ տարբերակի բոլոր ձևերի համար ունենք հետևյալ պատկերը. **տնօրենություն՝ 12 համատեքստ/11տեքստ, տնօրենության՝ 97հ./75տ., տնօրենությունների՝ 7հ./6տ., տնօրենությանը՝ 33հ./29տ., տնօրենությունը՝ 128, հ./100տ., տնօրենությունները՝ 4հ./3տ., տնօրենությունից՝ 9հ./9տ., տնօրենությամբ՝ 10հ./8տ., տնօրենությունում՝ 2հ./2տ.** (այլ բառաձևեր չեն գտնվել): Անհնչյունափոխ տարբերակի «դիրեկցիա» իմաստով գործածությունների ճնշող մեծամասնությունը «Ազգ» օրաթերթից է, մի քանիսը՝ Րաֆֆուց կամ «Կարամազով եղբայրներ» վեպի թարգմանությունից,

¹⁶ Տե՛ս Մ. Գույումձեան, Լ. Թորոսեան, *Գրպանի նոր բառարան. հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն*, Պէրուք, 2002, էջ 289:

¹⁷ Տե՛ս նշվ. Աշխ., էջ 85:

¹⁸ Տե՛ս Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 629:

¹⁹ Տե՛ս Ա. Սարգսյան, *Արևմտահայերենի բառարան*, 1991, էջ 287:

²⁰ Ռ. Սաքապետոյան, *Արևմտահայերեն- արևելահայերեն նոր բառարան*, Ե., 2011, էջ 348:

²¹ Տե՛ս http://eanc.net/EANC/search/?interface_language=am, 29.07.21:

մյուսները՝ Պ. Պոռչյանից: Հնչյունափոխված բառի գործածության դեպքում հետևյալ պատկերն է. **տնօրինություն**՝ 133h./121տ., **տնօրինություններ**՝ 4h./4տ, **տնօրինության**՝ 765h./496 տ., **տնօրինություններ**ի՝ 4h./4տ., **տնօրինությանը**՝ 437 h./329տ., **տնօրինություններին**՝ 1h./1տ., **տնօրինությունը**՝ 628h./469տ., **տնօրինությունները**՝ 12h./10տ., **տնօրինությունից**՝ 50h./49տ., **տնօրինություններով**՝ 1h./1տ., **տնօրինությամբ**՝ 143h./129տ., **տնօրենությունում**՝ 6h./5տ. (այլ բառաձևեր չեն գտնվել): **Տնօրինություն** բառի «ղեկավարություն» իմաստով գործածությունը հիմնականում հանդիպում է ժամանակակից պարբերականներում: Օրինակներ կան նաև Չ. Դարյանի, Չ. Խալափյանի, ինչպես նաև թարգմանական երկերից: Խորհրդային տարիներին տպագրված պարբերականներում գործածված է «դիրեկցիա» բառը: Բառի գործածությանն առնչվող հարցը, կարծում ենք, պայմանավորված է հենց այս հանգամանքով. **արևմտահայերենում այն շարունակել է գործածվել, իսկ արևելահայերենում նախընտրելի է դարձել օտար տարբերակը**: Անհրաժեշտ է նաև հիշել, որ արևմտահայերենում թեև փակ վանկի ձայնավորը խիստ փոփոխվող է, որն ընդհանրական կանոն է, սակայն առանձին կազմություններում արևմտահայերենը հակված է պահպանելու անհնչյունափոխ հիմքերը, ինչպես արևելահայերենում **ե-ն**՝ օրենք-օրենսդիր **և**²²: Արևմտահայերենում **ե-ն**, շեշտափոխական հնչյունափոխության ենթարկվելիս կարող է գրադարձվել **ե-ի**²³: «Չի գրադարձվում կրկնավոր բարդություններում՝ պէս-պէս, կէտ-կէտ, և մի շարք այլ բառերում՝ աղէտ-աղէտաբեր, քէն-քինոտ, օրէն-անօրէնութիւն, տէր-տէրութիւն **և**»²⁴: Այս շարքում, ինչպես տեսնում ենք, **օրէն-ից** կազմված մեկ բառ կա՝ **անօրէնութիւն**, սակայն նշված չէ **տնօրէնութիւն-ը**. այն արձանագրված է «Հայոց լեզուի նոր բառարանում»՝ հետևյալ նշանակություններով. «տնօրէն ըլլալը», «տը-

²² Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Չայնավորների հնչյունափոխական առանձնահատկությունները արդի հայերենում. - «ԲԵՀ. Հայագիտություն», 133. 1, Ե., 2011, էջ 15-30:

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Նույն տեղում :

նօրենի պաշտօնը», «տեսչություն, վարչություն, ղեկավարություն», «տնօրենի գրասենեակը», «նախախնամություն»²⁵: Կարևոր է նաև արձանագրել, որ «... **հնչյունափոխական երևույթները, որոնք գործում են առանձին բառերի ու բառախմբերի սահմաններում, հետևողական, բացառություններ չընդունող հնչյունական օրենքի արժեք չեն ստանում**»²⁶:

Եզրակացություններ

1. ՆՀԲ-ում նշված է միայն **տնօրենություն** գոյականը՝ իմաստային տարբեր դրսևորումներով, այդ թվում՝ «հոգաբարձություն» նշանակությամբ: 2. Միջին հայերենի բառարանում վկայված չէ որևէ տարբերակ: 3. Աշխարհաբարի բառապաշարն ընդգրկող տարբեր բառարաններում ներկայացված են և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ ձևերը. երկուսի դեպքում էլ նշված է «ղեկավարություն» իմաստը: 4. Որպես կանոն՝ բառարաններում նշվում է, որ «տեսչություն, ղեկավարություն» իմաստներով գործածությունը բնորոշ է արևմտահայերենին, որը հնացած է արևելահայերենում և համընկնում է **ղեկավարություն, դիրեկտորություն** բառերին: 5. Նկատելի է, որ արևմտահայերենում ևս բացարձակապես անգործածական չէ հնչյունափոխված ձևը: 6. Թարգմանական (և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն) բառարաններում ևս որոշակիություն չկա. օտար բառի դիմաց մեկ տրվում է հնչյունափոխված, մեկ՝ անհնչյունափոխ ձևը: 7. Աշխարհաբարով գրված գեղարվեստական գրականության մեջ, պարբերական մամուլում երկու ձևերն էլ հանդիպում են, եթե հեղինակները, ժամանակաշրջանով պայմանավորված, օտար եզրույթին չեն տվել նախապատվությունը: 8. Կարծում ենք, որ **տնօրինություն** բառը «ղեկավարություն» իմաստով գործածելը ոչ միայն սխալ չէ, այլև ավելի նպատակահարմար է: Պետք չէ հակադրել վերոհիշյալ երկու ձևերը և արհես-

²⁵ Տե՛ս Գ. Ճերեճեան, Փ. Տօնիկեան, Ա. Տեր Խաչատուրեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, ՊԷրուք, 1992, էջ 974:

²⁶ Ռ. Մաքսայեսոյան, *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006, էջ 16:

տական միջամտություններով ազդել լեզվի բնականոն զարգացման վրա: Ժամանակը, կարծում ենք, կաշխատի հնչյունափոխված տարբերակի օգտին, իսկ անհնչյունափոխը կունենա խիստ սահմանափակ գործածություն՝ «տնօրեն լինելը», «տնօրենի պաշտոնը» իմաստներով: Օրինակ՝ նա լավ **տնօրենություն** է անում, այսինքն՝ տնօրենի գործն է անում, ինչպես՝ **շեֆություն անել, ուսուցչություն անել** ևն:

Օգտագործված գրականություն

- Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
- Ավետիսյան Յու., Ձայնավորների հնչյունափոխական առանձնահատկությունները արդի հայերենում. - ԲԵՇ. Հայագիտություն», 133. 1, Ե., 2011, էջ 15-30:
- Ավետիսյան Յու., Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում.- «ՎԷՄ» համահայկական հանդես, Թ(ԺԵ), 1, Ե., 2017, էջ 125-147:
- Ավետյան Ս., Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն).- «Հայագիտության հանդես», 2, Ե., 2020:
- Ալզերեան Մ., Ճէլալեան Գր., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
- Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Ալզերեան Մկ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837:
- Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, Բառագործածության, բառաձևի և կապակցական սխալները հայերենում, Ե., 2007:
- Գոլյումճեան Մ., Թորոսեան Լ., Գրպանի նոր բառարան. հայերէն-անգլերէն, անգլերէն-հայերէն, Պէյրուֆ, 2002:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.4, Ե., 1980:
- Հայ-ռուսերեն բառարան, Ե., 1987:
- Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Ե., 2011:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա., Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուօ, 1992:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Ե., հ. 4, 1944:

Նազարյան Ռ., Գյողակյան Ա., Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան. պատկերազարդ ընթերցարան, Ե., 2011:

Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Ե., 1991:

Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006:

Սաքապետոյեան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., 2011:

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002:

<http://eanc.net/EANC/search/?interface language=am>, 29.07.21:

Nersisyan Varsik - Using the words *տնօրենություն* and *տնօրինություն* in Armenian.-The words *տնօրենություն* and *տնօրինություն*, which are widely used in present-day Armenian, are coined from the noun *տնօրեն* (*director*). The given words are completely identical and differ formally: the first one has undergone phonetic changes while the second one hasn't. The existence of various perspectives on the given words can be explained only by their usage in the meaning «ղեկավարություն» (“management”) which nowadays is used as a substitute of the word դիրեկցիա (*directorship*) widely used in the Soviet period. In this paper an effort has been made to find out the differences in meaning and the application of these two words based on the data found in the dictionaries of the Armenian language, theoretical works and Eastern Armenian National Corpus (EANC).

Keywords: words *տնօրենություն* and *տնօրհնություն* in the Armenian language, phonetic changes, ancient Armenian (grabar), middle Armenian, Western Armenian, Eastern Armenian, dictionaries, Armenian Literature.

Nersisyan Varsik, PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Senior Researcher. varsik.nersisyan@mail.ru

Нерсисян Варсик-Употребление слов *տնօրենություն* и *տնօրհնություն* в армянском языке.-Слова *տնօրենություն* и *տնօրհնություն*, широко используемые в современном армянском языке, образованы от существительного *տնօրին* (*директор*). Указанные слова идентичны по своему образованию и различаются формально тем, что первое является фонетическим видоизменением, а второе – нет. Различные точки зрения в отношении указанных лексем обусловлены лишь употреблением их в значении «ղեկավարություն» (“руководство”), которое в настоящее время заменяет лексему դիրեկցիա (дирекция), широко используемую в советское время. В статье предпринята попытка выяснить смысловые различия и использование данных слов в армянском языке с опорой на словари, в которых представлена лексика армянского языка, теоретические труды, а также Восточно-армянский национальный корпус (ВАНК).

Ключевые слова: слова *տնօրենություն* и *տնօրհնություն* в армянском языке, фонетические изменения (чередование), древнеармянский (грабар), среднеармянский, западноармянский, восточноармянский, словари, армянская литература.

Нерсисян Варсик, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник. varsik.nersisyan@mail.ru

**ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՃԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՌՈՒՄ***

DOI: 10.54412/2738277X-2021.1-101

Վարդանյան Արտակ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. artva@list.ru

Բանալի բառեր. միջին հայերեն, Ճահուկ-Վայքի միջբարբառ, **Ֆ** հնչյուն, **n** հոլովում, ապառնի դերբայ, բնիկ բառեր, փոխառյալ բառեր:

Նախաբան

Ճահուկ-Վայքի միջբարբառը, որ ընդգրկում է Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի տասնյակից ավելի տեղաբնիկ բնակավայրերի (Վայոց ձորի Արենի, Աղավնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուտ, Հորս, Չիվա, Ռինդ, Վերին Ազնաբերդ և Նախիջևանի Ազնաբերդ, Օծով գյուղեր) լեզվական սերտ առնչություններկայացնող խոսվածքները¹, անցյալի բարբառագիտական աշխատանքներում համարվել է Արարատյան բարբառի խոսվածքների խումբ՝ չնայած Հրայր Աճառյանը չի ընդգրկել ո՛չ Արարատյան, ո՛չ Արցախ-Սյունիքի, ո՛չ էլ որևէ այլ բարբառում²: Ուստի, անհրաժեշտաբար առանձին աշխատանքով վերհանվել են խոսվածքախումբ-

* Ներկայացվել է 23.07.2021, գրախոսվել՝ 20.08.2021:

¹ **Ա. Վարդանյան**, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004: **Ա. Վարդանյան**, Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները.– *Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի նյութեր*, Ե., 2020, http://www.language.sci.am/sites/default/files/-vardanyan_artak_0.pdf

² **Հ. Աճառեան**, Հայ բարբառագիտութիւն.– *Էմինեան ազգագրական ժողովածու*, Խ. Բ, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 37, 61-62:

բում առկա բարբառային յուրօրինակ իրողությունները և ճշտել նրա դիրքը մերձակա բարբառների նկատմամբ:

Անցյալում պատմական Սյունիք աշխարհի Վայոց ձոր, Ճահուկ գավառները և Վասպուրական աշխարհի Նախճավան գավառի հյուսիսային հատվածն ընդգրկող միջբարբառը³ ըստ ավանդական միահատկանիշ դասակարգման՝ պատկանում է հայերենի բարբառների «ուս» ճյուղին, ունի բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ: Գևորգ Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի կիրառմամբ պարզվել է, որ Վայոց ձորի միջբարբառը միջակա դիրք է գրավում հայ բարբառների արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան և Ջուղայի բարբառների միջև, հատկանիշներով փոքր-ինչ հեռու է Արցախ-Սյունիքի բարբառից:

Հայտնի է, որ հայերենի բարբառներում, բնականաբար, պահպանվել են միջին հայերենից ժառանգած որոշակի հատկանիշներ: Ճահուկ-Վայքի միջբարբառով խոսող բնակավայրերը, որոնք պատմականորեն լեզվական առումով համախմբվել են միջինհայերենյան շրջանում (10-17-րդ դարեր)⁴ նախ Սյունիքի և Անիի թագավորությունների, ապա Օրբելյանների և Խաղբակյանների (Պռոշյանների) իշխանապետությունների տարածքում⁵, առավել հարագատորեն են պահպանել միջինհայերենյան մի շարք հատկանիշներ:

Հատկանիշների քննություն

Հնչյունական հատկանիշներից արժանահիշատակ է \$ հնչյունի հետ կապված մի հետաքրքրական հանգամանք: Ինչպես հայտնի է, հինհայերենյան շրջանում այս հնչյունը չի եղել, դրա փոխարեն

³ Ա. Վարդանյան, Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները. - Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի նյութեր, Ե., 2020, http://www.language.sci.am/sites/default/files/vardanyan_artak_0.pdf

⁴ Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 2006, էջ 204-207:

⁵ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 4, Ե., 1986, էջ 744-746:

գործածվել է **փ**-ն⁶, միջինհայերենյան շրջանում ավելացել է **ֆ** հրնչյունը: Մակայն հայերենի բարբառներում ավելի վաղ այդ հնչյունի գոյությունը և **վ** հնչյունի հետ կապը հնարավոր է համարել Հովհաննես Մուրադյանը⁷: Անվանի բարբառագետի ենթադրությունը հաստատում է Ճահուկ-Վայքի միջբարբառում առկա հնչյունափոխական մի հետաքրքիր երևույթ: Չնայած շրջակա բարբառներում (Արցախ-Սյունիքի, Ջուղայի, Ագուլիսի բարբառներ, Հյուսիսային Գողթնի միջբարբառ) բացակայում է **ֆ** հնչյունը, այնուամենայնիվ, այս միջբարբառում այն առկա է. ոչ միայն բառասկզբի **hn** հնչյունակապակցությունն է **ֆo** դառնում (**hn** > **ֆo**)՝ **հող** > **ֆող**, **հոտ** > **ֆոդ**, **հորել** > **ֆորիլ**, **հորթ** > **ֆոռ^hթ**, **հոզի** > **ֆոք^hի**, **հոս** > **ֆոս** («գազ») և այլն, այլև **վհ** հնչյունակապակցությունը փոխազդեցական հնչյունափոխությամբ վերածվում է **ֆ**-ի (**վհ** > **ֆ**)՝ Արևհատ > **Արեֆադ**, **հավաքել** > **հրվաքիլ** > **վհաքիլ** > **ֆաքիլ** և այլն:

Կարծում ենք, որ հնչյունափոխության այս երևույթը կարող էր ի հայտ գալ միջինհայերենյան շրջանում՝ չբացատրելով նաև հայոց լեզվի զարգացման առավել վաղ փուլերում առկա լինելը, այլապես ինչպե՞ս բացատրել հայերենի բարբառներում բառասկզբի **hn**-ի դիմաց **ho||վo||վը^h||ֆo** զուգաձևությունները (Արարատյան, Արցախ-Սյունիքի, Խոյի և այլ բարբառներ):

Միջբարբառում պահպանվել է **չր** ժխտական ածանցի միջինհայերենյան **չի** ձևը. **Ըստեղ մատ^hթ չի կա** («Այստեղ մարդ չկա»); **Արգաթին էհտրբար չի կա** («Երկաթին չես վստահի», ասացվածք):

Միջին հայերենից հետաքրքիր ձևաբանական մեկ այլ հատկանիշ է պահպանվել անվանական հոլովման համակարգում. միջբարբառում առկա է արտաքին թեքման **n** հոլովումը: Հայտնի է, որ միջին հայերենում **n** հոլովումը բառընդգրկմամբ տարբերվում է հինհայերենյանից, իսկ միջբարբառում այն ընդգրկում է բացառապես **ի**-ով վերջացող բառերը՝ **կաշի-կաշo-կաշog-կաշoվ-կաշըմ**, քամի-

⁶ Զ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ, 2, Ե., 1951, էջ 240-241:

⁷ Զ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, էջ 270-271, 273-274:

քաւօ, մըդանի-մըդանօ, կիհնի-կիհնօ, կարի-կարօ, վօսկի-վօսկօ, Թաքօհի-Թաքօհօ և այլն: Ճահուկ-Վայքի միջբարբառը, թերևս, հայերենի միակ բարբառն է, որտեղ պահպանվել է միջին հայերենի **ի**-ով վերջացող բառերի **ո** հոլովումը (եկեղեցի-եկեղեցոյ, գինի-գինոյ և այլն⁸):

Ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայով և **օ** (< ոյ) վերջավորությամբ (լրսիօ, աղալօ, թրոնիօ, պընցանալօ, թիլանալօ), որը նույնպես միջինհայերենյան շրջանին բնորոշ հասկանիչ է: Թեև սահմանականի ապառնին և անցյալ ապառնին կազմվում են անորոշ դերբայով և **պիտեմ** բայի ամփոփված ձևերով (լրսիլ'դեմ||լրսի'բդեմ, լրսիլ'դիմ||լրսի'բդիմ), այնուամենայնիվ, շրջուն շարադասության, հարադրական բայերի և ժխտական խոնարհման դեպքերում երևան են գալիս ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևեր (յես էմ լրսիօ, լրսիօ չեմ; յես իմ քընալօ, քընալօ չիմ, լնց էմ ըլիօ, պար իմ կալօ): Ավելին, Աղավնաձորի, Արփիի, Գնիշիկի և Խաչիկի խոսվածքներում **պիտեմ** բայի ամփոփված ձևերով կազմված ձևերին զուգահեռ կիրառվում են նաև ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևերը (լրսիօ էմ, լրսիօ իմ):

Անվանական հոլովման համակարգում պահպանվել է միջին հայերենի բացառականի է վերջավորությունը, որը թեև առկա է Վանի, Մոկսի և հարակից այլ բարբառներում, սակայն բնորոշ չէ տարածաշրջանի բարբառներին՝ սար-սարե(ն), ծօր-ծօրե(ն), ըրոօգ'ոն-ըրիգվանե(ն), ծըմեո-ծըմեովանե(ն), Աստօձ-Ասսանե և այլն. Ասսանե էլ պան չեմ ուզըմ՝ սաղ ջան չի տենասս («Աստծուց այլ բան չեմ ուզում՝ առողջություն չունենաս», անեծք):

Պահպանվել է միջին հայերենի **նայ** («բայց, սակայն») շաղկապը՝ **թէ չէ նա** բառակապակցության մեջ. **Էս ճնշը կեր, թէ չէ նա՝ կաձեմ կըլիիդ** («Այս ճաշը կեր, հակառակ դեպքում՝ կլցնեմ գլխիդ»):

Միջին հայերենի բառապաշարից բարբառին անցած բառերից է **ընչանք** («այնչափ») դերանունը (յայնչափ(ք) > հանչաք||հենչաք >

⁸ Մ. Ղազարյան, նշված աշխատանքը, էջ 250:

ընչանք), որը կիրառվում է **ընդամալ** | **ընդամբ** հոմանիշին գուգահեռ: **Ընչանք ըղաչանք արիւմ, էգամ վօշ** («Այնքան աղաչանք արեցի, չեկամ»): Ի դեպ, բառը **հենչանք** ձևով ավանդված է Վայոց ձորում գրչագրված միջնադարյան մի ձեռագրի հիշատակարանում՝ «**Մատու մանկադով կտրել ի, հենչանք կարացի գրել**»⁹:

Մեծ թվով բառեր պահպանել են միջինհայերենյան ձևերը՝ **էլլօր** («մյուս՝ հաջորդ օրը») < այլօր, **կըռնատագ** («թևատակ») < կռնատակ, **սամբման** («հարդ») < դարման, **կուգում** («կոկոն») < կոկոմն, **ըլերիք** («վառելիք») < այրելիք, **կօնդ** («բարձր տեղ, բլուր») < կոնտ և այլն:

Միջբարբառի բառապաշարում առկա են նաև հարևան ժողովուրդների լեզուներից միջինհայերենյան շրջանում փոխառված բազմաթիվ բառեր:

Պէլի («կնքահոր հայր»). հին ֆրանսերենի bail («կառավարիչ, հսկող») ձևից միջին հայերենին **պայլ** («մեծ իշխան»)՝¹⁰ ձևով անցած այս բառը խոսվածքում բառավերջի **ի** ձայնավորի հավելմամբ ստացել է **պէլի** ձևը (ուղղակի **պէլ** դառնալու փոխարեն): Մեր կարծիքով՝ **ի** ձայնավորի հավելումն առաջացել է բառի սեռական հոլովի ազդեցությամբ (պայլ-պայլոյ), քանի որ խոսվածքում **ի**-ով վերջացող բառերը հոլովվում են արտաքին թեքման **n** հոլովմամբ:

Պատրոն («ամուսնու հայր՝ սկեսրայր»). անշուշտ, փոխառվել է միջին հայերենի **պատրոն** («միջնադարյան իշխանական աստիճան») բառից¹¹, որն իր հերթին փոխառվել է ֆրանսերեն **patron** («պատրիկ, պաշտպան, պետ») բառից, վերջինս էլ լատիներեն **patronus** նույնիմաստ բառից:

Փըսօն («խնջույք ճաշկերույթ»). փոխառություն է հունարենից՝ **ψωμ** («հաց): Խոսվածքում առկա է նաև **փըսօն տընիլ** («խնջույք, ճաշկերույթ կազմակերպել») բայը: Կարծում ենք՝ այս բառը նույնպես բարբառին է անցել միջինհայերենյան շրջանում, երբ դեռևս առկա էին հայ-հունական անմիջական լեզվական շփումներ:

⁹ *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, Ե., 1973, էջ 40:

¹⁰ *Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 638:

¹¹ *Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան*, հ. Գ, Ե., 1926, էջ 54:

Միջբարբառում առկա են նաև արևելյան լեզուներից միջին հայերենին անցած՝ բազմաթիվ բառեր. **այսան անիլ** («բացահայտել»)՝ պարսկերեն, արաբերեն **ayān** («ակնհայտ, հայտնի») բառից, **դմբման** («դեղ, դեղամիջոց, սպեղանի»)՝ պարսկերեն **darmān** («սպեղանի, դեղամիջոց») բառից, **նաջ** («դագաղ»)՝ արաբերեն **naʿṣ** («դագաղ») բառից, **բարութ**՝ թուրքերեն **barut** («վառող») բառից և այլն:

Եզրակացություն

Վերոշարադրյալ և բազմաթիվ այլ հատկանիշներ վկայում են, որ Ճահուկ-Վայքի միջբարբառը հայերենի այն բարբառային միավորներից է, որոնք զարգացել են միջինհայերենյան շրջանում և հարազատորեն պահպանել են միջինհայերենյան զգալի իրողություններ՝ թե՛ հնչյունական, թե՛ քերականական և թե՛ բառապաշարային հատկանիշների առումներով:

Օգտագործված գրականություն

Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1973:
 Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Ե., 1926:
 Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911:
 Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ, 2, Ե., 1951:
 Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 4, Ե., 1986:
 Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:
 Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 2006:
 Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982:
 Վարդանյան Ա., Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004:
 Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները. Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի

Արտակ, Ա., 2020, http://www.language.sci.am/sites/default/files/vardanyan_artak_0.pdf.

Vardanyan Artak – Realities of the Middle Armenian in the Jahuk-Vayk interdialect.– The speakers of the Jahuk-Vayk interdialect (settlements of the historical provinces of Vayots Dzor, Jauk, the northern part of the Nakhtchavan province) have historically consolidated linguistically and developed in the era of the Middle Armenian language (10-17 centuries) and more closely retained a number of properties of the Middle Armenian: the presence of the sound **f** not only in a combination of sounds **ho** at the beginning of words – ho>**fo** (հող **foğ** (“earth”) > **ֆող foğ**, հորել horel (“to bury”) > **ֆորիլ foril**, but also **v + h = f** (Արևհաստ Arevhat > **Արեֆաղ Arefad**, հավաքել havak’el (“collects”) > վհաքիլ vkhak’il > **ֆաքիլ fak’il**); in the nominal declension system there is the declension indicator **o** (քամի k’ami (“wind”) - **քամօ k’amo** (“wind”), մրդանի mardani (“ring”) - **մրդանօ mardano** (“rings”); the ending **e** of the instrumental case (սար sar (“mountain”) - **սարէ(ն) sare(n)** (“from the mountain”), Աստօձ Astoj (“God”) - **Աստանէ Assane** (“from God”); future participle with the ending **o** (քնալ k’anal (“to go”) - **քնալօ էմ k’analo em** (“I will go”); a considerable number of autochthonous and borrowed words from the times of the Middle Armenian language – **էլօր ellor** (“the day after tomorrow”) < այլօր aylor, **կուգում kugum** (“bud”) < կոկոմն kokomn, **պէլի peli** (“godfather’s father”) < պալլ payl, **պադրօն padron** (“father-in-law”) < պատրոն patron and others.

Keywords: Middle Armenian language, Jahuk-Vayk interdialect, sound **f**, declension **o**, future participle, autochthonous words, borrowed words.

Artak Vardanyan, PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Senior Researcher. artva@list.ru

Варданян Артак – Реалии среднеармянского языка в джаук-вайкском междиалекте.– Носители джаук-вайкского междиалекта (населенные пункты исторических провинций Вайоц Дзор, Джаук, северной

части провинции Нахчаван) исторически консолидировались в языковом отношении и развивались в эпоху среднеармянского языка (10-17-й века) и более родственно сохранили ряд свойств среднеармянского: наличие звука **f** не только в сочетании звуков **ho** в начале слов – **ho>fo** (հող հոց̄ (“земля”) > **ֆող foğ**, հորել horel (“закопать”) > **ֆորիլ foril**, но и **v + h = f** (Արևիստ Arevhat > **Արեֆադ Arefad**, հավաքել havak’el (“собирает”) > **վհաքիլ vhak’il** > **ֆաքիլ fak’il**; в системе именного склонения наличие показателя склонения **o** (քամի k’ami (“ветер”) – **քամօ k’amo** (“ветра”), մրդանի mēdani (“кольцо”) – **մրդանօ mēdano** (“кольца”); окончание **e** творительного падежа (ուր սար (“гора”) – **սարե(ն) sare(n)** (“с горы”), Աստօձ Astoj (“Бог”) – **Ասսանէ Assane** (“от Бога”); причастие будущего времени с окончанием **o** (քննալ k’ənal (“идти”) – **քննալօ էմ k’ənalօ em** (“пойду”); в значительном количестве автохтонные и заимствованные слова времен среднеармянского языка – **էլլօր ellor** (“послезавтра”) < պլլօր aylor, **կուգում kugum** (“бутон») < կոկոմն kokomn, **պելի peli** (“отец крестного отца”) < պալլ payl, **պադրոն padron** (“свекор”) < պատրոն patron и др.

Ключевые слова: среднеармянский язык, джаук-вайкский междиалект, звук **ф**, склонение **о**, причастие будущего времени, автохтонные слова, заимствованные слова.

Варданян Артак, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник. artva@list.ru.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ*

DOI: 10.54412/2738277X-2021.1-109

Հակոբյան Ֆրիդա

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գիտաշխատող. frida.hakobyan@gmail.com

Բանալի բառեր. ձևային նկարագրություն, լեզվի ձևայանցում, կադապարային նկարագրություն, կառուցվածքային նկարագրություն, համակարգչային լեզվաբանություն, լեզվի կադապարում, լեզվական համակարգ, լեզվի համակարգչային մշակում:

Լեզվաբանության պատմության տարբեր փուլերում լեզուն ուսումնասիրվել է տարբեր մեթոդներով: XIX դարը նշանավորվեց պատմահամեմատական լեզվաբանության ստեղծումով և լեզվի պատմական քննության նվաճումներով, XX դարը՝ լեզուների կառուցվածքային վերլուծության մեթոդների առաջացմամբ և լեզվական փաստերի համաժամանակյա քննությամբ: XXI դարում առանցքային է համարվում լեզվական համակարգի մակարդակային բոլոր միավորների առավել ամբողջական և լիակատար ձևային նկարագրությունը, կարևորվում է բնական լեզվի համակարգչային մշակումը:

Ընդհանուր առմամբ՝ ցանկացած լեզվի ձևային նկարագրությունը հետապնդում է երկու հիմնական նպատակ.

1. Լեզվաբանի կողմից կատարվող աշխատանքը մեքենայացնող ծրագրաշարի ստեղծում (ստեքստում լեզվական օրինակների

* Ներկայացվել է 03.08.2021, գրախոսվել՝ 06.09.2021:

որոնում, համեմատություն, ըստ որոշակի հատկանիշների՝ դասակարգում և այլն):

2. Տվյալ լեզվով տեղեկատվություն ստանալու, պահպանելու, մշակելու, փոխակերպելու, թարգմանելու պահանջների բավարարում:

Ձևային նկարագրության գլխավոր նախապայմանը լեզվական համակարգի՝ ծրագրավորման տարբեր լեզուների համար հասկանալի ներկայացումն է և կոնկրետ խնդրի լուծման նպատակով համապատասխան ծրագրաշարի ստեղծումը:

Հայերենի ձևային նկարագրության ուղղությամբ կատարվել են տեսագործական որոշակի աշխատանքներ:

ՀՀ պետական գիտական հաշվողական համակարգերի ստեղծման նպատակային ծրագրի շրջանակներում մասամբ արվել է ժամանակակից հայերենի ձևային նկարագրությունն ու մշակվել է UNL-ի հայերեն մոդուլը: Աշխատանքներն ընթացել են երեք փուլով՝

1. լեզվական նյութի դասակարգում և ներկայացում,

2. հայերեն արտահայտությունների սերման և վերլուծության ալգորիթմների և դրանց հիման վրա համակարգչային ծրագրերի մշակում,

3. հայերենի նյութի՝ UNL-ի ձևաչափով ներկայացում. հայերենի արտահայտությունների վերածում UNL և ընդհակառակը¹:

Փորձ է արվել կատարել նաև հայերենի շարադասության կադապարային նկարագրություն և կադապարների համապատասխանեցում համացանցային թարգմանական միջնորդ լեզվի՝ UNL-ի համապատասխան հարաբերություններին, ինչպես նաև կազմել մեքենական թարգմանության համակարգչային ծրագրերի համար նախնական ալգորիթմ: Աշխատանքի նպատակն է եղել հայերենի շարադասության կանոնավոր կազմությունների և տարբերակային

¹ Տե՛ս **Լ. Հովսեփյան**, Հայերենի քերականության ձևայնացում և համընդհանուր ցանցային լեզվի հայերեն մոդուլի մշակում. - *Արևելագիտության հարցեր*, 2006, 6, էջ 146-147:

ձևերի հիմնական առանձնահատկությունների ներկայացումը, կադապարների առանձնացումը՝ դրանց ավտոմատ վերլուծության ու սերման հնարավորություններով՝ UNL (Uniwersal Networking Language) միջնորդ լեզվին ծառայելու համար:

Լեզվի ձևային նկարագրության որակը կարելի է գնահատել միայն այն դեպքում, երբ այդ նկարագրության հիման վրա ստեղծված համակարգչային կամ համացանցային ծրագրի միջոցով մեքենայացվում է լեզվաբանի կողմից կատարվող որևէ աշխատանք, որի արդյունքում լուծվում է հստակ ձևակերպված որևէ գիտական խնդիր: Մեր նպատակներից դուրս է անդրադառնալ հայերենի ձևային նկարագրության ուղղությամբ կատարված բոլոր գործնական աշխատանքներին, քանի որ մի կողմից՝ դրանք խիստ մասնավոր բնույթ են կրում, մյուս կողմից՝ անավարտ են, հատվածական և ոչ ամբողջական: Փոխարենը հայերենի ձևային նկարագրության տեսական սկզբունքների մշակման առումով ուղենըշային կարող են համարվել Լ. Հովսեփյանի «Ժամանակակից հայերենի ձևային նկարագրության խնդիրներն ու սկզբունքները» և «Հայերենի քերականության ձևայնացում և համընդհանուր ցանցային լեզվի հայերեն մոդուլի մշակում» հոդվածները:

Հետագա շրջանի բոլոր լեզվաբաններն իրենց ուսումնասիրություններում լեզվի ձևային նկարագրության խնդիրներին անդրադառնալիս առաջնորդվում են հենց այդ սկզբունքներով:

Ըստ Լ. Հովսեփյանի՝ յուրաքանչյուր լեզվի լիակատար, ամբողջական և անհակասական ձևային նկարագրությունը պետք է ունենա *որոշակի նպատակ*: Համաժամանակյա մոտեցմամբ ձևային նկարագրություն կատարելիս նկարագրության օբյեկտը պետք է լինի *գրական լեզուն*, լեզվի տարբեր *մակարդակները* պետք է ներկայացվեն *միասնական* սկզբունքով, ձևային նկարագրությունը պետք է լինի *խնայողական* (սահմանափակ թվով կանոնների միջոցով ներկայացնել միավորների մեծ քանակ): Ակնհայտ է, որ ցանկացած լեզվի ձևային նկարագրությունը բավական բարդ խընդիր է, հայերենինը՝ առավել ևս՝ նրա տիպաբանական բնույթի և լեզվական համակարգում (հատկապես խոնարհման և հոլովական

համակարգերում) քերականական կարգերի բազմազանության ու գուգաձևությունների պատճառով:

Կարծում ենք՝ ձևային նկարագրությունը չի կարող լիակատար և ամբողջական համարվել, եթե հետազոտողը սահմանափակվի միայն գրական լեզվի ձևային նկարագրությամբ: Օրինակ՝ սրբագրման ծրագրեր ստեղծելիս գրական լեզվին գուգահեռ պետք է ձևայնացնել նաև խոսակցական լեզուն, քանի որ ամենատարածված լեզվական սխալները հանդիպում են հենց խոսակցական լեզվում: Ուստի հայրենի *լիակատար ձևային նկարագրություն* ասելով պետք է նկատի ունենալ հայերենի պատմական զարգացման բոլոր փուլերի՝ գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական կառուցվածքի ձևային նկարագրությունը: Եթե արևելահայերենի ձևային նկարագրության ուղղությամբ տարվել են մասնավոր և հատվածական աշխատանքներ, գրաբարի, միջին հայերենի և արևմտահայերենի ձևային նկարագրության ուղղությամբ գործնական աշխատանքներ չեն կատարվել: Հայերենի *ամբողջական ձևային նկարագրություն* ասելով պետք է նկատի ունենալ հայերենի լեզվական համակարգի մակարդակային բոլոր միավորների ձևային նկարագրությունը: Հայերենի լեզվական կառուցվածքի ձևային նկարագրության ոլորտում արված աշխատանքները սահմանափակվել են միայն առանձին լեզվական միավորների՝ առավելապես բառակազմական և բառահարաբերական ձևերի առանձնացումով և լատիներեն այբուբենի տառերով նշանակումով: Այս սկզբունքով են առաջնորդվել թե՛ Գ. Ջահուկյանն իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները»¹, «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն»² աշխատություններում, թե՛ Լ. Հովսեփյանը «UNL-ի հայերեն մոդուլի մշակում» նախագծի շրջանակներում հայերենի ձևային քերականության ստեղծման ժամանակ:

¹ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974:

² Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989:

Ձևային նկարագրության տեսակետից միայն ձևույթների առանձնացումը և նկարագրությունը խիստ թերի է, քանի որ շատ դեպքերում ձևույթն իր արտաքին հնչյունական կազմով համապատասխանում է արմատահնչյունին: Սա նշանակում է, որ ձևային նկարագրությունը պետք է սկսել ոչ թե ձևույթների, այլ բառապաշարի ձևայնացումից: Բացի դրանից՝ ձևային նկարագրության ժամանակ հայերենի քերականական համակարգը նկարագրվել է այլ համակարգերի ատրիբուտներով, որոնք չեն արտացոլում մեր լեզվի քերականական համակարգի առանձնահատկությունները: Այլ կերպ ասած՝ հայերենի քերականությունը հարմարեցվել է այլ լեզուների ձևային նկարագրության համար ստեղծված համակարգերին: Մինչդեռ հայերենի ձևային նկարագրությունն անպայմանորեն պետք է արտացոլի հայոց լեզվի *քերականական առանձնահատկությունները*:

Միննույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ գործնականում հնարավոր չէ կատարել հայերենի լեզվական կառուցվածքի *ամբողջական, համապարփակ ու առանց հակասությունների* այնպիսի ձևային նկարագրություն, որը հավասարապես կիրառելի կլինի լեզվաբանական տարբեր խնդիրների լուծման համար ստեղծված բոլոր ծրագրաշարերում: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր կոնկրետ ծրագրաշարի համար պետք է կատարել լեզվական միավորի առանձին ձևային նկարագրություն: Օրինակ՝ բառաձևը մեքենական եղանակով ձևաբանորեն և բառակազմորեն վերլուծող ծրագրի համար արվող ձևային նկարագրությունն էականորեն կտարբերվի բառը ձևաբանական փոփոխությունների ենթարկող ծրագրի ձևային նկարագրությունից:

Լ. Հովսեփյանն առանձնացնում է նաև լեզվի ձևային նկարագրության երկու հայեցակետ: Ըստ առաջին հայեցակետի՝ լեզուն կարելի է ներկայացնել որպես անկախ, ինքնուրույն, ներփակ համակարգ՝ այն չկապելով որևէ այլ համակարգի հետ: Այս մոտեցմամբ հնարավոր է լեզուն նկարագրել ամբողջական և առավել կատարյալ՝ զերծ մնալով այլ համակարգերի ազդեցությունից: Ըստ երկրորդ հայեցակետի՝ լեզվի նկարագրությունը կատարվում է այլ

համակարգերի, այդ թվում՝ արհեստական լեզուների տերմիններով ու սկզբունքներով և ունի գործնական բնույթ³:

Մեր կարծիքով առաջին հայեցակետի համաձայն լեզվի նկարագրությունը կարող է համարվել կառուցվածքային-կադապարային, բայց ոչ ձևային, քանի որ հնարավոր չէ կատարել լեզվի ձևային նկարագրություն՝ չկապելով լեզուն այլ համակարգերի այս դեպքում ծրագրավորման լեզուների հետ: Ձևային նկարագրության բուն իմաստը և նպատակը լեզվական նյութի մեքենական մշակման համար ալգորիթմների ստեղծումն է: Հետևաբար ձևային նկարագրությունը կարող է կատարվել միայն երկրորդ հայեցակետով՝ ծրագրավորման լեզուների տերմիններով և շարադասությամբ:

Այսպիսով, ինչպես տեսանք, հայերենի ձևային նկարագրության սկզբունքները մշակելիս պետք է հաշվի առնել այդ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները և այն նպատակը, որին ծառայելու է նկարագրությունը: Պակաս կարևոր չէ նաև ձևային նկարագրության արդյունքում ստեղծվելիք ծրագրաշարի տեխնոլոգիական հենքի ընտրության խնդիրը: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ծրագրավորման լեզուներ, որոնք հաջողությամբ կիրառվում են մեքենական ուսուցման, տեքստի ավտոմատ մշակման համակարգերում:

Հայերենի ձևային նկարագրությունը կունենա հսկայական գործնական նշանակություն հայերենը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում լիարժեք կիրառելու ուղղությամբ, ինչպես նաև կնպաստի լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքների արդիականացմանն ու մեքենայացմանը: Մեծ է նաև հայերենի ձևային նկարագրության տեսական արժեքը հայերենի քերականական համակարգի ամբողջական նկարագրության ստեղծման տեսակետից, քանի որ կառուցվածքային-կադապարայի ուսումնասիրություններում չի արտացոլվում լեզվական նորմից շեղումների, տարբերակային ձևերի, գուգաձևությունների ամբողջական պատկերը:

³ Տե՛ս Լ. Հովսեփյան, Ժամանակակից հայերենի ձևային նկարագրության խընդիրներն ու սկզբունքները. - *Ջահուկյանական ընթերցումներ*, 2007, էջ 113-115:

 Օգտագործված գրականություն

Հովսեփյան Լ., Ժամանակակից հայերենի ձևային նկարագրության խնդիրներն ու սկզբունքները, Ջահուկյանական ընթերցումներ, 2007:

Հովսեփյան Լ., Հայերենի քերականության ձևայնացում և համընդհանուր ցանցային լեզվի հայերեն մոդուլի մշակում, Արևելագիտության հարցեր, 6, 2006:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

Hakobyan Frida - The problems of formal description of the Armenian language. - The inclusion of the Armenian language and its successful use in the field of information technologies opens great prospects for the solution of both theoretical-linguistic and practical problems. A necessary precondition for solving this problem is the creation of a formal description of the Armenian language, its adaptation to Internet programs.

Keywords: formal description, computational modeling of natural language, computational linguistics, computer science, natural language processing, theoretical linguistics, applied computational linguistics.

Hakobyan Frida, PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Researcher. frida.hakobyan@gmail.com

Акопян Фрида – Проблемы формального описания армянского языка. - Включение армянского языка и его успешное использование в сфере информационных технологий открывает большие перспективы для решения лингвистических и практических задач. Для этого необходимо создание формального описания армянского языка, его адаптация к другим веб-приложениям.

Ключевые слова: формальное описание, компьютерное моделирование естественного языка, компьютерная лингвистика, обработка естественного языка, теоретическая лингвистика, прикладная компьютерная лингвистика

Акопян Фрида, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник. frida.hakobyan@gmail.com

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂԻ ՕՐԻՆԱԿՈՎ)*

DOI: 10.54412/2738277X-2021.1-117

Միքայելյան Տիգրան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
գլխաշխատող. mtigran2002@yahoo.com

Բանալի բառեր. հայեր, հայերեն, Մառնեուլի, Կարմիր գյուղ, Մամեյ, հայաբնակ, Վրաստան:

Վրաստանի Քվեմո Քարթլի երկրամասի Մառնեուլիի մունիցիպալիտետը (շրջանը) գտնվում է Վրաստանի Հանրապետության հարավարևելյան մասում, այն մի կողմից սահմանակից է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին, մյուս կողմից՝ Ադրբեջանի Հանրապետությանը:

Մառնեուլի շրջանով է անցնում Հայաստան-Վրաստան սահմանի վրացական մասում գտնվող Սադախլո անցակետը:

Մառնեուլի շրջանը մաս է կազմում պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Ծոբոփոր գավառի¹: Այս շրջանն ավանդաբար բազմազգ է. մեծամասնություն են կազմում ադրբեջանցիները (բնակչության թվի 83,77%), վրացիները (8,58%), ապրում են նաև հայեր, ռուսներ, հույներ, ասորիներ և այլն: Հայերը կազմում են բնակչության 6,99%, նրանց թիվը 7291 է՝ 2014 թ. Վրաստանում անցկացված մարդահամարի համաձայն²:

Մառնեուլի շրջանում կան լիովին հայաբնակ մի քանի գյուղեր՝ Ախքյորփի, Չանախչի, Կուղրո, Գյուլլիբադ, գրեթե ամբողջ-

* Ներկայացվել է 30.07.2021, գրախոսվել՝ 20.08.2021:

¹ Ռ.Մաթևոսյան, Ծոբոփոր, *Հայկական սովետական հանրագիտարան*, հ.5, 1979, էջ 133:

² <http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm>

ջապետ հայկական՝ Խոխմելի (հայերն այստեղ կազմում են 95%), Բրդաձոր (հայերի տոկոսը՝ 91%)³:

Ամբողջապես հայաբնակ գյուղերի շարքում է նաև Սադախլո-Թբիլիսի մայրուղուց մոտ 1,5 կիլոմետր և հայտնի Շահումյան ավանից 7 կմ հեռավորության վրա գտնվող Կարմիր գյուղը: Մայրուղուց հեռու գտնվելու և ճանապարհային ցուցանակի բացակայության պատճառով գյուղն անհայտ է մնում շատերին:

Գյուղը միշտ մնացել է հայաբնակ և հայախոս. այստեղ խորհրդային տարիներից գործում է հայկական դպրոց:

Գյուղը 19-րդ դարի վերջին հիմնադրել են Արագոսյան (այժմ՝ Երասխ) բնակավայրից գաղթած հայերը, որոնք էլ հիմնվել են Երասխում՝ ըստ ավանդության գալով Ուրմիա լճի ափերից: Գյուղի բնակիչները քաջատեղյակ են իրենց բնակավայրի հիմնադրման պատմությանը: 19-րդ դարի վերջին Երասխ գյուղի ավագները, որոնց մեջ տողերիս հեղինակի նախապապ Ամիրխան Սիքայելյանը (Սիխայյանը) դիմում են Ալեքսանդր Մանթաշովին՝ մեկ այլ վայրում իրենց համար հող գնելու խնդրանքով: Բանն այն էր, որ քոչվոր քրդերի հաճախակի հարձակումների և ասպատակությունների պատճառով գյուղը չէր կարողանում խաղաղ ապրել: Մանթաշովը համաձայնում է, և տարածքը գնելուց հետո այստեղ տեղափոխված հայերը հիմնում են նոր գյուղ՝ այն անվանելով Մանթաշովկա՝ ի պատիվ մեծ բարերարի: Բոլշևիկյան իշխանությունները, սակայն, փոխում են անվանումը՝ այն վերանվանելով Կարմիր գյուղի: Գյուղի այս անվանումը մինչ օրս մնում է անփոփոխ: ԽՍՀՄ փլուզումից հետո գյուղի անվանումը քարտեզներում և ցուցանակներում հաճախ գրվում է ադրբեջաներեն Քըրմզըքենդի կամ վրացերեն Ծիթելխտփելի: Կարմիր գյուղն առանձին միավոր չէ. այն մտնում է Կուլլար կամ Կուլլարի խոշորացված համայնքի մեջ, որի կազմում կա ևս 6 գյուղ:

Գյուղի բնակչությունը ավանդաբար զբաղվում է գյուղատնտեսությամբ, հիմնականում մրգերի, բանջարեղենի մշակմամբ՝ լոլիկ, վարունգ՝ սեփական կարիքների համար, կաղամբ կամ ծաղ-

³<http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm>

կակադամբ՝ մեծածախ առևտրի համար, որոնք հիմնականում գրնում են Թբիլիսիից եկածները: Անասնապահությունը թույլ է զարգացած, մարդիկ հիմնականում պահում են ընտանի թռչուններ, խոզ՝ սեփական կարիքների համար: Արոտավայրեր չլինելու պատճառով գյուղում խոշոր անասունների քանակը սակավաթիվ է:

ԽՍՀՄ տարիներին գյուղի բնակիչները նյութապես ապահովված էին. մշակում էին գինու խաղողատեսակ՝ այն հանձնելով սովխոզին, աճեցրած միրգ-բանջարեղենը սեփական ավտոմեքենաներով տեղափոխում և թանկ վաճառում էին Ռուսաստանում՝ լավ եկամուտ ստանալով: Դրանից բացի՝ շրջանում գործում էին բրդի և տեխնիկական խորդենու, գինու և այլ գործարաններ, որոնցում աշխատում էր գյուղի բնակիչների մի մասը:

ԽՍՀՄ փլուզումից հետո կյանքը դժվարացել է. կա մշտական և սեզոնային արտագաղթ Ռուսաստան: Այսպիսով՝ գյուղի բնակչությունը պակասել է խորհրդային տարիների համեմատությամբ: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող առաջին տարիներին գյուղի բնակիչները առևտրական սերտ կապեր էին պահպանում Հայաստանի հետ՝ աճեցրած մթերքը իրացնելով Հայաստանի շուկաներում, սակայն, հետագայում՝ մաքսային սահմանափակումների պատճառով, դա այլևս ձեռնտու չէ:

Ըստ Վրաստանում անցկացված մարդահամարի՝ գյուղի բնակչության թիվը 2002 եղել է 1072, իսկ 2014թ.՝ 695⁴, որոնցից հայերի թիվը նշված է 680: Սակայն, ըստ տեղացիների, այդ թիվը պետք է լինի 1000-ի սահմաններում. գյուղն ամբողջովին հայաբնակ և հայախոս է. հայերից բացի՝ գյուղում ապրում է մեկ ասորի ընտանիք՝ նույնպես հայախոս⁵: Գյուղում, բացի հայկական դըպրոցից, այլ կրթական հաստատություն երբեք չի եղել, իսկ այն հատուկենտ աշակերտները, որոնք ստացել են ռուսական կրթություն, ստիպված հաճախել են Շուլավեր կայարանի ռուսական դպրոցը⁶: Այժմ գյուղաբնակ ոչ մի երեխա չի հաճախում ռուսական դպրոց:

⁴ <http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm>

⁵ Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

⁶ Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

Ներկայումս Կարմիր գյուղի դպրոցն են հաճախում նաև հարևան գյուղերի հայ երեխաները, ուր հայերը փոքրամասնություն են կազմում, և հայկական դպրոցներ չկան: Օրինակ՝ Իմիր կամ Իմիրի ադրբեջանական գյուղի հայկական թաղամասում բնակվող հայ երեխաները հաճախում են հենց Կարմիր գյուղի դպրոցը: Այսպիսի աշակերտների թիվը մոտ 10 է: Դպրոցի աշակերտների ընդհանուր քանակը՝ 136⁷:

Խորհրդային ժամանակներից սկսած՝ դպրոցում միշտ դասավանդվել է վրացերեն: Սակայն ինչպես նշում են գյուղի բնակիչները, նախկինում վրացերենի դասավանդումը ավելի շատ ձևական բնույթ էր կրում (օրինակ, ինչպես, անգլերենը ԽՍՀՄ դպրոցներում)⁸: Վրացերենը դասավանդվում էր շաբաթը 2-3 անգամ, և շրջանավարտները այդ լեզվի միայն տարրական գիտելիքներ ունեին, գյուղի բնակչությունը վրացերենին չէր տիրապետում, իսկ վրացախոս բնակչության բացակայությունը շրջակայքում չէր նպաստում այդ լեզուն յուրացնելուն:

Վրաստանի անկախությունից ի վեր, սակայն, գյուղի դպրոցում պետական լեզվի՝ վրացերենի դասավանդման դրվածքը զգալիորեն փոխվել է, խորացել: Բայց հարկ է նշել, որ սա տեղի չի ունենում հայոց լեզվի հաշվին⁹: Առարկաների այն խումբը, որի մեջ մտնում է վրացերենը, կոչվում է «Վրացերենը իբրև երկրորդ լեզու», և ներառում է վրացերենն և գրականությունը: Այս առարկաների խումբը երեխաներն այժմ անցնում են շաբաթական 5 ժամ¹⁰: Գյուղի դպրոցի տնօրեն Հմայակ Սայադյանի խոսքերով այժմ երիտասարդ սերունդը և մասնավորապես դպրոցականները վրացերենին անհամեմատ ավելի լավ են տիրապետում:

Գյուղից դուրս օտարազգիների հետ շփվելիս ավագ և միջին սերնդի բնակիչները խորհրդային ժամանակներում և այժմ էլ կի-

⁷ Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

⁸ Գյուղի բնակիչներ Կարեն և Արթուր Միքայելյանների և Օվսանա Սաստուրյանի բանավոր հաղորդմամբ:

⁹ Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

¹⁰ Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

րառում են ռուսերենը, աղբբեջանցիների (աղբբեջանցիներին տեղի հայերը «թուրք» են անվանում) հետ շփվելիս՝ աղբբեջաներենը:

Այս առումով հետաքրքիր է նշել, որ գյուղի բնակիչները, հատկապես ավագ և միջին սերնդի մարդիկ, գտնվելով աղբբեջանցիների շրջապատում, հեշտորեն սովորում են աղբբեջաներեն և տեղացի աղբբեջանցիների հետ խոսում այդ լեզվով: Խոսքը, անշուշտ, խոսակցական լեզվի մասին է, որն անհրաժեշտ է կենցաղային մակարդակով շփման համար (առևտուր, ծառայություններ և այլն):

1970-ական թվականներին տարածված էր մի երևույթ, երբ գյուղի տարեցները հաճախ իրար հետ շփվելիս խոսում էին աղբբեջաներեն («թուրքերեն»):

Գյուղի խոսվածքի վերաբերյալ կարելի է ասել, որ այն, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ, քիչ է տարբերվում Արարարտյան բարբառից: Երբեմն կարելի է զգալ Լոռու շեշտադրությունը, երբ շեշտը դրվում է նախավերջին վանկի վրա, օգտագործվում են վրացերեն և աղբբեջաներենից փոխառյալ բառեր: Մյուս կողմից՝ կարելի է նաև լսել, օրինակ, «կերամ», «գրեցիմ» բարբառային ձևերը: 70-ականներին որոշ բնակիչների շուրթերից կարելի էր լսել «էթասեմ, էթասես» բայաձևերը. միջին սերունդը, սակայն, այդ ձևերն այլևս չի օգտագործում:

Մոտ գտնվելով Հայաստանին՝ գյուղի բնակիչները սերտ կապեր ունեն հատկապես Լոռու մարզի հետ. դպրոցի այն շրջանավարտները, որոնք ձգտում են բարձրագույն կրթություն ստանալ, հաճախ ընդունվում են Վանաձորի և Երևանի բուհեր, փորձում աշխատանք գտնել և հիմնվել այդ քաղաքներում: Երբեմն գյուղի երիտասարդները «աղջիկ են ուզում» Հայաստանի սահմանամերձ շրջաններից:

Պետք է նշել, որ Կարմիր գյուղի բնակիչները ձգտում են գյուղը լիովին հայաբնակ պահպանել, ուստի տներ վաճառողներին պարտադրում են այն վաճառել միայն հայերին՝ աչքի առջև ունենալով այլ նախկինում հայաբնակ, իսկ այժմ խառը բնակչություն ունեցող գյուղերի օրինակները:

ԽՍՀՄ ժամանակներում մի բնակչուիու նախաձեռնությամբ գյուղում գործել է մի փոքրիկ մատուռ, այժմ այն վերանորոգվել է: Մշտական քահանա չկա, գյուղի բնակիչները հիմնականում առաջնորդվում են վրացական տոնացույցով, սակայն վերջին տարիներին սա փոխվում է և նախապատվությունը տրվում է հայկական տոնացույցին¹¹:

Մառնեուլի շրջանում կան նաև մասամբ հայաբնակ գյուղեր, ինչպես, օրինակ, Նորգյուղը (նախկինում Միրզոյնկա), որում հայերը մեծամասնություն են կազմում. աղբբեջանցիների թիվը 22% է, Բուդյոնովկայում հայերը 55% են, արբեջանցիները՝ 34%, Ծոբ գյուղը, ուր հայերը փոքրամասնություն են կազմում՝ 34%, աղբբեջանցիները՝ 62%, Խոժոռնի հայերը՝ 78%, աղբբեջանցիները՝ 22%:

Հետաքրքիր է դիտարկել այժմ գրեթե ամբողջովին աղբբեջանական, իսկ նախկինում նաև մասամբ հայաբնակ Մամեյը կամ Կիրովկան: Գյուղի անվանումը ճանապարհային ցուցանակին վրացերեն է՝ «Քերովկա», ճիշտ անվանումը պետք է լինի Կիրովկա՝ խորհրդային գործիչ Մերգել Կիրովի պատվին: Մառնեուլի շրջանի բնակիչների շրջանում գյուղը հայտնի է Մամեյ անվամբ: Մամեյն ընդամենը 11 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Հայաստանի սահմանից: Այստեղ այժմ աղբբեջանցիների շրջապատում շարունակում է ապրել չորս հայ ընտանիք: Գյուղի բնակչության թիվը 663 մարդ է՝ ըստ 2014 թ.¹² Վրաստանի մարդահամարի¹²: Գյուղի հայ բնակիչների մի մասը 1950-1970-ականներին տեղափոխվել է Հայաստան և կամ Վրաստանի այլ բնակավայրեր:

Մինչև 1975-1976 թթ. Մամեյում գործել է հայկական միջնակարգ դպրոց աղբբեջանականի հետ միասին, սակայն հետագայում հայերի թվի նվազման պատճառով այն փակվել է¹³:

Մամեյի բնակիչ Մամվել Հայրապետյանի հաղորդմամբ՝ գյուղում հայկական դպրոց չլինելու պատճառով իր երեխաները

¹¹ Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

¹² <http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm>

¹³ Գյուղի նախկին բնակիչ Մարգարիտ Հայրապետյանի հաղորդմամբ:

ստիպված հաճախում են Գյուլլիբադ գյուղի հայկական դպրոցը՝ ամեն օր անցնելով 24 կիլոմետր ճանապարհ:

Մամեյի փոքրաթիվ հայ ընտանիքները շարունակում են շփվել հայերեն, իսկ տեղի աղբբեջանցիների հետ՝ աղբբեջաներեն: Մամվել Հայրապետյանի խոսքով՝ ինքն այնքան է յուրացրել աղբբեջաներենը, որ իրեն չճանաչող աղբբեջանցիները գլխի չեն ընկնում, որ հայ է, եթե հատուկ չի ասվում: Կա և հակառակ երևույթը. Մամեյի աղբբեջանցիների միջին և ավագ սերնդի շատ ներկայացուցիչներ գիտեն հայերեն, որը սովորել են գյուղի երբեմնի հայ բնակիչներից:

Այժմ Մառնետուլի շրջանում տարածված է մի նոր երևույթ. աղբբեջանաբնակ գյուղերում հիմնվում են վրացական դպրոցներ, և աղբբեջանցի շատ երեխաներ հաճախում են այդ դպրոցները: Դրանից բացի՝ աղբբեջանցի շատ երեխաներ հաճախում են վրացական գյուղերի կամ Մառնետուլի քաղաքի վրացական դպրոցներ՝ պետական լեզվին տիրապետելու և Վրաստանի հասարակության մեջ ավելի լավ ինտեգրվելու նպատակով¹⁴: Պետական լեզվին տիրապետելը այժմ ավելի կարևոր է տեղի բնակչության համար, քան խորհրդային տարիներին:

Դաշտային հարցումներով կարելի է փաստել, որ հետխորհրդային փուլում դիտարկելի էր մի երևույթ. անցյալում վրացաբնակ գյուղերն այստեղ սակավաթիվ էին. ընդամենը երեքը՝ Թամարիսի, Ծերերթելի, Օրջոնոիկիձե (սրանք ստեղծվել են 1950-ականներին Վրաստանի արևմտյան լեռնային շրջաններից վերաբնակեցված վրացիների հաշվին¹⁵), մինչդեռ 1990-ականների սկզբին հիմնվում էին վրացական նոր բնակավայրեր: Այսպիսի քաղաքանություն էր վարում Զվիադ Գամսախուրդիայի կառավարությունը: Այսպես, օրինակ, 1990-ականների սկզբին և Կարմիր գյուղի անմիջական հարևանությամբ Աջարիայից վերաբնակեցվել են աջարներ, և հիմնադրվել է Մարադիսի բնակավայրը, որի

¹⁴ Մամեյի բնակիչ Մամվել Հայրապետյանի հաղորդմամբ: **A. Kvakhadze, Georgia's Fertile Crescent: Marneuli Municipality, 2021, p. 5.**

¹⁵ **Kvakhadze, p. 7.**

բնակիչների հետ հայ հարևանները բարիդրացիական հարաբերություններ ունեն: Մարադիսիի հիմնադրման համար Կարմիր գյուղի անմիջապես հարևանությամբ գտնվող սովխոզի, սակայն ոչ Կարմիր գյուղին պատկանող խաղողի այգիները կտրվեցին: Ըստ մարդահամարի՝ Մարադիսիի բնակչությունը կազմում է 239 մարդ¹⁶:

Այսպիսի վրացաբնակ գյուղերի շարքում կարելի է նշել Շահումյան ավանի հարևանությամբ հիմնադրված Խիխանին (այն հիմնադրվել է 1950-ականներին և շատ փոքր բնակավայր է), Մադախո-Թբիլիսի մայրուղու վրա գտնվող Մարեթին¹⁷ և Դիոկնիսին¹⁸:

Այսպիսով՝ Կարմիր գյուղի օրինակով կարելի է ասել, որ Վրաստանի Մառնեուլի շրջանի հայաբնակ գյուղերը շարունակում են պահպանել իրենց ինքնությունը, լեզուն՝ մինևույն ժամանակ իրենց ընկալելով որպես Վրաստանի քաղաքացիներ: Հայապահպանությանը նպաստող կարևոր գործոններից են Հայաստանին մոտ լինելու հանգամանքը, գյուղի բազմազան սերտ կապերը Հայաստանի հետ: Ցանկալի է, որ այդ կապերը առավել սերտացվեն, ուսումնասիրվեն գյուղերի հայ բնակչության ինքնության պահպանմանն առնչվող խնդիրները, և հնարավորության դեպքում աջակցություն տրամադրվի: Օրինակ՝ նշվեց, որ Կարմիր գյուղն ունի փոքր մատուռ, սակայն հոգևորականները այցելում են գյուղ տոներին՝ պատարագ մատուցելու¹⁹: Ոչ տոնական օրերին բնակչությունը, որը հայ Սուրբ Առաքելական Եկեղեցու հետևորդ է, ստիպված են գնալ Շահումյան ավան կամ Թբիլիսի՝ եկեղեցական արարողություններին մասնակցելու: Երբեմն բնակիչները հոգևորականների են հրավիրում մատուռում կնունքի, պսակադրության, հուղարկավորության արարողություններ իրականացնելու նպատակով: Ցանկալի է, որ վերականգնվի գյուղի հիմնականում հայալեզու գրականությամբ հագեցած գրադարանը, և կամ տարբեր

¹⁶ <http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm>

¹⁷ **Kvakhadze**, p. 17.

¹⁸ **Kvakhadze**, p. 33.

¹⁹ Գյուղի բնակիչ Սվետլանա Միքայելյանի բանավոր հաղորդմամբ:

տեսակի օժանդակություն տրամադրվի դպրոցին: Ուսումնասիրված չէ նաև գյուղին վերաբերող ազգագրական նյութը:

Օգտագործված գրականություն

Մաթևոսյան Ռ., Ծորփոր, *Հայկական սովետական հանրագիտարան*, Հ.5, 1979:

Kvakhadze, A., *Georgia's Fertile Crescent: Marneuli Municipality*, Rondeli Foundation, Georgian Foundation for Strategic and International Studies, 2021.

Mikayelyan Tigran – The Linguistic Situation in Armenian-Populated villages of Marneuli Municipality of Georgia (On Example of Karmir Gyugh Village). – In his paper the author describes the linguistic situation in the Armenian-populated villages in mostly Azerbaijani-dominated Marneuli municipality of Kvermo-Kartli administrative region of the Republic of Georgia on the example of KarmirGyugh village (often denoted as Kransoe, Kirmizikend or TsiteliSopeli). KarmirGyugh village has always been fully Armenian-populated and Armenian-speaking; an Armenian secondary school has been functioning here since the USSR. The Georgian language was taught since the Soviet times but rather in formal way and the alumni had only elementary knowledge of that language. However, today the teaching of the Georgian language has improved significantly and the younger generation knows Georgian much better compared to older people. The old and middle-aged generations continue contacting with the non-Armenians in Russian and in Azerbaijani with the surrounding Azerbaijani majority. Another village former partially Armenian-populated, but now almost fully Azerbaijani-populated is Mamey (or Kirovka), where a few Armenian families continue to live, is also discussed.

Keywords: Armenians, Armenian language, Marneuli, Krasnoe, Mamey, Armenian-populated, Georgia

Mikayelyan Tigran, Institute of Oriental Studies of National Academy of Sciences of Armenia, Researcher. mtigran2002@yahoo.com

Микаелян Тигран - Языковая ситуация в армянских селах Марнеульского муниципалитета Грузии (на примере Красного Села).

Автор на примере Красного села приводит языковую ситуацию в армянских селах в Марнеульском муниципалитете региона Квемо-Картли Грузии, населенного азербайджанским большинством. Население села всегда оставалось полностью армянским и армяноязычным, тут с советских времен действует армянская средняя школа. Также с советских времен в школе преподается грузинский язык, но в прошлом его изучение носило формальный характер и выпускники имели элементарные знания по данному языку. Однако, сегодня преподавание грузинского языка значительно улучшилось и молодое поколение владеет им намного лучше чем люди среднего и старшего возраста. Старшее поколение в общении с неармянами пользуется русским и азербайджанским языком (при общении с местными азербайджанцами). Также приводится ситуация в селе Мамей некогда частично армянонаселенном, а ныне почти полностью населенном азербайджанцами, где продолжают жить несколько армянских семей.

Ключевые слова: армяне, армянский язык, Марнеули, Красное Село, Мамей, армянонаселенный, Грузия

Микаелян Тигран, Институт востоковедения НАН Республики Армения, научный сотрудник. mtigran2002@yahoo.com

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«ՇԱՌԱՓ, ՑՈՂԵԼ, ԾՈՐԱԼ» ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ
ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

DOI: 10.54412/2738277X-2021.1-127

Զարարյան Հովհաննես

բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» գիտակրթական համալիր,
լեզվաբանության բաժանմունքի ղեկավար.
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. հայոց լեզու, հնդեվրոպական նախալեզու, ստուգաբանություն, արմատային տարբերակներ, աճական, ձայն-դարձ, շարժուն s-, ածանց, իմաստային հանրույթներ:

Բառիմաստների պատմական փոփոխություններն ու ճյուղավորումները երբեմն թվում են անսպասելի, չնայած դրանք միշտ էլ բացատրելի են և, որպես կանոն, տիպաբանորեն հանրույթային: Իմաստային ճյուղավորումների բազմազանության ու մեծ ցրվածքի դեպքում հաճախ նպատակահարմար է լինում ճյուղերի զատ-զատ ուսումնասիրումը: Հնդեվրոպական *sk'ei-/*sk'ai-/*sk'oi- «ցայտել; ցատկել» արմատից և դրա՝ աճականներով ընդլայնված տարբերակներից ու ածանցյալներից սերված հայերեն բառերի շարքում, ըստ հրապարակված աղբյուրների¹, կան **ցայտ (ցաթ, ցեթ)** «ցալ-

* Ներկայացվել է 25.07.2021, գրախոսվել՝ 23.09.2021 :

¹ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀԱԲ), **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետ՝ ՀՍԲ), **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987 (այսուհետ՝ ՀԼՊ ՆԺ), **Է. Աղայան**, *Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974 (այսուհետ՝ Աղ.), **Մ. Աղաբեկյան**, *Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր*, Ե., 2017, **Հ. Զարարյան**, «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.-

քուն, շիթ, կաթիլ», **ցայքուն (ցելթուն)** «ցայտեր», **շիթ** «1. ցայտ, 2. կաթիլ», **շիռ** «լի, առատ» (որից՝ **շռայլ** «առատորեն շաղ տվող»), **ցոկիլ** «1. ցայտել, ժայթքել, 2. ցատկել», **ցոթ(կ)ել** «1. ցնկնել, 2. ծրտել, 3. ցռել, 4. ստինքից կաթ ծծել (շան, կատվի)», **ցրտկեցնել, ցրիտցնել** «ցայտեցնել», **ցրքել** «թափել, ցրցրել», **ցրքտել** «վրան ցայտել, ցողել», **ցայել** «ցողել, պարզաջրել», **ցանել** «1. շաղ տալ, սփռել, 2. ցողել, ցայել», **ցիր** «սփռված, շաղ եկած» (որից՝ **ցրան** «ցայքուն, ցայտեր»), **շքթել (ծքթել)** «ցայտեցնել, սրսկել», **ժայթք-ել (ժայտքել)** «1. ուժգին արտավիժել, 2. թափով բխել» բառերը: Դրանք ունեն իմաստային ընդհանրություն «ցայտ, շիթ, կաթիլ», որ կապվում է հեղուկի տեղաշարժի և թացության հետ: Սույն հողվածը նվիրված է նշված իմաստային դաշտին վերաբերող նույնարմատ մի շարք այլ հայերեն բառերի ստուգաբանությանը կամ վերաստուգաբանությանը:

Ցողել (ցաղել) «1. ցայել, ջուր ցանել՝ շաղ տալ, 2. թեթև անձրևել, շաղել» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 466, ՀՍԲ, 742): Նկատի ունենալով վերոհիշյալ **ցայքուն (ցելթուն)**, **ցայել, ցայտել, ցանել, ցրել** և այլ բառերի հետ իմաստային և ձևային նմանությունը՝ առաջարկում ենք հ.-ե. նույն արմատից բխեցնել նաև սույն արմատը՝ **ցաղ** <*sk'əu-l- <*sk'e-l- <*sk'ei- (*sk'ai-, *sk'əi-) «ցայտել; ցատկել» անցմամբ²:

Ցղել «1. ցայտել, 2. ցողել, ողողել» (ՀԼԲԲ³, Զ, 280) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման

«Ջահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 65-76 (այսուհետ՝ Չար.-2020):

² Այլ լեզուներում առկա զուգաբանություններից հիշենք՝ թոխ. Բ kārsk- «նետել, շարտել, շաղ տալ, ցրել, տարածել», հ.հնդկ. kirāti, kīryate, kīma- «ցրել, շաղ տալ, նետել, որթել, դուրս թափել», ռուսկ. cок «1. ցատկ, 2. ջրվեժ», հ.նորվ. skolpa, u.գերմ. schulpen «լվալ, ողողել, ցայել», լիտվ. skàsti, skàsta, skātō «ցատկել, ցայտել» [տե՛ս S. Nikolaev, *Database of Indo-European etymology*.- <http://starling-rinet.ru/> (այսուհետ՝ Նիկ.), *sker-, *skek- «ցատկել, վազել», *sk^wAlb- / *sk^welb- «լվալ, ողողել, ցայել», *skat- «ցատկել, ցայտել, ժայթքել», J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 2005 (այսուհետ՝ Ղոկ.) (<http://dnghu.org/indoeuropean.html>), (s)ker-2, skerə-: skrē- «ցատկել, շուռ տալ»]:

³ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա.-Է, Ե., 2001-2012:

(ՀԱԲ, 4, 458, ՀՄԲ, 743): Մակայն Գ. Ջահուկյանը մի վերապահում է արել. «Հազիվ թե կապ ունենա հ.-ե. *sk'e-l- «ցատկել» արմատի հետ»: Այս ենթադրությունից ելնելով՝ կարծում ենք, որ սա **ցողել (ցաղել)** բառի ձայնդարձային մի տարբերակ է (հմմտ. բրբռ. **ցռուել** (ՀԱԲ, 4, 466), **ցռուլիլ** (ՀԼԲԲ, Զ, 280)): Ուստի առաջարկում ենք **ցղել** <***ցռու-ել** <*sk'ō-l- <*sk'e-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

Ցնցուղ «1. ջրցանիչ, ջուր սրսկելու գործիք, 2. ականջի լսողական խողովակը, 3. բրոնխներ» (որից՝ **ցնցղել, ցնցխել** «1. ցողել, շաղ տալ, շթարկել, 2. շռայլել, վատնել, ցփնել», **ցնցղկել, ցնցղնել** «ջուր ցողել՝ սրսկել») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 459-460, ՀՄԲ, 744): Մակայն հայտնի է, որ սա կրրկնավոր է (**ցռուղ+ցռուղ**)¹, և արմատը նույնն է, ինչ **ցղել** բառի դեպքում: Հետևաբար հ.-ե. նախաձևն էլ նույնն է՝ *sk'ō-l-:

Ցփնել «1. ցողել, ցայել, ցնցղել, ցրցամ տալ, սրսկել, 2. շաղ տալ, սփռել, ցրել, 3. շարտել, նետել, դեն նետել, 4. շռայլել, ծախսել, վատնել» (Մալխ.², 2, 475) բառը ստուգաբանական բառարաններում տեղ չի գտել: Նկատի ունենալով իմաստային նմանությունը վերոհիշյալ մի շարք բառերի հետ (**ցրքտել, ցրտկեցնել, ցողել, ցայել, ցնցղել** և այլն)՝ առաջարկում ենք **ցփնել** բառի համար վերականգնել ***ցռուփ-** <*sk'ō-ph- արմատը, որի նախաձևը դարձյալ հ.-ե. <*sk'ei- «ցայտել; ցատկել» արմատի ածանցյալ է³: Ինչ վերաբերում է ն բաղադրիչին, ապա դա թերևս արմատի հավելատարր է (հմմտ. **արծնել, բռնել, խառնել, հիմնել, օզնել, ճզնել, խոնվել** և այլն):

Ցոցոսալ «1. հորդառատ անձրև տեղալ, 2. տարբեր կողմերի վրա ծորել, 3. հատիկ-հատիկ թափվել» (ՀԼԲԲ, Զ, 283) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Այս բայի հիմքը կրկնավոր

¹ Տե՛ս ՀԱԲ, 4, 460, 466, Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. III, Ե., 1957, էջ 92:

² Մ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945:

³ Այլ լեզուներից հմմտ. հուն. σκαίρω, σκαρτάω «ցատկում եմ» (Նիկ., *skek- «վազել, ցատկել, բխել»), հուն. ἐσκάριζεν «ցատկել» (Պոկ., 950, skēt- : skæt- «ցատկել»):

է՝ **gn+gn+այ**: Չհնչյունափոխված արմատն է **ghn**: Առաջարկում ենք **gn- <*ghn- <*sk'e-r-s- <*sk'ei-** «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

Շաղ⁴ «1. ցող, 2. խոնավություն, թացություն, 3. շիթ, կաթիլ, 4. ցրում, 5. շփոթ» (որից՝ **շաղել** «1. բարակ անձրևել, 2. խառնել», **շաղ(շղու)իլ** «շփոթվել», **շաղուել**⁵ «1. շշմել, 2. մթագնել, պղտորվել, 3. կտրվել, մակարդվել, փտրվել, 4. ցրիվ գալ, 5. խառնվել», **շաղ տալ** «1. ցրել, 2. ցանել, 3. ցողել, 4. ափեղցփեղ խոսել», **շաղախ** «թաց խառնուրդ, ցեխ»⁶) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 487, ՀՄԲ, 579): Պոկոռնու, ինչպես նաև Նիկոլանի բառարաններում **շաղել** և **շաղախ** բառերը բխեցված են հ.-ե. *k'wel- «թաց և փափուկ, կավ» արմատից (Պոկ., Նիկ), սակայն Հ. Աճառյանը մերժել է այս ստուգաբանությունը (ՀԱԲ, 3, 487): Այս **շաղ** բառը, կարծում ենք, վերոհիշյալ **ցող (ցաղ)** հոմանիշի ձայնդարձային տարբերակն է՝ **ց/շ** հերթագայությամբ: Հետևաբար առաջարկում ենք **շաղ** <*skhə-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը⁷:

⁴ Սա ունի իր **շաղ** «կապ, միացում» համանունը, որը Գ. Ջահուկյանը կապել է **շեղ, խեղ** <*(s)khel- «ծռել, հենել, ծուռ» բառերի հետ (ՀՄԲ, 579):

⁵ **Շաղուել, շաղ(շղու)իլ** «շփոթվել, սխալվել» բառերը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են **շաղ** «շեղ, ծուռ» արմատի ածանցյալներ (ՀԱԲ, 3, 508, 490, ՀՄԲ, 579): Սակայն այն փաստը, որ հենց Գ. Ջահուկյանը **շրտնուլ** «1. խրտնել, վախենալ, 2. շվարել, շփոթվել» բառը բխեցրել է *skhē-r-d- «ոստնել, ցատկել» նախածից (ՀՄԲ, 597), հիմք է տալիս **շաղուել, շաղ(շղու)իլ** բառերի ստուգաբանությունը վերանայելու և համարելու **շաղ** «ցող, թաց» արմատի ածանցյալներ՝ համապատասխան իմաստային զարգացումով: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ **շաղ/շեղ/շիլ/խեղ** «ծուռ» արմատի այլալեզու զուգաբանությունների շարքում չկան «շփոթ(ել)» իմաստով բառեր (տե՛ս ՀԱԲ, 2, 356, խեղ): Չպետք է մոռանալ նաև նշված համանուն արմատների իմաստային զարգացումների հետևանքով խաչաձևումների և բաղարկումների հնարավոր առկայությունը և դրանց սահմանազատման հարաբերականությունն ու պայմանականությունը:

⁶ Սա Հ. Աճառյանի կարծիքն է (ՀԱԲ, 3, 487-488), մինչդեռ Գ. Ջահուկյանը նախընտրելի է համարել **շաղախ**-ը որպես «կապակցող խառնուրդ», առնչել **շաղ** «կապ, կցում» արմատին (ՀՄԲ, 579):

⁷ Այս բառից են կազմված նաև **շաղրունչ (շաղրունջ), շաղափուք, շաղառուց** հոմանիշները, որ նշանակում են «շաղոտ խոտ արածելուց անասունի փքվելը» (Մալխ., 3, 496): **Շաղրունջ**-ի համար ենթադրում ենք **շաղ+ուլ+ունջ** կազմությունը,

Շող⁸ (շոլ) «1. թացություն, խոնավություն, 2. շաղ, ցող» (որից **շողոտ** «1. լորձունքոտ, 2. խխունջի մի տեսակ, 3. կողինջ» բառը (Մալխ., 3, 530)) բառը Հ. Աճառյանը իրավացիորեն համարել է վերոհիշյալ **շաղ** «ցող» արմատի ձայնդարձային տարբերակ՝ որպես դրա ածանցյալ դիտարկելով **շող(իք)** «լորձունք, թուք» բառը (ՀԱԲ, 3, 529): Գ. Ջահուկյանը անվերապահորեն բխեցրել է հ.-ե. *k'uol-՝ *k'uel- «տղմոտ, ցեխոտ (՞)» արմատից, որի հետ է կապել նաև **շաղ**, **շաղախ** բառերը (ՀԱԲ, 591), ընդ որում՝ **շաղախ**-ը համարել է ոչ թե **շաղ** «ցող, շիթ», այլ համանուն **շաղ** «կապ, կցում» բառի ածանցյալ, վերջինս էլ կապել է **շեղ** (<*skhe-l- «ծռել, հենել, ծուռ») բառի հետ (ՀԱԲ, 579, 585): Իմաստային անցման այս շղթան բավարար համոզիչ չէ: Ուստի հետևում ենք Հ. Աճառյանի տեսակետին: Բայց քանի որ նա **շող** «թացություն» (ինչպես նաև **շաղ** «ցող») բառի համար նախաձև չի վերականգնել, առաջարկում ենք **շող (շոլ)** <*skho-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

Շլոփայ «1. ջրալի ցեխ թաց ձյան կամ հալոցքի ժամանակ, ջրցելի, 2. անձրևախառն ձյուն» բառը (Մալխ., 3, 520, ՀԼԲԲ, Դ, 251) ստուգաբանական բառարաններում չկա⁹: Իմաստից ելնելով՝ կարծում ենք, որ դա վերոհիշյալ **շոլ (շող)** «թացություն» արմատի ածանցյալ է՝ ***շոլ-ուփ-այ** կառուցվածքով (**-ուփ/-ափ** ածանցի համար հմմտ. *տ(ո)ր-ուփ, շորշ-ուփ, շարշ-ափ* («շորշուփ, սարսափ» (ՀԼԲԲ, Դ, 213)), *սարս-ափ* (ՀԱԲ, 672), *թարթ-ափ* (ՀԱԲ, 260), *խուս-ափ-ել* (ՀԱԲ, 340), *կարկ-ափ-ել* (ՀԱԲ, 393), *տար-ափ* և այլն, **-այ**-ի համար՝ *ան-ուղղ-այ, ան-զզ-այ, վայ-վաղ-այ, արք-այ, առ-արկ-այ, մօր-այ* և այլն)¹⁰: Արևմտյան որոշ բարբառներում (Մշո, Կարևո նն) կա նաև **շլի-շլոփայ** կիսահարադրությունը՝ որպես **շլոփայ**-ի սաստկական

որտեղ *ուլը*-ը արմատ է, *-ունջը*-ն՝ ածանց (**-ունջ/-ինջ/-անջ** ածանցի համար՝ հմմտ. *խխ-ունջ, տրտ-ունջ, մրմ-ունջ, եղ-ինջ, կող-ինջ, դող-անջ, վաղ-անջ*- և այլն):

⁸ Սա ունի իր **շող** «ճառագայթ, ճաճանջ, ցոլք» համանունը (<*k'olo- <*k'eu- «լուսավոր(ել)» ՀԱԲ, 591), որի ածանցյալն է **նշոլ** <*նի+շոլ «ցոլք» բառը:

⁹ **Շլոփայ**-ի նմանությունը ռուս. шлёпать «խփել, շպպացնել, շրխկացնել» բնաձայնական բառի հետ պատահական է:

¹⁰ Տե՛ս նաև *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 2, Ե., 1975, էջ 88-89 (այսուհետ՝ ՀԼՊԷ):

ձև: Սա արձանագրված չէ անգամ բարբառային բառարաններում: Այս **շի** բաղադրիչի արմատը թերևս նույն **շու**-ն է՝ ածականակերտ **-ի** վերջածանցով (աճանցի համար՝ հմմտ. *վայր-ի, աղ-ի, երկդիմ-ի, ապօրին-ի, տմարդ-ի, բար-ի, ձր-ի, մուլ-ի* և այլն):

Շլթկել «ցայտել, ուժով դուրս թափվել, ուժեղ շիթով դուրս հոսել» բառը (ՀԼԲԲ, Դ, 247) ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ կարելի է պնդել, որ սա նույնպես հ.-ե. *sk'ei- «ցատկել, ժայթքել» արմատի աճանցյալներից է՝ ***շուլթ-ուկ-ել** կաղապարով: Կառուցվածքով սրան նման են վերոհիշյալ նույնարմատ **ցոթ(կ)ել** «ցնկնել» և **ցրտկել** «դուրս ցայտել» բառերը: Հետևվաբար առաջարկում ենք **շլթկ-ել** <***շուլթ-կ-** <*skho-l-թ- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **թ-**ն աճական է, իսկ **-կ-**ն թերևս սղված **-ուկ** աճանցն է (հմմտ. *թզկել, լլկել, ծածկել, մղձկել, ցնցղկել, բոնկել, տմկել, թնջկել, ճապկել* և այլն):

Շառափ «հորդ անձրև, (տեղա)տարափ, ջաղր» բառը¹¹ Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 497, ՀՄԲ, 581): Կարծում ենք՝ սա աճանցավոր կազմությունն է՝ **շառ-ափ** (**-ափ/-ոփ** աճանցի համար՝ տե՛ս վերը), որի **շառ-** արմատի համար, ելնելով վերոհիշյալ **շաղ**, **ցող** բառերի հետ իմաստային կապից, ինչպես և **շիռ** «լի, առատ», **ցիր** «սփռված, ցրիվ» բառերի հետ նաև ձևային նմանությունից, առաջարկում ենք **շառ-** <*skhə-r-s- <*(s)ker- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը: Արտաքին նմանության առումով հմմտ. *տարափ* հոմանիշը:

Շարաւ «թարախ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 502, ՀՄԲ, 583): Նկատի ունենալով նախ, որ շարավին (թարախին) բնորոշ է վերքից (բշտիկից, թարախապալարից) ցայտելը, այնուհետև՝ ձևային նմանությունը **շառափ** բառին՝ առաջարկում ենք բառակազմական **շար-աւ** վերլուծությունը (**-աւ** աճանցի համար հմմտ. *կաղ-աւ-ել, անձ-աւ, հար-աւ, խարդ-աւ-անք* և այլն (տե՛ս նաև ՀԼՊԲ, 85)) և արմատի **շար-** <*skhə-r- <*(s)ker- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

¹¹ Սա ունի իր **շառափ** «լույս, ճառագայթ» համանունը (ՀԱԲ, 3, 497):

Ջաղբ (ջաղջ) «(տեղա)տարափ, հորդ անձրև, շառափ, թոն, թաթափ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 120, ՀՄԲ, 649): Իմաստային կապը **շառափ** բառի հետ և ձևային նմանությունը **շաղ, ցող** հոմանիշների հետ թույլ են տալիս ենթադրելու, որ գործ ունենք հ.-ե. միևնույն արմատի տարբերակների հետ: Ուստի առաջարկում ենք **ջաղբ** <*sk'whə-l-p/ջ- <*(s)k'el- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **բ**-ն կամ **ջ**-ն աճական է: Այս բառի ստուգաբանությամբ փաստորեն սահմանում ենք ***sk'wh > ջ** հնչյունական համապատասխանությունը¹² ի լրումն բառասկզբի ***sk-** հնչյունակապակցության հայերեն անդրադարձների ***(s)k > ք, *(s)k' > ս, *(s)kh > խ, *sk > կ, *sk' > ց, *skh > շ, *(s)k'h > ծ, *sk'h > ճ, *(s)k'wh > զ, *sk'wh > ժ** շարքի¹³: Այս վարկածի օգտին են վկայում նաև **ջախ (ջաղջ) – ջալ (ջայլ) – ճախ – ցախ, ջոխ – ճէխ – ճաղ – ճիւղ – շիւղ – ծեղ – ցող(ուն), ջախջախել – ճեճէխել, ջիլ – ճիլ, ջահ – ճառ** «կախովի ջահ» – **ճաղ** «եկեղեցու ջահ», **ջառ** «քարայր» – **խոռոչ – ծործոր – ծերպ – սոր** «ծակ» և այլ բառափնջերում առկա **ջ/ճ/ց, ջ/ճ/շ/ծ/ց, ջ/ճ/ծ, ջ/խ/ծ/ս** հերթագայությունների դեպքերը, որոնք բառասկզբի ***sk-**ի հնարավոր զարգացումների շրջանակում են:

Ջոփել «լվանալ, ցայել» (Մալխ., 4, 147, ՀԼԲԲ, 5, 196) գավառական բառը ստուգաբանական բառարաններում չկա: Նկատի ունենալով վերոհիշյալ **շառափ, շիռ, ցոկիլ, ցոցոալ, ցփնել** և այլ բառերի հետ ձևային և իմաստային նմանությունները՝ առաջար-

¹² Նկատի պետք է ունենալ, որ **ջ**-ն որոշ դիրքերում (մասնավորապես քմային երանգ ունեցող *e, i* ձայնավորներից առաջ) կարող է ծագած լինել *g^{wh}-ից*, որտեղ առկա է շրթնայնության հատկանիշ, օրինակ **g^{wh}hermo-* > ջերմ, **g^{wh}hisla-* > ջիղ (**Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի**, հ. VI, Ե., 1971, էջ 541): Հետնալեզվային պայթականների քմայնացումը տարածված երևույթ է տարբեր լեզուներում: Մասնավորապես հայերենում որպես տարածքային (բարբառային) զուգաձևություններ կարող են հանդես գալ *ցինի – կ'ինի – ջինի, գէլ – կ'էլ – ջէլ* ևն (տե՛ս **Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն**, Ե., 1953, էջ 221):

¹³ Տե՛ս Ջաթ.-2020, 66, 73-75, **Հ. Ջաթարյան, Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.** - «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), Գյումրի, 2019, էջ 228-229:

կում ենք **ջոփ-ել** <*ջոռ-փ- <*sk^hhō-r-փ- <*(s)k'er- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **փ-**ն աճական է:

Կաթ «կայլակ, պուտ, շիթ, ծոր» (որից՝ **կաթել, կաթիլ, կայլակ** <*կաթլակ, **կրթալ** «կաթկթել, ծթթել») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 479-480, 506): Գ. Ջահուկյանը, հետևելով Օլսենին, կասկածով կապել է հ.-ե. *g^uat <*g^uet- «կաթել» արմատին (ՀՄԲ, 371): Բայց սա Մեյեի և Պետերսոնի կարծիքն է, որ մերժել է Հ. Աճառյանը (ՀԱԲ, նույն տեղում): Նկատի ունենալով այս հակասությունը՝ առաջարկում ենք **կաթ** <*(s)kə-t- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը: Իմաստային անցման համար հմմտ. վերոհիշյալ նույնարմատ **շիթ** «ցայտ, կաթիլ», **ցայտ (ցայթ, ցաթ, ցեթ, ցեթ)** «ցալքուն, շիթ, կաթիլ», **շաղ** «ցող, թացություն, շիթ, կաթիլ» բառերը¹⁴:

Շլուլ «1. քթից կախված ջրալի խլինք, ծլուկ, կաթիլ, 2. շիթ» (որից՝ **ծլլալ, ծլծլալ** «ծորել, կաթել» (Մալխ., 2, 340)¹⁵, **ծլլակաթ** «1. աշնան երկարատև բարակ անձրև, 2. բարակ կաթկթելով» (Մալխ., 2, 340), **ծլլի** «ուղիղ դեպի վեր (ծուխը)» (Մալխ., 2, 340)) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **շլուլ** <*ծուլ-ուլ <*(s)k^hhō-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը (-ուլ աճանցի համար հմմտ. *տանուլ, գլ-ուլ, թայթ-ուլ, կպփ-ուլ, բալ-ուլ, փմփ-ուլ-իկ, սր-ուլ-իկ, զանգ-ուլ-ակ* և այլն (տե՛ս նաև ՀՄԲ, 811)):

Շլթալ «կաթել» (որից՝ **ծթթել** «կաթկթել, կրթալ, ծլլալ, կաթիլ-կաթիլ ծորալ») բառը (Մալխ., 2, 340) ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **ծլթ-ալ** <*ծուլ-թ- <*(s)k^hhō-l-թ- <*sk'e-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **թ-**ն աճական է:

¹⁴ Հմմտ. հ.լիտվ. skatau «ցատկել, խոյանալ, ոստնել» (ՀԱԲ, 4, 633), հ.հուն. ἐσκατάμιζεν «ցատկել», լատ. scaturiō «ցայտել, հորդել, տեղալ», scatebra «շիթ, աղբյուր, ակունք» (Պոկ., 950, skēt-: skōt- «ցատկել»), լատ. scaturriäre «փսխել», scateō, -ēre «ցայտել, ժայթքել» (Նիկ., *skat- «ցատկել, ցայտել, ժայթքել»):

¹⁵ Հմմտ. **ճլճլալ**, որը, սակայն, վերաբերում է ոչ թե հոսելու ձևին, այլ հոսող հեղուկի հանած ձայնին:

Օոր «1. հեղուկի շթածն թույլ հոսք, անընդմեջ բարակ շիթ, 2. հնձվող խոտի երկարորեն փռվող շերտ, լաս(տ), 3. ձայնի անընդմեջ ընթացք»¹⁶ (որից՝ **ծորալ** «բարակ շիթով դանդաղ հոսել՝ թափվել», **ծորել** «խոտը հնձելով փռել», **ծոր տալ** «ձայնը երկարացնելով խոսել»)՝¹⁷ բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 469): Գ. Ջահուկյանը կասկածով ենթադրել է կովկասյան (քարթվելական) փոխառություն (մինչդեռ Հ. Աճառյանը կովկասյան գուգահեռներն է համարել հայերենից փոխառություն) կամ թ/ծ հերթագայությամբ հ.-ե. *(s)ter- «անմաքուր հեղուկ» արմատից (որից՝ նաև *թորել*, *թարախ* բառերը) (ՀՄԲ, 367): Նկատի ունենալով իմաստային կապը **շիթ**, **ցոցոալ**, **ծլծլալ**, **ծթթել**, **կարթել** բառի հետ՝ առաջարկում ենք **ծոր** <*(s)k'hor- < *sk'e'i- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

Սոր «արտավիժում, վիժանք, հոսք (մանրահատիկ նյութերի, այլուրի)» (որից՝ սորալ (սորել) «սահելով թափվել, հոսել (մանրահատիկ նյութը), արտավիժել (այլուրը)», սորել «1. ծորել, հոսել, 2. ծորթփել, սորթփել, խոտը հնձելով փռել»)՝¹⁸ բառը (Մալխ., 4, 243-244) Հ. Աճառյանը համարել է սոր «ծակ, խոռոչ, որջ, բույն» (<*k'ovros- «փոս, խոռոչ» < *k'e'u- ուռչել, կամարածն լինել») արմատի իմաստային զարգացում (ՀԱԲ, 4, 245-246), իսկ Գ. Ջահուկյանը այսպիսի իմաստային զարգացում պարզապես չի քննարկել (ՀՄԲ, 688): Բայց նկատի ունենալով իմաստային և ձևային նմանությունը վերոհիշյալ ծոր բառի հետ՝ կարծում ենք, որ մի կողմից՝ ունենք սոր «հոսք» և սոր «ծակ» համանունություն, մյուս կողմից՝ սոր

¹⁶ Այս արմատին համանուն է **ծոր** «կոծոխուր, բարբարիս (հատապտուղ)» բառը (ՀԱԲ, 2, 468-469):

¹⁷ Հ. Աճառյանը այս **ծոր** արմատի ածանցյալ է համարել նաև **ծործոր** «1. ձոր, խոխոմ, հովիտ, 2. խորջ, ծերպ, 3. նեղ հեղեղատ» կրկնավորը, սակայն կարծում ենք, որ վերջինս ավելի հարմար է կապել **կիրճ**-ի հետ, որ բխեցվում է հ.-ե. *(s)ker- «կտրել, ճեղքել» արմատից (Հ. **Զաքարյան**, *Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն*. - «Լեզուն և գրականությունը միջնադարից հայերի ցեղային համատեքստում», գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016, էջ 87-91):

¹⁸ Հ. Աճառյանը այս ածանցյալների շարքին է դասել նաև առալ «ինքնիրեն հոսելով թափվել (սարի հողը)» գավառական բառը (ՀԱԲ, 4, 245-246):

«հոսք» և ծոր «հոսք, շիթ» բառերի նույնարմատություն՝ *u/δ* հերթագայությամբ: Ինչ վերաբերում է սրանց համանուն սոր «1. ծակ, 2. ձոր», ծոր (ծործոր) «ձոր» բառերին, ապա դրանք պետք է կապել հ.-ե. **(s)kei-* «կտրել, ճեղքել» արմատի հետ՝ «ճեղք, պատվածք > կիրճ, ձոր» իմաստային անցմամբ, ինչպես որ **կիրճ** (տե՛ս վերը), ռուս. *ущелье* «կիրճ» (*цель* «ճեղք»-ից¹⁹), բուլղ. **пролом** «ձոր, կիրճ» (*лом-* «ճեղք, ճաք, կոտրվածք» արմատից (տե՛ս ՎԲԱ, **пролом**)), գերմ. *Kluft* «1. ծերպ, ճեղք, 2. անդունդ, վիհ, կիրճ» (< նախագերմ. **kluftiz* «ճեղքում», որից՝ անգլ. *cleft* «ճեղք, կիրճ» (տե՛ս ՎԲԱ, *Kluft*)) բառերը²⁰: Ճիշտ է, այս համանունների միջև երբեմն իմաստային աղերսներ են նկատվում (օրինակ՝ սորան «1. անդնդախոր կիրճ, 2. լեռնիվայր սահուղի (գերաններ տեղափոխելու համար» (ՀԼԲԲ, Ե, 381)), բայց դա թերևս պետք է համարել բաղադրության հետեվանք: Իսկ **սոր** «արտավիժում, վիժանք, հոսք» բառի համար առաջարկում ենք հ.-ե. **(s)k'or-* (<**sk'ei-* «ցայտել; ցատկել») նախաձևը:

Ճևալ «ծորալ, կաթելու ժամանակ երկարել» (որից՝ ճևել «ձգել-լով երկարացնել», ճևան «ծոր տվող») բառը (ՀԼԲԲ, Գ, 379) ստուգաբանական բառարաններում չկա: Եթե փորձենք իմաստային հիմունքով սա ևս համարել վերոհիշյալ բառերին համարմատ, ապա կարելի է առաջարկել **ճեւ-ալ** <**sk'heu-* <**sk'ei-* «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

¹⁹ Հմտ. նաև լիտվ. *skėlti*, *skėliù*, լատվ. *škel'ēt*, *škelis* «ճեղքել», լատվ. *škēle* «1. կտոր, 2. հագուստի կտրվածք», *škila* «բեկոր, ծղան, ճղոն», լիտվ. *skiltis* «կտրված մաս», *skylė* ж. «ծակ», հ.իսլ. *skilja* «բաժանել, ճեղքել», հուն. *σκάλλω* «կտրում եմ, փորում եմ», հայ. ցելով «ճեղքել, պատռել», իտեթ. *iskallāi-* «կտրել, պոկել», ռուս. *скала* «ժայռ, բերձ», *осколок* «բեկոր», *скóлька* «հատված» (ՎԲՈ, *ущелье*):

²⁰ «Ձոր, կիրճ» նշանակող տարբեր բառեր կարող են ծագած լինել տարբեր բնիմաստներից: Հ. Աճառյանը **ծոր** բառի ստուգաբանության առիթով բերել է «հոսող ջուր (գետ) > ձոր» իմաստային անցման օրինակներ որոշ լեզուներից (արաբ. *vād*, թրք. *dere* «գետ» և «ձոր») (ՀԱԲ, 468-469): Բայց իմաստային անցման այս ուղին ընտրելու դեպքում նույնանում են հ.-ե. համանուն **sk'ei-* «կտրել, ճեղքել» և «ցատկել, ժայթքել» արմատները՝ առաջ բերելով իմաստների խառնաշփոթ և տանելով դեպի գերանորոշություն (ռեյատիվիզմ): Մեր նախընտրած ուղին տվյալ դեպքում այդպիսի բարդությունների և հակասությունների տեղիք չի տալիս:

Օգտագործված գրականություն

Աղաբեկյան Մ., Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Ե., 2017:

Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Ե., 1971:

Չաքարյան Հ., «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.-«Ջահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 65-76:

Չաքարյան Հ., Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), Գյումրի, 2019:

Չաքարյան Հ., *Կարիճ, կարճ, կիրճ* և մի քանի այլ բառերի ստուգաբանություն.- «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում», գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:

Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Ե., 1975:

Մայխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Nikolaev S., Database of Indo-European etymology. - <http://starling-rinet.ru>.

Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 2005 (<http://dnghu.org/indoeuropean.html>).

Zakaryan Hovhannes- Etymology of Several Armenian Words Meaning «Downpour; to Spray; to Trickle». – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: **ցող-ել** «to spray» <*sk'əu-l- <*sk'ei- (*sk'āi-, *sk'əi-) «to jump, to splash out», **ցփնել** «to splash» <*ցուփ-ն-ել <*sk'ō-ph-, **շաղ** «dew» <*skhə-l-, **շլոփայ** «slush» <*շոլ-ոփ-այ <*skho-l-, **շան-ափ** «downpour» <*skhə-r-s-, **ջաղը** «downpour» <*sk'w'hə-l-p-, **կաթ-ել** «to drip» <*(s)kə-t-, **ծլուլ** <*ծուլ-ուլ «snot» <*(s)k'hō-l-, **ծոր-ալ** «to trickle» <*(s)k'hor-, **ուն-ալ** «1. to trickle, 2. to pour in (granular materials)» <*(s)k'or-, **նլ-ալ** «to trickle» <*sk'heu- etc.

Keywords: Armenian, Proto-Indo-European, etymology, root variants, determinative, vowel gradation, s-mobile, affix, semantic universals.

Zakaryan Hovhannes, PhD of Philology, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education.
hovzakaryan@yahoo.com

Закарян Оганес- Этимология некоторых армянских слов, обозначающих «ливень; опрыскивать; сочиться». – В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: **ցող-ել** «опрыскивать» <*sk'əu-l- <*sk'ei- (*sk'āi-, *sk'əi-) «прыгать; выплескиваться», **ցփնել** «разбрызгать» <*ցուփ-ն-ել <*sk'ō-ph-, **շաղ** «роса» <*skhə-l-, **շլոփայ** «слякоть» <*շոլ-ոփ-այ <*skho-l-, **շան-ափ** «ливень» <*skhə-r-s-, **ջաղը** «ливень» <*sk'w'hə-l-p-, **կաթ-ել** «капать» <*(s)kə-t-, **ծլուլ** <*ծուլ-ուլ «сопля» <*(s)k'hō-l-, **ծոր-ալ** «сочиться» <*(s)k'hor-, **ուն-ալ** «1. сочиться, 2. сыпаться» <*(s)k'or-, **նլ-ալ** «сочиться» <*sk'heu- и т. д.

Ключевые слова: армянский язык, праиндоевропейский язык, этимология, корневые варианты, детерминатив, чередование, s-mobile, аффикс, семантические универсалии.

Закарян Оганес, кандидат филологических наук, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".
hovzakaryan@yahoo.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՎԱԾՆԵՐ

Ամիրխանյան Անժելա - <i>Խաղող</i> բառով բաղադրված վայրի բույսերի անվանումներ.....	5
Թորոսյան Հռիփսիմե - <i>Շուն</i> բաղադրիչով դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները արդի հայերենում և պարսկերենում.....	18
Խաչատրյան Գուրգեն - Միջին հայերենի <i>անուն + միադիմի բայածն</i> - <i>անորոշ դերբայ</i> կապակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասությունները.....	28
Խաչատրյան Հասմիկ - Իմաստափոխության իրողություններ Համշենի բարբառում	38
Կատվայան Վիկտոր - Բարբառային հատկանիշների խմբավորման մի փորձ (ըստ տարածական ընդգրկման).....	49
Համբարձումյան Վազգեն - Ստուգաբանություն. հայ. <i>հարկ</i> - < հե. *(H)a/ork/g-t-.....	60
Հմայակյան Հասմիկ -- Հայերեն «կապերտ-կարպետ» բառի ստուգաբանության փորձ.....	70
Հովհաննիսյան Լավրենտի - Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական հնաբանությունները.....	79
Հովհաննիսյան Լավրենտի - <i>Բազայառիճ</i> տեղանվան շուրջ.....	84
Ներսիսյան Վարսիկ - <i>Տնօրենություն</i> և <i>տնօրինություն</i> բառերի գործածությունը հայերենում.....	89
Վարդանյան Արտակ - Միջինհայերենյան իրողություններ ճահուկ-Վայքի միջբարբառում.....	100

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հակոբյան Ֆրիդա - Հայերենի ձևային նկարագրության

խնդիրներ	108
Միքայելյան Տիգրան - Լեզվական իրավիճակը Վրաստանի Մասնեուլիի շրջանի հայաբնակ գյուղերում (Կարմիր գյուղի օրինակով).....	116

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Չարսյան Հովհաննես - «Շառափ, ցողել, ծորալ» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.....	126
--	-----

CONTENTS

ARTICLES

Amirkhanyan Anzhela - The names of wild herbs composed by the word <i>khaghogh</i> (grape).....	5
Torosyan Hripsime - Structural-semantic peculiarities of phraseological units with component <i>dog</i> in Armenian and Persian languages.....	18
Khachatryan Gurgen - Middle Armenian’s Independent Monoclear Sentences Expressed with Connection <i>Noun+Impersonal verb – Infinitive</i>	28
Khachatryan Hasmik - Meaning Change Realities in Hamshen dialect.....	38
Katvalyan Viktor - An attempt to group dialect features (by territorial coverage)	49
Hambardzumyan Vazgen - Etymology: Arm. հարկ- [hark-] “strike, beat; kill” < IE.*(H)a/ork/g-t	60
Hmayakyan Hasmik - An Etymological Attempt of the Armenian Word <i>kapert-karpet</i>	70
Hovhannisyanyan Lavrenti - Archaic Verbs of Kharabakh (Artsakh) Dialect.....	79
Hovhannisyanyan Lavrenti - On Toponym <i>Bagaharij</i>	84
Nersisyan Varsik - Using the words <i>տնօրհնություն</i> and <i>տնօրհնություն</i> in Armenian.....	89
Vardanyan Artak - Realities of the Middle Armenian	

in the Jahuk-Vayk interdialect.....	100
-------------------------------------	-----

REPORTS

Накобыан Фрида - The problems of formal description of the Armenian language.....	108
Микайелян Тигран - The Linguistic Situation in Armenian-Populated villages of Marneuli Municipality of Georgia(On Example of Karmir Gyugh Village)	116

DISCUSSIONS

Zakaryan Hovhannes - Etymology of Several Armenian Words Meaning “Downpour; to Spray; to Trickle”	126
--	-----

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Амирханян Анжела - Названия дикорастущих растений составленных словом <i>виноград</i>	5
Торосян Рипсима - Структурно-семантические особенности фразеологических единиц с компонентом <i>собака</i> в армянском и персидском языках.....	18
Хачатрян Гурген - Независимые односоставные предложения среднеармянского языка, выраженные сочетанием <i>имя+ безличная форма глагола – инфинитив</i>	28
Хачатрян Асмик - Факты изменения смысла слов в мшенском диалекте.	38
Катвалян Виктор - Попытка сгруппирования диалектных признаков (по территориальному охвату)	49
Амбарцумян Вазген - Этимология. арм. <i>հարկ</i> - [hark-] “бить; убить” < i.-e. *(H)a/ork/g-t.....	60
Амаякян Асмик - Попытка этимологии слова <i>kapert-karpet</i> в армянском языке.....	70
Оганесян Лаврентий - Архаичные глагольные формы Карабахского (Арцахского) диалекта.....	79
Оганесян Лаврентий - О топониме <i>Багаарич</i>	84

Нерсисян Варсик - Употребление слов <i>լիօրհիւրընիւ</i> и <i>լիօրհիւրընիւ</i> в армянском языке.....	89
Варданян Артак - Реалии среднеармянского языка в джаук-вайкском междиалекте.....	100

СООБЩЕНИЯ

Акопян Фрида - Проблемы формального описания армянского языка.....	108
Микаелян Тигран – Языковая ситуация в армянских селах Марнеульского муниципалитета Грузии (на примере Красного села)	116

ОБСУЖДЕНИЯ

Закарян Оганес - Этимология некоторых армянских слов, обозначающих "ливень; опрыскивать; сочиться".....	126
--	-----